ԳՈՌԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941–1945)

ԵՐԵՎԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ИСТОРИИ

ГОАР ХАЧАТРЯН

ПРОМЫШЛЕННОСТЬ АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941-1945)

А 40530

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
ЕРЕВАН 2005

338.45 (479.25) + 947.925 V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945)

II
905'30

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 338.45(479.25) + 941(479.25)
ԳՄԴ 65.9 (2Հ)30 + 63.3 (2Հ)
Խ 282

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Կ.Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խ 282 **Խաչատրյան Գ.** Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Եր., «Գիտություն» հրատ., 2005, 118 էջ:

Ուսումնասիրության մեջ քննության են առնվում նախապատերազմյան տարիների Հայաստանի արդյունաբերության զարգացման հիմնական միտումները, լուսաբանվում են պատերազմի պայմաններին համապատասխան արդյունաբերության վերակառուցման և հետագա զարգացման, բանվորական կադրերի պատրաստման ու մատակարարման հարցերը:

Խ $\frac{2101000000}{703(02)-2005}$ 2005 ԳՄԴ 65.9 (2Հ)30 + 63.3 (2Հ)

ISBN 5 – 8080 – 0627 – 9
© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2005

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայրենական մեծ պատերազմի պատմությունը հայ ժողովրդի բազմադարյա պատմության անքակտելի մասն է: Անկախ Խորհրդային Միության գրեթե յոթ տասնամյակ անցած պատմական ուղու իրարամերժ գնահատականներից, Հայրենական մեծ պատերազմի պատմությունը մնում է հայ ժողովրդի հերոսական, միաժամանակ ողբերգական պատմության էջերից մեկը:

Հայրենական մեծ պատերազմի պատմության հետազոտությունն անցել է զարգացման տարբեր փուլեր, որոնցից յուրաքանչյուրը կրել է իր ժամանակաշրջանի ազդեցության կնիքը: Սկզբում, այսինքն՝ պատերազմի տարիներին և հետագա տասնամյակում, նրա պատմությունը խեղաթյուրվել ու կեղծվել է: Հետազոտողներն աչքաթող են արել պատերազմի սկզբում խորհրդային բանակի ծանր կորուստները, բարձր հրամանատարության թույլ տված սխալներն ու վրիպումները, թիկունքի աշխատանքների ծախողումը և այլն: Պատերազմի պատմության ուսումնասիրության այս փուլին բնորոշը ջատագովությունն ու փառաբանությունն էր: Դա վերաբերում էր վարչաբյուրոկրատական ապարատին, խորհրդային զորքերի մղած մարտերին, թիկունքի աշխատավորների ցուցաբերած սխրանքին: Այս ամենի մեջ առանձնանում էր Ստալինի անձի փառաբանությունը: Նրան էր վերագրվում պատերազմում հաղթելու իրողությունը: Հայրենական մեծ պատերազմին նվիրված Ի.Վ.Ստալինի գիրքը[1], լեցուն լինելով իրարամերժ ու հակասական մտքերով, մեթոդաբանական հիմք էր դարձել պատերազմի պատմության ուսումնասիրության համար:

---

[1] *Ի.Վ.Ստալին*, Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմի մասին, Ե.,1950:Վկայակոչվող գրքերի վերնագրերը միայն առաջին անգամ հղվելիս են լրիվ նշվում:

Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության երկրորդ փուլում, 50-ական թթ. կեսերից մինչև 60-ական թթ. կեսերը, ընդլայնվեցին հետազոտությունների թեմաները: Պատմաբաններն առաջին անգամ փորձեցին որոշ հարցեր լուսաբանել անաչառ ու անեղծնակալ: Նրանք խորամուխ եղան կարմիր բանակի կրած անհաջողությունների պատճառների, հրամանատարական կազմի նկատմամբ գործադրված բռնությունների և այլ հարցերի մեջ: Այս ժամանակաշրջանում հրատարակվեց Հայրենական մեծ պատերազմի պատմության վեցհատորյակը[2], որը կարևոր նվաճում էր պատերազմի պատմության ուսումնասիրության գործում:

Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության հաջորդ փուլը ընդգրկում է 60-ական թթ. կեսերից մինչև 80-ական թթ. կեսերը: Այս ժամանակաշրջանում պատերազմի մասին ճշմարտացի խոսք ասելն աստիճանաբար դարձավ ավելի դժվար: Այս փուլը նախորդի համեմատությամբ ոչ միայն առաջընթաց չէր, այլև փաստորեն նահանջ էր: Սկսեցին թմբկահարել և ուռճացնել այն մարդկանց դերը, որոնք պատերազմի տարիներին համեստ ծառայություններ էին մատուցել: Այս տարիներին ևս շարունակվեց ընդհանրացնող աշխատանքների հրատարակությունը: Հիշարժան են «Հայրենական մեծ պատերազմի պատմության» հատորյակը և «Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության» տասներկու հատորները, որոնք լեցուն են իրենց ժամանակաշրջանին բնորոշ դոգմաներով, սխեմատիզմով ու կաղապարներով[3]:

80-ական թթ. կեսերից պատերազմի պատմության հետազոտությունը թևակոխեց զարգացման նոր փուլ, որը հատկապես հայտանշվեց որակական փոփոխություններով: Հրատարակվեցին արխիվային նոր նյութեր, հրապարակ եկան նոր ուսումնասիրություններ, որոնք փաստորեն բեկում մտցրին

---

[2] История Великой Отечественной войны Советского Союза 1941-1945. т. I-VI. М., 1960-1965.

[3] Великая Отечественная война Советского Союза 1941-1945, краткая история. М. 1965. История Второй мировой войны 1939-1945. М., 1973-1982.

պատերազմի պատմության մասին շատերի պատկերացումների մեջ: Մասնագետները ձերբազատվեցին արմատացած հին առասպելներից, քարացած դոգմաներից: Ամենաուշագրավը Խորհրդային Միության և Գերմանիայի դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուների հրատարակությունն էր՝ նրանց միջև կնքված պայմանագրերին կցված գաղտնի հավելվածներով[4]: Դրանցով փաստորեն ԽՍՀՄ-ում բացահայտվեցին ֆաշիզմի և ստալինիզմի էությունները: Այս ուղղությամբ կարևոր քայլ էր նաև Ի. Ֆլյաշհաուերի «Հիտլեր-Ստալին դաշինքը և գերմանական դիվանագիտության նախաձեռնությունը 1938-1939» գրքի ռուսերեն թարգմանությունը[5]: 1998-1999թթ. լույս տեսավ Հայրենական մեծ պատերազմի ակնարկների քառահատորյակը[6], որը տվյալ հիմնահարցին նվիրված երրորդ բազմահատորյակն է: Հիշյալ քառահատորյակում պատերազմի պատմության հարցերը լուսաբանվում են առավել ամբողջական և իրական: Հեղինակային կազմը օգտագործել է նախկինում անմատչելի արխիվային տվյալներ, պաշտպանության պետական կոմիտեի, գերագույն գլխավոր հրամանատարի ռազմակայանի և գլխավոր շտաբի գաղտնազերծված նյութերն ու փաստաթղթերը:

Հայրենական մեծ պատերազմի հայ պատմագրությունը ևս անցել է խորհրդային պատմագրության անցած փուլերով: Հետևաբար նրան ևս այս կամ այն չափով բնորոշ են այն գծերը, որոնք ունեցել է խորհրդային պատմագրությունը:

Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրությանը հայ պատմաբանները փաստորեն ձեռնամուխ եղան դեռևս պատերազմի տարիներից սկսած: 1942թ. ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի նախագահ, ակադեմիկոս Հ.Ա.Օր-

---

[4] СССР-Германия. Документы и материалы о советско-германских отношениях. вып.1, Вильнюс 1989, вып.2, Вильнюс 1989.

[5] Ингеборг Фляйшхауэр. Пакт Гитлер-Сталин и инициатива германской дипломатии 1938-1939. М., 1991.

[6] Великая Отечественная война. 1941-1945. Книга 1. Суровые испитания, М., 1998. Книга 2. Перелом, М., книга 3, Освобождение, народ и война, М. 1999.

բելու նախաձեռնությամբ պատմության ինստիտուտում ստեղծվեց Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ, որը ԽՍՀՄ-ում առաջիններից մեկն էր, որ ձեռնամուխ եղավ պատերազմի պատմության ուսումնասիրությանը: Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի հիմնական խնդիրը դարձավ հայ ռազմիկների վերաբերյալ փաստաթղթերի ու նյութերի հավաքումն ու մշակումը: Հենց այդ ժամանակաշրջանում հրատարակվեցին ռազմաճակատում հայ ժողովրդի զավակների կատարած սխրագործությունների մասին պատմող առանձին գրքույկներ[7], հոդվածներ ու այլ նյութեր: Հետագայում երևան եկան ինչպես պատերազմի պատմության տարբեր խնդիրներին, այնպես էլ առանձին հարցերին նվիրված մի շարք ուսումնասիրություններ:

Հայ պատմաբանները արխիվային փաստական հարուստ նյութերի հիման վրա շարադրեցին տարբեր ռազմաճակատներին, պարտիզանական կռիվներին հայ ռազմիկների մասնակցության պատմությունը, ներկայացրին հայկական զորամիավորումների անցած մարտական ուղին, ֆաշիզմի ջախջախման գործում սփյուռքահայերի մեծ ներդրումը: Մի շարք ուսումնասիրություններում լուսաբանվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության կուսակցական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունների և տեղական խորհուրդների կատարած դերը ռազմաճակատում և թիկունքում:

Հայրենական մեծ պատերազմի հայազգի հերոսներին են նվիրված Մ.Անդրեասյանի, Ե.Խալեյանի, Ք.Գրիգորյանի, Ա.Մալխասյանի գրքերը[8]: ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցների ջանքերով հրատարակվել է Խորհրդային Միության

---

[7] *Ն.Զարյան,* Խորհրդային Միության հերոս կապիտան Ն.Գ.Ստեփանյան, Ե., 1943, *Աս.Ասատրյան,* Ավագ լեյտենանտ Պատրիկ Գազազյան, Ե., 1943: *Ա.Ղանալանյան,* Հայ քաջորդիներ, Ե., 1943, *Ի.Իսակով,* Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում, Ե., 1946 և այլն:

[8] *Մ.Անդրեասյան,* Վեց օր, Ե., 1947, *Ե.Խալեյան,* Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյան (կենսագրական ակնարկ և փաստաթղթեր), Ե., 1950, *Ք.Գրիգորյան,* Խորհրդային Միության հերոս Զահան Կարախանյան, Ե., 1954, *Ա.Մալխասյան,* Կոմերիտական մարտկոցը, Ե., 1957 և այլն:

հայազգի հերոսներին նվիրված գիրքը, որը վերահրատարակվել և թարգմանվել է նաև ռուսերեն[9]: Ուսումնասիրություններ են նվիրվել նաև Խորհրդային Միության հայազգի նշանավոր զորավարներին[10]: Մասնագետներն անդրադարձել են նաև տարբեր ռազմաճակատներում հայերի մասնակցությանը[11], հայկական դիվիզիաների անցած մարտական ուղուն[12], հայ պարտիզանների գործողություններին[13], ֆաշիզմի ջախջախման գործում սփյուռքահայության ավանդին[14] և այլ հարցերի:

---

[9] «Գիրք հերոսների մասին», Ե., 1964, Книга о героях, Е., 1985.

[10] *Մ.Մարտիկյան*, Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյան, Ե., 1946, *Վ.Վարդանյան*, Գվարդիայի գեներալ-մայոր, Սերգեյ Իսահակի Կարապետյան, Ե., 1956, *Ե.Խալեյան*, Ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյան (Ս.Խուդյակով), ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, թ.2: *Ա.Մալխասյան*, Խորհրդային բանակի հայազգի գործիչները, Երևան, 1965 և այլն:

[11] *Ք.Գրիգորյան*, Խորհրդային Միության հայ հերոսները Կովկասի պաշտպանության համար մղված մարտերում, Ե, 1959: *Ա.Խարմանդարյան*, Հայ ժողովրդի մասնակցությունը Ուկրաինայի ազատագրմանը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, թ.4: *Ե.Խալեյան*, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Ուկրաինայի համար մղված մարտերին 1941-1944 թթ. (Исторические связи и дружба украинского и армянского народов, Ереван, 1961), *Մ.Սահակյան*, Խորհրդային Մերձբալթիկայի համար մղված մարտերում (1941-1945), Ե., 1981: *Գ.Գրիգորյան*, Դրվագներ Ստալինգրադյան հերոսամարտերից, Ե., 1979: *Կ.Հարությունյան*, Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944-1945), Ե., 1983 և այլն:

[12] *Ս.Նալբանդյան*, Հայ թամանցիները, Ե., 1947, նույնի՝ Թամանցիները, Ե., 1961: *Ղ.Դալլաքյան*, Մարտական 89-ը, Ե., 1966: *Ա.Մ.Հակոբյան*, Հայկական Թամանյան դիվիզիայի մարտական ուղին, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, թ.2: *Ս.Սարգսյան*, 408-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» 1965, թ.7: *Կ.Հարությունյան*, 51-րդ դիվիզիայի մարտական ուղին, Ե., 1980, նույնի՝ Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., Ե., 2002 և այլն:

[13] *Ե.Խալեյան*, Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1941-1944), Ե., 1981: Նույնի՝ Թշնամու թիկունքում, Ե., 1990: *Վ.Ղազախեցյան*, Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, Ե., 1965, Նույնի՝ Հայ պարտիզանները, Ե., 2004:

[14] *Տ.Դրամբյան*, Ֆրանսահայ կոմունիստները դիմադրության տարիներին 1941-1944, Ե., 1967 և այլն:

Պատերազմի պատմության ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունի Ա.Մնացականյանը: Դեռևս 1947թ. նրա հեղինակությամբ լույս տեսավ «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները» գիրքը[15], որի մեջ ամփոփված են ռազմաճակատային թերթերից հայ մարտիկների մասին պատմող ընտրովի քաղվածքներ: Պատերազմի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նույն հեղինակի «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում» գիրքը[16]: Այս գրքի արժանիքն այն է, որ հայ պատմագրության մեջ առաջին անգամ, հենվելով արխիվային և ռազմաճակատային մամուլի տվյալների վրա, հեղինակն ընդհանրացված պատկերացում է տալիս Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության մասին: Առանց վարանելու կարելի է ասել, որ բոլոր այն հարցերը, որոնք բարձրացվել են հեղինակի կողմից, գիտական կարևորություն ունեն: Նրանք առնչվում են թե՛ ռազմաճակատին և թե՛ թիկունքին: Պատահական չէ, որ այդ հարցերից յուրաքանչյուրը հետագայում դարձավ հայ պատմաբանների ուսումնասիրության թեմա: Ինչպես յուրաքանչյուր հետազոտություն, իսկ Ա.Մնացականյանինը առավել ևս, կրում է իր ժամանակի կնիքը: Այն լեցուն է ստալինյան ժամանակաշրջանին բնորոշ դոգմաներով ու սխեմաներով: 1975 թ. հրատարակվեց նույն հեղինակի «Միասնական շարքերում» գիրքը, որը փաստորեն արդեն հիշատակված ուսումնասիրության վերանայված, բարեփոխված ու լրացված հրատարակությունն էր[17]:

Հաջորդ ընդհանրացնող աշխատությունը, որը նվիրված է պատերազմի պատմությանը, «Խորհրդային Հայաստանի պատմության ուրվագծերի» երրորդ պրակն է[18]: Այս գրքում ևս ուսումնասիրված է ինչպես ռազմաճակատի, այնպես էլ թիկունքի պատմությունը: Չնայած հիշյալ գիրքը հրատարակ-

---

[15] *Ա.Ն.Մնացականյան*, Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները, Ե., 1947:

[16] Նույնի Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Ե., 1954:

[17] Նույնի Միասնական շարքերում, Ե., 1975:

[18] *Ծ.Աղայան, Ե.Խալեյան,* Ուրվագծեր Խորհրդային Հայաստանի պատմության, պրակ երրորդ, Ե., 1960:

վել է 1960թ., սակայն նրանում զգացվում է անհատի պաշտամունքի կնիքը: Այդուհանդերձ չի կարելի անտեսել այն, որ «Ուրվագծեր»-ում շրջանառության մեջ են դրվել արխիվային զգալի նոր նյութեր:

Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության բնագավառում խորհրդահայ պատմագրությունը կարևոր նվաճում էր դիտում հայ ժողովրդի պատմության ակադեմիական ութիատորյակի վերջին հատորի ստեղծումը[19]: Դրանով խորհրդահայ պատմագրության ձեռքբերումների հիման վրա ընդհանրացվեց հայ ժողովրդի զավակների մասնակցությունը ռազմաճակատի մարտական գործողություններին և թիկունքի աշխատանքներին: Չնայած դրան, ռազմաճակատի և թիկունքի պատմության այն հատվածի շարադրանքում, որի հեղինակը Ա.Մնացականյանն է, նորությունը քիչ է: Այն պարզապես համառոտված է նույն հեղինակի արդեն վերը հիշատակված գրքից: Հատորում տեղ չի գտել օպերատիվ գործողությունների վերլուծությունը: Միշտ շեշտվում են հաջողություններն ու հաղթանակները, կարծես սխալներ թույլ չեն տրվել, կամ դժվարություններ ու անհաջողություններ ընդհանրապես չեն եղել: Այլ կերպ ասած՝ պատերազմի պատմությունն այս հատորում ևս գունազարդվել է: Վերջին տարիներին Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հարցերը համակողմանի ու արխիվային հարուստ տվյալների հիման վրա ուսումնասիրել է Կ.Հարությունյանը[20]:

Հայ պատմաբաններն իրենց հիմնական ուշադրությունը բևեռել են ռազմաճակատին, մինչդեռ թիկունքի պատմությունն առավել քիչ է ուսումնասիրված: Թիկունքի պատմության տարբեր հարցերին՝ գյուղացիությանը և մշակույթին, անդրադարձել են Ք.Գրիգորյանը և Կ.Խուդավերդյանը[21]:

---

[19] «Հայ ժողովրդի պատմություն», հ.8, Ե., 1970:

[20] *К.Арутюнян*, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Е., 2004.

[21] *Ք.Գրիգորյան*, Խորհրդային Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), Ե., 1979: *К.Худавердян*, Армянская советская культура в годы Великой Отечественной войны. Ереван, 1985.

Պատերազմի տարիների Հայաստանի արդյունաբերության ու բանվոր դասակարգին նվիրված հատուկ ուսումնասիրություն մեզանում մինչև այժմ չի ստեղծվել: Առանձին հեղինակներ, ովքեր զբաղվել են Հայաստանի տնտեսության կամ նրա առանձին ճյուղերի, քաղաքների, արդյունաբերական ձեռնարկությունների, բանվոր դասակարգի, կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների պատմության հարցերով, մասնակիորեն անդրադարձել են պատերազմի պատմությանը այնքանով, որքանով դա աղերսվել է իրենց թեմաներին[22]:

Սույն հիմնահարցի հետազոտությանը նպաստել են տվյալ ժամանակաշրջանին վերաբերող խորհրդային և հետխորհրդային պատմաբանների և տնտեսագետների աշխատությունները[23]:

Այսպիսով, համառոտ պատմագրական ակնարկը ցույց է տալիս, որ թեև Հայրենական մեծ պատերազմի տարիների Հայաստանի արդյունաբերության և բանվոր դասակարգի պատմության առանձին հարցեր քննարկվել են հետազոտողների կողմից, սակայն հիմնախնդիրն ամբողջապես չի

---

[22] *Փ.Ենգոյան*, Հայաստանը ինդուստրացման ուղիով (1926-1958), Ե., 1967: *Ա.Գրիգորյանց*, Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Ե., 1960, *Հ.Հարությունյան*, Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, Ե., 1987: *Հ.Թումանյան*, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, Ե., 1962: *Հ.Ազիզբեկյան*, Խորհրդային Հայաստանի էլեկտրաֆիկացիայի պատմությունից, Ե., 1966: *Վ.Ավագյան*, Հայաստանի Կոմունիստական կուսակցության պայքարը քիմիական արդյունաբերության ստեղծման ու զարգացման համար (1920-1965թթ.), Ե., 1967: *Ա.Սիմոնյան*, Երևան, 1920-1967, Ե., 1968, *Կ.Կոզմոյան*, Լենինական, Ե., 1956: Նույնի՝ Կիրովական, Ե., 1960: Նույնի՝ Ալավերդի, Ե., 1966: *Կ.Միրզախանյան*, Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Ե., 1956: *Լ.Սարտիրոսյան*, Խորհրդային Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Ե., 1968, *Ռ.Мурадян*, Компартия Армении в годы Великой Отечественной войны, Е., 1984 և այլն:

[23] *А.В.Митрофанова*, Рабочий класс СССР в годы Великой отечественной войны, М., 1971, *Г.С.Кравченко*, Экономика СССР в годы Великой отечественной войны, М , 1970, *М.М.Кучеренко*, Молодое поколение рабочего класса СССР, М., 1979. *Я.Е.Чадаев*, Экономика СССР в годы Великой отечественной войны (1941-1945), М., 1965 և այլն:

լուսաբանվել: Սույն ուսումնասիրությամբ նման մի փորձ է կատարվում: Բացի դրանից, ներկայումս, երբ պատմագրությունը փորձում է ձերբազատվել անցյալի գունազարդումից, ձեռնամուխ է եղել շատ երևույթների ու արժեքների վերագնահատմանը, օրինական պահանջ է զգացվում նորովի լուսաբանել պատերազմի պատմության շատ հարցեր: Այդ հանգամանքը հնարավորության սահմաններում նույնպես հաշվի է առնված:

Ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուր են ծառայել վիճակագրական ժողովածուները, որոնցում ամփոփված են տեղեկություններ[24] հանրապետության, ԽՍՀՄ-ի հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառների վերաբերյալ: Դրանք առավել հանգամանորեն լուսաբանում են նախապատերազմյան և ետպատերազմյան արդյունքները, մինչդեռ պատերազմի տարիներին նվիրված վիճակագրական ժողովածուներ չեն հրատարակվել:

Առավել կարևորը արխիվային նյութերն են, որոնք ամփոփվել են Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվում, ԳԱԱ պատմության ինստիտուտի՝ Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետում:

Իբրև սկզբնաղբյուրներ, արխիվային տեղեկությունները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումների, ՀԿԿ ԿԿ քաղկոմների ու շրջկոմների բյուրոների նիստերի, կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովների արձանագրություններ են, ժողկոմատների ու գերատեսչությունների, քաղկոմ-շրջկոմների, արտադրական ձեռնարկությունների հաշվետվություններ, միութենական կուսակցական, ռազմական և տնտեսական ղեկավար օրգաններին, միութենական հանրապետությունների ղեկավարներին ու ռազմաճակատների հրամանատարներին ուղղված և նրանցից ստացված բազմաթիվ նամակներ ու գրություններ, այլ

---

[24] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940). Статистический сборник. Е., 1940. Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник, Е., 1957. Народное хозяйство Армянской ССР в 1963г. (Статистический сборник), Е, 1964 и др..

նյութեր: Հիշյալ նյութերի մեջ առանձնակի կարևորություն են ստանում հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական գործունեությունը լուսաբանող տվյալները: Դրանք վերաբերում են արտադրության պլանավորմանն ու կառավարմանը, պլանային առաջադրանքների կատարմանը, նոր արտադրատեսակներ թողարկելուն, եղած կարողություններն ընդարձակելուն, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելուն և այլ հարցերի: Պակաս կարևոր չեն նաև բանվորական կադրերի պատրաստման, նրանց որակավորման բարձրացման, արտադրական գործունեության, բանվորական շարքերի համալրման, նրանց վարձատրության, սպասարկման և մատակարարման վերաբերյալ տեղեկությունները:

Փաստական հարուստ նյութ է ամփոփված պատերազմի պատմությանը նվիրված ժողովածուում[25]: Այն բաղկացած է հինգ բաժնից, որոնք ներկայացնում են ռազմաճակատին ու թիկունքին, ինչպես նաև ֆաշիզմի դեմ սփյուռքահայության պայքարին վերաբերող նյութերը: Ընդհանուր առմամբ ժողովածուում տեղ են գտել 547 փաստաթղթեր և նյութեր, որոնց կցված են անհրաժեշտ ծանոթագրություններ:

Պատերազմի պատմությանը նվիրված սույն ժողովածուն զերծ չէ նաև թերություններից: Օրինակ նյութերն ու փաստաթղթերը նրա մեջ ընդգրկվել են ընտրությամբ: Նրանցից մի քանիսը հրատարակվել են կրճատումներով, մի բան, որ սույն ժողովածուն դարձնում է միակողմանի և ոչ ամբողջական:

Արտադրատնտեսական մի շարք հարցերի լուսաբանության տեսակետից կարևոր են ԽՄԿԿ և ԽՍՀՄ կառավարության տնտեսական հարցերին վերաբերող որոշումների ժողովածուները և ԽՄԿԿ ու ՀԿԿ համագումարների ու պլենումների նյութերը[26]:

---

[25] Советская Армения в годы Великой Отечественной войны. Сборник документов и материалов. Е., 1975.

[26] Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам. Т.2, М.1957. Решения партии и правительства по хозяйственным вопросам Т.3., М., 1968 *Գ.Հարությունյան*, ՀԿ(բ)Կ ԿԿ հաշվետվությունը Հայաստանի Կ(բ)Պ 13-րդ համագումարում, Ե., 1940 և այլն:

Մեզ հետաքրքրող հարցերի առնչությամբ ծավալուն նյութ է ամփոփված հանրապետական կենտրոնական, տեղական և արդյունաբերական ձեռնարկությունների մամուլի օրգաններում:

Աչքաթող չպետք է անել մի շատ կարևոր հարց՝ սկզբնաղբյուրների հավաստիության հարցը: Վերջին տարիներին մասնագետներն ավելի հաճախ են անդրադառնում խորհրդային երկրի տնտեսության մեջ տեղ գտած հավելագրումներին, պլանների թերակատարումներին, պլանների ոչ իրական լինելուն, ընդհանրապես, տնտեսագետների խոսքով ասած, տնտեսական տեղեկատվության որակի անկմանը և այլ հարցերի:

Եթե բացառենք էլեկտրաէներգիայի, մետալուրգիայի և արդյունաբերական շինարարության բնագավառները, ապա արդյունաբերության մի շարք ճյուղերում առկա են հավելագրումները կամ «գների խաղը»: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բեռնափոխադրումների իսկական ծավալը համապատասխանում է հաշվետվություններում ցույց տրվածի հազիվ 20-30 %-ին: Այս բնագավառում հավելագրումները շուրջ 50 տարվա վաղեմություն ունեն[27]:

Արդյունաբերության զարգացման տեմպերը շատ երկրներում ստուգվում են վերջին տարվա արտադրանքի արդյունքների, այսինքն՝ իրապես գոյություն ունեցող արդյունքների տվյալները համեմատելով նախորդ տարվա նմանատիպ տվյալների հետ: Մի քանի տասնյակ այսպիսի արտադրատեսակների համեմատությունը բավական ստույգ ցույց է տալիս արդյունաբերության զարգացման ընդհանուր տեմպերը: Ստացված արդյունքը կոչվում է արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական կարողություն կամ ինդեքս: Այսպիսով, ստույգ տվյալներ կարող են ստացվել միայն ֆիզիկական ծավալների ինդեքսները հաշվելով, այլ ոչ թե մեծածախ գների հաշվումով, ինչպես որ արվում էր Խորհրդային Միությունում, և որոնք, ինչպես տեսանք, չափազանց առաձգական էին[28]:

---

[27] *В. Селюнин, Г. Ханин,* Луковая цифра "Новый мир", 1987, №2, с. 181.

[25] В. Селюнин, Г. Ханин. Луковая цифра, с. 188.

Գյուղատնտեսության մեջ բնական ցուցանիշները կարող էին ստույգ չլինել, որովհետև, օրինակ, ցորենի բերքի ծավալը հաշվվում էր պատահականորեն. 1մ²-ից ստացված արդյունքը բազմապատկվում էր ամբողջ դաշտի մակերեսով, և ստացվում էր «կենսաբանական բերքի» արդյունքը:

Արդյունաբերության մեջ նույնպես հաճախ բնական ցուցանիշներով հաշվետվությունները ստույգ չէին: Արտադրանքի մեջ հաշվվում էին խոտանն ու չհամալրված արտադրանքը: Այս դեպքում արտադրանքի աճը կարող էր չափազանց ցածր լինել[29]:

Ընդհանրապես տնտեսությունը նման է կենդանի օրգանիզմի, որի օրգանները միմյանց հետ կապված են փոխադարձաբար: Եթե դրանցից որևէ մեկը վատ է գործում կամ շարքից դուրս է գալիս, ապա դա անդրադառնում է ողջ օրգանիզմի, մեր օրինակում ողջ տնտեսության վրա: Եթե, ասենք, տեղեկատու գրականության մեջ ցույց է տրված, թե մեքենաշինության արտադրանքը ավելացել է մի քանի անգամ, բայց պատրաստի մետաղինը՝ հազիվ կրկնակի, ապա պարզ է, որ այս տվյալները շինծու են, որովհետև առանց հումքի համապատասխան չափի ավելացման արտադրանքի ծավալը չէր կարող ավելանալ: Օրինակները կարելի է շարունակել, սակայն բերվածներն էլ բավական պարզորոշ ցույց են տալիս, թե ինչ մեթոդներով են կազմվել խորհրդային տնտեսության ցուցանիշները ներկայացնող տեղեկատուները, ինչպես են կատարվել հաշվարկները, որոնք այսօր վերանայման ու վերահրատարակության կարիք ունեն:

Սույն ուսումնասիրությամբ մեր նպատակն է հետազոտել Հայրենական մեծ պատերազմի տարիների Հայաստանի արդյունաբերության և բանվոր դասակարգի պատմությունը, պարզաբանել ինչպես նրանց զարգացման օրինաչափությունները, այնպես էլ՝ առանձնահատկությունները: Սրանց համապատասխան՝ հեղինակն իր առաջ դրել է հետևյալ խնդիրները՝ վերլուծել նախապատերազմյան տարիների Հայաստանի

---

[29] Նույն տեղում, էջ 189:

արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները: Բացահայտել վարչահրամայական նոր մեթոդների էությունը և ցույց տալ արդյունաբերության մեջ դրանց ունեցած հետևանքները: Լուսաբանել Հանրապետության արդյունաբերությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու և հետագա զարգացման հետ առնչվող հարցերը: Ցույց տալ արդյունաբերության մեջ աշխատողների արտադրական գործունեությունը, բանվորական կադրերի պատրաստումը, որակավորման բարձրացումը և նրանց շարքերի համալրման աղբյուրները: Խորամուխ լինել բանվորական կադրերի մատակարարման հարցերի մեջ:

A 90530

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

ա) Հանրապետության արդյունաբերության զարգացման հիմնական գծերը

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անցած երկու տասնամյակները բավական եղան, որպեսզի ԽՍՀՄ-ի զարգացման արդյունքներն ամփոփելիս կառավարող վարչաբյուրոկրատական ապարատն արձանագրեր հիմնականում սոցիալիզմի կառուցման փաստը:

Ի՞նչ կռվաններ էին հիշատակվում սոցիալիզմի կառուցման համար: Ամենից առաջ նշվում էին արտադրության սոցիալիստական եղանակի հաղթանակը կապիտալիստականի նկատմամբ և շահագործող դասակարգերի վերացումը: ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարի բանաձևը ամփոփում էր ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի հիմնական արդյունքները: ԽՍՀՄ-ը դրանից հետո թևակոխում էր զարգացման նոր շրջան՝ անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը: Ժողովրդական տնտեսության զարգացումը ընթանալու էր նոր երրորդ հնգամյա պլանի համաձայն, որը փաստորեն շարունակելու էր նախորդ հնգամյակների ռազմավարական գիծը՝ շեշտը դնելով ծանր արդյունաբերության զարգացման վրա: Նշված ժամանակաշրջանում ծանր արդյունաբերության զարգացումը նախատեսվում էր նաև Հայաստանում:

Երրորդ հնգամյակի երեք և կես տարվա արդյունքները ցույց էին տալիս, որ այդ տարիներին Հայաստանին բնորոշ էր զարգացած բազմաճյուղ արդյունաբերությունը: Այդ ժամանակամիջոցում հանրապետության ժողովրդական տնտեսու-

թյան մեջ կատարված ներդրումները գերազանցեցին երկրորդ հնգամյակի ամբողջ ներդրումներին (160 միլիոն ռուբլի՝ 159 միլիոնի դիմաց):

Աճեցին արդյունաբերության ընդգրկման շրջանակները: Արդյունաբերության համախառն արտադրանքն աճեց 68 %-ով[30]: 1940թ. արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմեց 77,7 %:

1940թ. Հայաստանի արդյունաբերության արտադրանքը 1928թ. համեմատությամբ աճել էր 8,7 անգամ, այդ թվում արտադրության միջոցներինը՝ 13,7, իսկ սպառման առարկաներինը՝ 6,3 անգամ[31]:

Համախառն արտադրանքի աճի բարձր տեմպերով աչքի էին ընկնում էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունն ու մետաղամշակությունը, շինանյութերի արտադրությունը, որոնք 1913թ. համեմատությամբ համապատասխանաբար աճեցին 79, 15,4, 14,9 անգամ: Այս նույն ժամանակամիջոցում հանրապետության խոշոր արդյունաբերության արտադրանքը 1913թ. մակարդակը գերազանցեց 23 անգամ[32]: Օգտագործելով հումքային առկա պաշարներն ու աշխատանքային աղբյուրները, հանրապետության արդյունաբերությունը շարունակում էր մասնագիտանալ պղնձաձուլության, քիմիական, մեքենաշինության, շինանյութերի, տեքստիլ, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքի նոր տեսակների արտադրության բնագավառներում: Այժմ անդրադառնանք արդյունաբերության առանձին ճյուղերին:

Հանրապետությունում քիմիական արդյունաբերությունը, արդյունաբերության մյուս ճյուղերի համեմատությամբ աչքի էր ընկնում իր զարգացման բարձր տեմպերով: Նրա համախառն արտադրանքի տեսակարար կշիռը 1940թ. կազմում էր ողջ արդյունաբերական արտադրանքի 19,8%-ը[33]:

---

[30] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.22.

[31] Նույն տեղում, էջ 16: Народное хозяйство Армянской ССР в 1963 году, с.31.

[32] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.22.

[33] «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», Ե., 1960, էջ 138:

Քիմիական արդյունաբերությունը թողարկում էր կալցիումի կարբիդ, պղնձարջասպ: Երրորդ հնգամյակում սրանց ավելացան նոր արտադրատեսակներ երկաթի սիլիցիում, ցիանամիդ կալցիում, սինթետիկ կաուչուկ և այլն:

Հանրապետության քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների մեջ իրենց նշանակությամբ առանձնանում էին Երևանի Ս.Մ.Կիրովի անվան և Կիրովականի (Վանաձոր) Ալ.Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատները: Կիրովի անվան քիմկոմբինատը 1940թ. ԽՍՀՄ-ում առաջին անգամ թողարկեց սինթետիկ կաուչուկի նոր տեսակ, որի դերը ռազմականացման ուղին բռնած երկրի տնտեսության մեջ դժվար է գերագնահատել:

Տնտեսապես արդարացված չէր Հայաստանում քիմիական արդյունաբերության շեշտակի զարգացումը, որը հանրապետության կենսոլորտի համար ծանր հետևանքներ ունեցավ: Իրավացի չեն նաև այն պնդումները, որոնց համաձայն քիմիայի զարգացումը խարսխված էր տեղական հումքային հարուստ պաշարների և էժան էներգետիկ աղբյուրների վրա: Բանն այն էր, որ Հայաստանի քիմիական արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշռի մեջ զգալի մաս էր կազմում կալցիումի կարբիդը: Հանրապետությունը Միության մեջ այդ արտադրանքի հիմնական արտադրողն էր: Ճիշտ է, կալցիումի կարբիդ ստանալու համար իբրև հումք էր ծառայում կրաքարը, որով հանրապետությունն, իրոք, հարուստ էր, բայց արտադրանքի այդ տեսակի համար կարևոր էր նաև քարածուխը, որը հանրապետությունը ներմուծում էր Վրաստանից և Ուկրաինայից: Մյուս կողմից՝ կալցիումի կարբիդ ստանալու համար անհրաժեշտ էր մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա: Հաշվումները ցույց էին տալիս, որ 1 կվտժ էլեկտրաէներգիայի արտադրության համար Հայաստանում համեմատաբար քիչ ծախսեր էին պահանջվում, քան՝ Միության տարբեր շրջաններում: Այսօր էական չէ նշել, թե ինչ չափանիշներով են կատարվել այդ հաշվարկները, բայց մի բան պարզ է, որ ջրային պաշարներով չափազանց աղքատ Հայաստանում ու հատկապես Սևանա լճի ջրերը անգթաբար օգտագործելու ու վատնելու գնով էլեկտրաէներգիայի

ստացումը ոչ միայն շատ թանկ է արժեցել, այլև փաստորեն հանգեցրել է հանրապետության ջրային հիմնական շտեմարանի պաշարների սպառման: Տնտեսական նման քաղաքականությունն արդարացում չունի:

Հայաստանի մայրաքաղաքից հետո քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոն էր դարձել Վանաձորը: Երրորդ հնգամյակում խնդիր դրվեց ավարտել քիմիական կոմբինատի երկրորդ հերթի կառուցումը: 1938թ. վերսկսվեց ցիանամիդի արտադրամասի կառուցումը, որի շինարարությունը դադարեցվել էր: 1939թ. Վանաձորում սկսվեց քացախաթթվի գործարանի շինարարությունը՝ տարեկան հինգ հազար տոննա կարողությամբ: 1940թ. Վանաձորի քիմիական կոմբինատի համախառն արտադրանքը հասավ 12 միլիոն ռուբլու: Կոմբինատի արտադրանքի հիմնական տեսակներն էին կալցիումի կարբիդը և ցիանամիդը[34]:

Երրորդ հնգամյակում քիմիական արտադրության ընդլայնման ուղի էր բռնել Հայաստանի քիմիական արտադրության մյուս կենտրոնը՝ Ալավերդին: Այստեղ պլանավորվեց կառուցել և ավարտել ծծմբաթթվի գործարան՝ տարեկան 40 հազար տոննա կարողությամբ: 1939թ. սկսվեց Ալավերդու սուպերֆոսֆատի գործարանի շինարարությունը՝ 50 հազար տոննա կարողությամբ:

Նշված ձեռնարկություններից բացի նախապատերազմյան տարիներին Հայաստանի քիմիական արդյունաբերության մյուս ձեռնարկությունները ևս ընդլայնեցին իրենց կարողությունները և հարստացրին թողարկվող արտադրանքի տեսականին: Այս առումով զգալի տեղաշարժեր կատարվեցին հանրապետության տեղական արդյունաբերության ժողկոմատի ենթակայության ձեռնարկություններում: Վերակառուցվեց Երևանի խրոմպիկի գործարանը: Նրա տեսականին ընդլայնվեց լաքի, ներկերի ու մոնոքրոմատի արտադրանքով: Լաքի ու ներկի հիմքի վրա 1939թ. կառուցվեց պլաստմասսայի արտադրամաս, որը արտադրելու էր սպասք, աշակերտական պիտույք, տնային

---

[34] *Կ.Կոզմոյան*, Կիրովական, էջ 85-86:

ու կենցաղային գործածության իրեր, որոնց կարիքը մեծ էր[35]: Երրորդ հնգամյակում առաջնահերթ էր դառնում Վանաձորի և Երևանի քիմիական կոմբինատների արտադրանքի մնացուկների հիման վրա նոր արտադրական կարողությունների կառուցումը մի շարք նյութերի արտադրությունը կազմակերպելու համար[36]:

Հայաստանի քիմիացման տարածուն գործընթացն ուղեկցվում էր խորհրդային տնտեսության զարգացմանը բնորոշ բազմաթիվ ստվերոտ կողմերով, որը տնտեսությունը ստալինյան համակարգի վարչահրամայական մեթոդներով կառավարելու արդյունք էր: Միայն սինթետիկ կաուչուկի կոմբինատի կառուցումը մի յուրատեսակ հայելի էր, որի մեջ արտացոլվել է խորհրդային տնտեսության իրական պատկերը:

Տարօրինակ էր, սակայն փաստ, որ Երևանի սինթետիկ կաուչուկի կոմբինատի կառուցումն սկսվեց այն ժամանակ, երբ դեռևս ոչ մի ձեռնարկություն, նույնիսկ փորձնական, դրա արտադրությանը ձեռնամուխ չէր եղել: Ակնհայտ էր վերադաս օրգանների գրոհայնությունը: Մի կողմից Լենինգրադում կառուցվում էր փորձնական գործարան, դրա հետ միաժամանակ Երևանում նախագծվում ու կառուցվում էր հիմնական ձեռնարկությունը՝ այն պարզ գիտակցումով, որ փորձնական գործարանի գործարկումից հետո հարկ կլիներ Երևանի ձեռնարկությունում սարքավորումների անհրաժեշտ փոփոխություններ կատարել:

Արդեն բազմիցս խոսվել է խորհրդային տնտեսության պլանավորման գործում ի հայտ եկած թերությունների մասին: Պլանները կազմելիս պլանավորող կազմակերպությունները չէին առաջնորդվում իրերի իսկական պատկերի գիտակցումով, նյութական պաշարների վերաբերյալ ստույգ պատկերացումներով: Պլանները, իրոք, ֆանտաստիկ էին, դրանք հաճախակի փոփոխվում էին տարբեր հանգամանքների պատճառով: Վերադաս կազմակերպությունների ցուցումների համաձայն՝

---

[35] «Խորհրդային Հայաստան», 28 հունվարի 1940թ.:

[36] *Գ.Հարությունյան,* ՀԿ(բ)Կ ԿԿ-ի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 13-րդ համագումարում, էջ 21:

1935թ. սկզբներին պետք է ավարտվեր սինթետիկ կաուչուկի կոմբինատի շինարարությունը, սակայն այն ավարտվեց հազիվ 1940թ.: Նախնական պլանով գործարանի տարեկան կարողությունը հաշվվում էր 10 հազար տոննա, մինչդեռ նոր պլանի համաձայն նրա տարողությունն ընդարձակվում և կազմում էր 14 հազար տոննա[37]: Այս դեպքում, բնականաբար, պետք է ընդլայնվեին նաև կալցիումի կարբիդի և էլեկտրաէներգիայի արտադրության կարողությունները, որոնց ձեռնամուխ էին լինում նորանոր գրոհներով:

Ժամանակին չէին կազմվում նախագծերը: Կազմվելուց հետո դրանք ուշացումով էին տրամադրվում շինարարներին: Կոմբինատի շինարարությունը երբեմն կատարվում էր առանց նախագծերի, հաճախ էլ եղած նախագծերից շեղվում էին: 1936թ. կոմբինատի շինարարությունը մեկ գերատեսչությունից մյուսին հանձնելու հետևանքով վերստին փոփոխություններ կատարվեցին նախագծերում, իսկ մի շարք տեղամասերում աշխատանքներն ընդհանրապես դադարեցվեցին: Մինչև 1938թ. կեսերը կոմբինատի մի քանի արտադրամասերում շինարարությունը կանգ էր առել: Այսինքն՝ մի կողմից՝ գրոհայնություն, մյուս կողմից՝ աշխատանքների դադարեցում: 1940թ. ֆաբրիկան շահագործման հանձնելուց քիչ անց կազմվեց երրորդ նախահաշիվը՝ 209 մլն. ռուբ. ընդհանուր գումարով[38]:

Կրճատվում էին կապիտալ ներդրումները, պակասում էր շինարարության վրա աշխատող բանվորների ու ինժեներատեխնիկական աշխատողների թիվը: Աշխատանքները ծանր էին, դրանք մարդկանցից պահանջում էին ֆիզիկական ուժերի մեծ լարում, չկար տեխնիկա: Անկանոն ու չհամալրված էին ստացվում ֆաբրիկայի սարքավորումները, պակասում էին շինանյութերը:

Ֆաբրիկայի շինարարությունն աշխատող ձեռքերով ապահովելու համար հանրապետության տարբեր շրջաններից հավաքագրվեցին գյուղատնտեսության շատ աշխատողներ,

---

[37] *Մ.Սաֆարյան,* Հայաստանի կոմկուսի պայքարը հանրապետությունում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման համար, էջ 121:

[38] Նույն տեղում, էջ 120:

որոնց որակավորումը ցածր էր, որը ոչ միայն բացասաբար էր անդրադառնում գյուղական բնակչության ժողովրդագրության վրա, գյուղատնտեսությունը զրկում աշխատող ձեռքերից, այլև բազում սոցիալական հարցեր առաջացնում քաղաքում:

Մի քանի անգամ սահմանվել էին ֆաբրիկան շահագործման հանձնելու ժամկետները, որոնք խախտվել էին: ԽՍՀՄ Ժողկոմխորհը ֆաբրիկայի առաջին հերթի շահագործման ժամկետ սահմանեց 1939թ. մայիսի 1-ը, իսկ ամբողջ ֆաբրիկայինը՝ 1939թ. վերջերը, որը նույնպես ժամանակին չիրագործվեց: Վերջապես 1940թ. մարտի 27-ին կոմբինատը տվեց իր արտադրանքը: Սակայն այն շահագործման էր հանձնվել բազմաթիվ թերություններով, տեխնոլոգիական գործընթացների խախտումներով, որոնց հետևանքով թողարկված արտադրանքը կազմեց կոմբինատի կարողության ընդամենը 22 %-ը (59,9 տոննա կաուչուկ):

1941թ. երկրորդ եռամսյակից նախատեսվում էր կոմբինատի արտադրանքի թողարկումը հասցնել նախագծային կարողության, սակայն մի շարք սարքավորումների տեղադրումը ձգձգելու պատճառով պլանը կատարվեց հազիվ 44,6 %-ով[39]:

Պղնձի արդյունաբերությունը Հայաստանի արդյունաբերության ավանդական ճյուղերից մեկն էր և միաժամանակ աչքի էր ընկնում իր տեսակարար կշռով: 1913թ. Հայաստանը տվել էր Ռուսաստանի այդ մետաղի արտադրանքի 1/5 մասը (5633 տոննա չզտված պղինձ)[40], որը Հայաստանի նման փոքր երկրի համար մեծ թիվ է: Պղնձի պաշարների գիշատչորեն օգտագործումը հանգեցրեց այն բանին, որ 30-ական թթ. արդեն ակնառու դարձան Հայաստանի պղնձարդյունաբերության հումքային պաշարների և արտադրական բազայի միջև եղած անհամապատասխանությունները: Եթե Ալավերդիում պղնձի հանքանյութի պաշարները սպառվեցին, ապա պղնձաձուլական կոմբինատի արտադրական կարողությունները նորոգվեցին: Ընդհակառակը, Կապանի պղնձաձուլական գործարանը տեխնիկապես այնքան էր հնացել, որ չէր համապատասխանում նոր

[39] Նույն տեղում, էջ 129:

[40] «Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 93:

պահանջներին, և նրա փակումը դարձավ անհրաժեշտություն: Դրա փոխարեն Կապանում կառուցվեց հարստացուցիչ ֆաբրիկա, ուր տեղական հումքը վերամշակվում էր և այնտեղից ուղարկվում Ալավերդի՝ ձուլելու:

Խորհրդային իշխանության տարիներին հանրապետության պղնձարդյունաբերությունը դժվարություններ էր կրում: Բավական է ասել, որ 1913թ. մակարդակը գերազանցվեց հազիվ 1936թ.[41]: Թեպետև 3-րդ հնգամյակում հանրապետությունում պղնձի արտադրությունը նախատեսվում էր ընդլայնել, բայց պլանները չկատարվեցին: 1940թ. համեմատությամբ պղնձի ձուլումն ավելացավ 25 տոկոսով[42]:

Պղնձարդյունաբերության մեջ երևան եկած այդ դժվարությունները խորը վերլուծելու, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և խթանելու ձևեր մշակելու փոխարեն կուսակցական բյուրոկրատիան տարված էր արտադրության վիժեցնողներ ու վնասարարներ փնտրելու մոլուցքով (ընդսմին երբեմն նշվում էին նաև այդ իրադրությունը ծնող օբյեկտիվ պատճառները): Օրինակ՝ 1938թ. ՀԿԿ 11-րդ համագումարին կենտրոնական կոմիտեի տված հաշվետվությունում արդյունաբերության այդ ճյուղի մեջ ստեղծված վիճակը կապվում էր աշխատանքի վատ վերակառուցման և կատարված վնասարարության հետևանքները չհաղթահարելու հետ: Բերվում էր վնասարարների ձեռքով Կապանի թիվ 1, 2, 5, 7 հանքերը անգործության մատնելու օրինակը[43]: Պետք է նշել, որ նման հարցադրումը բացարձակապես անհեթեթ էր ու անհիմն: Պղնձարդյունաբերության ետ մնալը սոցիալիստական տնտեսավարման արատավոր ձևերի ու մեթոդների արդյունքն էր, որոնց մասին, հանուն ճշմարտության, պետք է նշել, որ կիսաձայն երբեմն ասվում էր:

Հանքերն ու արտադրական ձեռնարկությունները հագեցված չէին նորագույն տեխնիկայով ու տեխնոլոգիայով, զգալի

---

[41] Նույն տեղում, էջ 98:

[42] *Հ.Թումանյան*, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, էջ 144:

[43] *Գ.Հարությունյան*, ՀԿ(բ)Կ ԿԿ հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 11-րդ համագումարին, Ե. 1938, էջ 19:

տեղ էր գրավում ձեռքի աշխատանքը, մշտապես զգացվում էր մեքենաների, օժանդակ նյութերի, սարքերի ու սարքավորումների պակաս: Քիչ էր ուշադրություն դարձվում անվտանգության տեխնիկային և այլ բազում հարցերի: Անդրադառնանք դրանցից մի քանիսին: Հայտնի է, որ հանքանյութի հանույթը կախված էր հանքափորների աշխատանքից: Սակայն վերջիններս հաճախ հարկադրված պարապուրդի էին մատնվում, որովհետև նրանց մեխանիկական մուրճերի համար խտացված օդը խափանումներով էր մատակարարվում: Հանքերում վագոնիկների պակասը, երկաթուղային գծերի անսարքությունը նույնպես զգալի չափով ազդում էին աշխատանքի արտադրողականության վրա: Ոչ պատշաճ մակարդակի վրա էին արտադրական տարբեր գործընթացում գտնվող, սակայն միմյանց հետ սերտորեն կապված երկու ձեռնարկությունների՝ Կապանի հարստացուցիչ և Ալավերդու պղնձաձուլական ֆաբրիկաների փոխհարաբերությունները: Այսպես, կշեռք չունենալու պատճառով Կապանում պղնձի հանույթը չէր կշռվում, դրա քանակը որոշվում էր աչքաչափով, որի հետևանքով տարաձայնությունները Կապանի և Ալավերդու միջև անվերջ էին: Այդ հանգամանքը դուռ էր բացում հավելագրումների ու այլ չարաշահումների համար: Այսպես, 1939թ. ապրիլ-մայիս ամիսներին Կապանից Ալավերդի տեղափոխված հանքաքարի պակասը կազմում էր 5382 տ, օրական 760- 800 տ դիմաց ստացվում էր 350-400 տ հանքաքար: Ալավերդու ֆաբրիկան լրիվ ծանրաբեռնվածությամբ չէր աշխատում, պարապուրդները մեծ չափերի էին հասնում: Միայն 1939թ. առաջին եռամսյակում պարապուրդները կազմել էին 3328 ժամ: Կշեռք չլինելը հնարավորություն չէր տալիս որոշել յուրաքանչյուր հերթափոխում արտադրված արտադրանքի ծավալը, արտադրության առաջավորներին, հետևաբար նաև նրանց վարձատրության չափը և այլն: Աշխատավարձի հավասարեցումը, բանվորներին իրենց աշխատանքին համապատասխան չվարձատրելը չէին ոգևորում ու շահագրգռում նրանց[44]:

Կապանից խտանյութը Ալավերդի էր տեղափոխվում ան-

[44] «Խորհրդային Հայաստան», 16 մայիսի 1939թ.:

կազմակերպ: Խտանյութի զգալի մասը ճանապարհին կորչում էր: Վագոնները ժամանակին չբեռնելու, չբեռնաթափելու հետևանքով կոմբինատը մեծ չափերի տուգանք էր վճարում երկաթուղուն: Միայն 1939թ. առաջին եռամսյակում տուգանքը կազմել էր 16 հազար 800ռ.:

Այս ամենից բացի, ձեռնարկությունները զրկված էին ինքնուրույնությունից: Նրանց պլանները կազմվում էին վերադաս մարմինների կողմից, որոնք հաճախ իրատեսական չէին: Այս դեպքում արտահայտված որևէ կշռադատված կարծիք կամ գործողություն կատաղի դիմադրության էր հանդիպում բյուրոկրատական ապարատի կողմից, դրան տրվում էր քաղաքական երանգ: Դրա ցայտուն օրինակն Ալավերդու կոմբինատի տնօրեն Վ.Շելենկովի և հանքերի կառավարիչ Բ.Ուլիբեկյանի նկատմամբ կիրառված գործողություններն էին: Արտադրության վերոհիշյալ կազմակերպիչները, քաջատեղյակ լինելով իրենց ձեռնարկությունների հնարավորություններին, 1939թ. մայիսի 15-ին հեռագրում են Մոսկվա՝ հանքերի և պղնձի արդյունաբերության գլխավոր վարչություններին՝ տեղեկացնելով, որ մայիսից մինչև տարվա վերջը տեխնիկապես անհնար է 102 հազար տոննա հանքաքար տալ: Նրանց կարծիքով իրական թիվը 68 հազար տոննան է, և խնդրում են թույլատրել այդ ծավալի համար պայմանագիր կնքել: Այսքանը բավական էր, որպեսզի հանրապետական կուսակցական կազմակերպության կենտրոնական օրգանը հարձակվեր նրանց վրա և այդ ժամանակաշրջանին բնորոշ զանազան պիտակներ կպցներ: Այսպես, թերթի բնութագրումով դա «օպորտունիստական նվոց էր, հակապետական արարք»: Թերթը միաժամանակ քննադատում էր Ալավերդու շրջանային կուսակցական կազմակերպությանը, որը մեղմ վճիռ էր կայացրել նրանց նկատմամբ և բավարարվել էր միայն ի ցույց դնելով[45]:

Շեղվելով արտադրական հարցերն անաչառ ու անկողմնակալ լուսաբանելուց՝ թերթը քննադատության ողջ տարափը տեղում էր ֆաբրիկայի տնօրենի վրա: Նա մեղադրվում էր

---

[45] «Խորհրդային Հայաստան», 12 հուլիսի 1939թ.:

1939թ. առաջին կիսամյակի պլանները թերակատարելու, վառելանյութը վատնելու, բնակարանային շինարարությունը չիրականացնելու և այլ բազմաթիվ թերացումների համար[46]:

Մենք հեռու ենք այն մտքից, թե արտադրության կազմակերպիչները ի վիճակի չեն արտադրական բոլոր հարցերը լուծել, սակայն միաժամանակ հազիվ թե տրամաբանական լինի այդ բնագավառում եղած բոլոր դժվարությունները նրանց վրա բարդել:

3-րդ հնգամյա պլանով նախատեսվում էր ընդարձակել հանրապետության պղնձարդյունաբերության հումքային բազան՝ նոր հանքավայրեր շահագործելու միջոցով: 1938-1939թթ. երկրաբանական-հետախուզական աշխատանքները ցույց տվեցին պղնձի և մոլիբդենի հարուստ հանքավայրերի առկայությունը Ողջիում և Քաջարանում: Մասնագետների կարծիքով դրանք Խորհրդային Միության պաշարների մեջ առաջնակարգ տեղ էին գրավում: 1941թ. հունվարին ԽՍՀՄ ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ ԿԿ-ն որոշեցին Քաջարանում կառուցել պղնձամոլիբդենային կոմբինատ: Նախապատրաստական աշխատանքներ ծավալվեցին կոմբինատի շինարարության համար, որոնք, սակայն, ընթացք չստացան:

Այս տարիներին հանրապետության գունավոր արդյունաբերության կառուցվածքում նախատեսվում էր կատարել էական փոփոխություն: Որոշվեց Հայաստանում զարգացնել ալյումինի արդյունաբերությունը: Արդյունաբերության այդ ճյուղի զարգացման համար իբր կռվան բերվում էր հանրապետությունում առկա էժան էլեկտրաէներգիան, որի արտադրության ծավալը հատկապես Գյումուշի և Սևան-Հրազդան կասկադի մյուս հիդրոէլեկտրակայանների կառուցումից հետո կտրուկ աճելու էր: Մենք արդեն առիթ ունեցանք խոսելու Սևանա լճի մակարդակն իջեցնելու հաշվին էլեկտրաէներգիայի արտադրությունը մեծացնելու քաղաքականության միջոցով հանրապետության տնտեսությանը հասցված ծանր ու աղետաբեր հետևանքների մասին, սա անշուշտ խնդրի մի կողմն է: Բայց կար նաև մեկ ուրիշ կողմ: Բանն այն էր, որ հանրապետության մայրաքաղաքում

[46] Նույն տեղում:

կառուցվող ալյումինի գործարանն ապահովված չէր տեղական հումքով: Այն ստացվում էր Ուրալից՝ 4 հազար կմ հեռավորությունից:

Հասկանալի է, թե որքան թանկ պիտի լիներ նման արտադրանքը, որի տնտեսապես արդյունավետ լինելը որևէ քննադատության չի դիմանում, մանավանդ այն դեպքում, երբ կուսակցության 18-րդ համագումարը որոշում էր կայացրել արդյունաբերական ձեռնարկությունները հումքի աղբյուրներին մոտ կառուցելու մասին: Մյուս կողմից՝ գործարանի կառուցմանը զուգահեռ, փորձ արվեց տեղական հումքի հայտնաբերումով ապահովել նրա աշխատանքը, մի բան, որ չիրականացավ, և գործարանը հետագայում ևս շարունակեց բերովի հումքի հաշվին աշխատել:

1940թ. Երևանում սկսվեց ալյումինի գործարանի շինարարությունը, սակայն այն ընդհատվեց և միայն պատերազմի վերջում վերստին շարունակվեց: Երևանում կառուցվեց ալյումինի գործարան, որը ոչ տնտեսապես և ոչ կենսոլորտի մաքրությամբ իրեն չարդարացրեց, ահա թե ինչու հետագայում գործարանը վերակառուցվեց և սկսեց արտադրանք տալ ներմուծվող ալյումինի հումքի հաշվին:

ԽՍՀՄ-ում երրորդ հնգամյա պլանի էական հատկանիշներից մեկն այն էր, որ նախատեսվում էր բարձր տեմպերով մեքենաշինության զարգացում: Մեքենաշինությունը ծանր արդյունաբերության զարգացման միջուկն է, առանց որի այն չի կարող գոյություն ունենալ և զարգանալ: Բայց արդյունաբերության այդ ճյուղում ևս հնգամյա պլանները կազմվել էին եղած հնարավորություններն անտեսելով, արհեստականորեն բարձրացված թվերով: Ահա թե ինչու մեքենաշինության տարեկան աճի միջին տեմպերի պլանները, որոնք նախատեսված էին 14 %, կատարվեցին ընդամենը 13,2-ով[47]: Մյուս կողմից՝ մեքենաշինության ճյուղային կառուցվածքում տեղի ունեցավ էական փոփոխություն: Այն սկսեց մասնագիտանալ հիմնականում ռազմական արտադրանք թողարկելու բնագավառում: Եթե 1938-1940թթ. ԽՍՀՄ-ի ողջ արդյունաբերության

[47] История социалистической экономики СССР, т.5, М.1978, с.55.

արտադրանքի ծավալն աճեց 45%-ով, ապա նույն ժամանակամիջոցում ռազմական արդյունաբերության արտադրանքի ծավալը մեծացավ 2,8 անգամ[48]:

Ահա այս հանգամանքով, այսինքն՝ ռազմական արտադրանքի արագ աճով էր պայմանավորված մեքենաշինության մի շարք ճյուղերի՝ երրորդ հնգամյակի տարիներին արտադրանքի ծավալի կրճատվելը: Նվազեց, օրինակ, շոգու և գազի տուրբինների (9 %), 100-կվ-ից բարձր էլեկտրաշարժիչների (13,9 %), շոգեքարշերի (20 %), ավտոմոբիլների (27,3 %), էքսկավատորների (47,5 %), կոմբայնների (70,8 %), տրակտորների (38 %),խառատային հաստոցների (24,2 %) և արտադրանքի այլ տեսակների արտադրությունը[49]:

Անշուշտ, լծակը դեպի ռազմական արտադրանք ուղղելը զգալի դեր խաղաց հիշյալ մեքենաների կրճատման խնդրում, սակայն միայն դրանով բացատրելը, կարծում ենք, այնքան էլ ճիշտ չէ: Վերոհիշյալ մեքենաների թողարկման կրճատումը նաև խորհրդային տնտեսությունը վարչահրամայական մեթոդներով ղեկավարելու հետևանքով երևան եկած տնտեսական անիշխանությամբ ու անարդյունավետությամբ էր պայմանավորված: Իբրև հաստատումն ասվածի, բերենք հետևյալ օրինակները: 1940թ. նոյեմբերի 1-ի դրությամբ երկրի 8 արդյունաբերական ժողկոմատների ձեռնարկություններում ոչ լրիվ տվյալներով չէր տեղադրվել 33 հազար մետաղահատ հաստոց, այն դեպքում, երբ ողջ 1940թ. դրանցից արտադրվել էր ընդամենը 58 հազարը: Եթե 1940թ. նույն այս ժողկոմատների ձեռնարկություններն արտադրել էին 4,7 հազար դարբնոցամամլիչային հաստոցներ, ապա չէին օգտագործել 6 հազարը: Միաժամանակ շարունակում էին արտասահմանից գնել թանկարժեք տեխնիկա: 1940թ. գնվել էին 4,6 հազար մետաղահատ և 4,6 միլիոն ռուբլու դարբնոցամամլիչային սարքավորումներ[50]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում մետաղամշակման արդյունաբերության աճի տեմպերը

---

[48] Նույն տեղում:

[49] История социалистической экономики СССР, т.5, М.1978, с.56J

[50] *О.Хлевнюк*, 26 июня 1940г. иллюзии и реальности администрирования, "Коммунист", 1989, N9, с.87.

միութենականի համեմատությամբ ցածր էին, այդուհանդերձ, մեր հանրապետությունում ևս այդ բնագավառում նկատվում էր առաջընթաց:

Հայաստանի մեքենաշինական գործարանների արտադրանքը հիմնականում տեղական նշանակություն ուներ: Նրանք բավարարվում էին արդյունաբերական ու գյուղատնտեսական գործիքների նորոգումով, տրանսպորտի ու կոմունալ տնտեսությունների սպասարկումով: Մեքենաշինական ձեռնարկություններն արտադրում էին նաև կենցաղային նշանակության իրեր ու սարքավորումներ:

Նախապատերազմյան տարիներին Հայաստանի մեքենաշինական ձեռնարկությունների մեջ աչքի էր ընկնում Երևանի հաստոցաշինական գործարանը, որի հիմնական արտադրանքը 6 և 25 ձիաուժանոց նավթային շարժիչներն էին: Գործարանը կանգնած էր լուրջ դժվարությունների առաջ, չէր կատարում պետական պլանները: 1938թ. պլանն, օրինակ, թերակատարվեց: Գործարանը 68,5 %-ով էր ապահովված բանվորական կադրերով, մեծ թիվ էր կազմում նրանց հոսունությունը: Պակասում էին նաև որակյալ մասնագետները: 1939թ. գործարանին տրվում է ռազմական նշանակություն ունեցող որոշ արտադրանք թողարկելու հանձնարարություն: Այդ տարուց նրա արտադրական ցուցանիշները վերելք են ապրում[51]:

1940թ. հիմնադրվեց հանրապետության մեքենաշինական ամենախոշոր ձեռնարկությունը՝ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը, որի կառուցումն ընդհատվեց, սակայն 1944թ. վերստին շարունակվեց:

Հանրապետության էներգետիկ արդյունաբերությունը ևս զարգացավ: Եթե 1937թ. Հայաստանում արտադրվել էր 258,3 միլիոն կվտժ էլեկտրաէներգիա[52], ապա 1939թ. դրա արտադրության պլանը կատարվել էր 129 %-ով: Ստույգ հայտնի է 1940թ. Հայաստանի հիդրոէլեկտրակայանների արտադրած էներգիայի քանակը՝ 395,3 միլիոն կվտժ[53]: Այսպիսով, երեք

---

[51] *Կ.Կոզմոյան*, Երևանի Ֆ.Է.Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Ե., 1956, էջ 27-31:

[52] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.30.

[53] Նույն տեղում:

տարվա ընթացքում հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել էր 160,3 միլիոն կվտ ժամով:

Պետք է նշել, որ հանրապետության արդյունաբերությունը միշտ զգացել էր էլեկտրաէներգիայի սղություն: Այսպես, 1937թ. էլեկտրաէներգիայի պակասորդը կազմել էր 95 միլիոն կվտժ[54]: Այդ պակասորդը գոյանում էր մի կողմից՝ էներգապաշարների պակասի, իսկ մյուս կողմից՝ արդյունաբերության էներգատար այնպիսի ճյուղի զարգացումով, ինչպիսին քիմիական արդյունաբերությունն էր: Ջրային պաշարներով աղքատ Հայաստանը Սևանա լճի հաշվին հիդրոկայաններ պետք է կառուցեր ոչ միայն սեփական էներգետիկ պահանջները բավարարելու, այլև Անդրկովկասի հանրապետություններին էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Ահա թե ինչ աստիճանի կարող էին ոտնահարվել սեփական ազգային շահերը ընդհանուրի շահերի համար:

1938թ. ստեղծվեց Հայաստանի խոշոր էլեկտրակայանների միասնական բարձրավոլտ միավորում (փունջ), որով հանրապետության էլեկտրակայանների տնտեսական արդյունավետությունը բարձրացավ: Էլեկտրաէներգիայի պակասի լրացման կարևորագույն պայման էր դիտվում Քանաքեռհէկն իր ողջ կարողությամբ շահագործման հանձնելը: Նրա վերջին՝ 6-րդ ագրեգատի շահագործումը նախատեսվում էր 1940թ.:

Հնգամյա պլանով էլեկտրաէներգիայով արդյունաբերության օրավուր աճող պահանջները բավարարելու համար նախատեսվում էր ձեռնամուխ լինել Սևան-Հրազդան կասկադի ամենախոշոր՝ Գյումուշի հիդրոէլեկտրակայանի կառուցմանը:

Նախապատերազմյան տարիներին զարգացավ հանրապետության տեղական արդյունաբերությունը: Հիշյալ ճյուղի ընդլայնումը դարձավ Հայաստանի տնտեսական զարգացման կարևոր գործոններից:

Տեղական արդյունաբերությունը և արդյունաբերական կոոպերացիան կոչված էին բնակչության կենցաղային կարիքները բավարարելու նպատակով լայն սպառման առարկաներ

---

[54] *Գ. Հարությունյան*, ՀԿ(բ)Կ ԿԿ հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 11-րդ համագումարին, էջ 15:

և շինանյութ արտադրել: Ճյուղը հիմնականում օգտագործում էր տեղական և երկրորդային հումք:

1940թ. 1938թ. համեմատությամբ լայն սպառման ապրանքների համախառն արտադրանքը քաղաքային և շրջանային արդյունաբերության մեջ աճեց 43,2 %-ով, իսկ արհեստագործական կոոպերացիայի մեջ՝ 64,1 %-ով[55]: Համեմատական աճի այս տեմպերը, սակայն, դեռևս բավարար չէր կարելի համարել, որովհետև բացարձակ մեծությամբ լայն սպառման ապրանքների համախառն արտադրանքը դեռ չէր բավարարում բնակչության պահանջները:

Արդյունաբերության այս ճյուղի մեջ նկատելի էին արտադրանքի բազմազանությունը, ձեռնարկությունների արտադրական սակավ կարողությունները և մասնատվածությունը, մի շարք գերատեսչությունների ենթարկվածությունը: 1941թ. հունվարին քաղխորհուրդների և շրջխորհուրդների ենթակայության տակ կային 273 ձեռնարկություններ, որոնցից 24-ը պատկանում էին տեղական արդյունաբերության ժողկոմատին, 31-ը՝ շինարարական նյութերի արդյունաբերության գլխավոր վարչությանը, 16-ը՝ սննդարդյունաբերության ժողկոմատին, 139-ը՝ հայարդխորհրդին, 20-ը՝ հայանտառկոոպմիությանը, 41-ը՝ սոցիալական ապահովության ժողկոմատին[56]: Ըստ ճյուղերի՝ այս ձեռնարկություններից 36-ը արտադրում էր շինանյութ, 3-ը՝ բրուտագործության իրեր, 15-ը թողարկում էր մետաղամշակության, 29-ը՝ փայտամշակության, 20-ը՝ տրիկոտաժի, 2-ը՝ գործվածքի, 3-ը՝ պատրաստի հագուստի արտադրանք: Մնացածներից երկու ձեռնարկություն տալիս էին գորգագործության, սննդարդյունաբերության, սայլաշինության արտադրանք: Կենցաղային սպասարկման ոլորտում ընդգրկված էր 52 ձեռնարկություն, այլ ծառայություններում՝ 17-ը[57]:

Թեպետև տեղական արդյունաբերությունը մեծ հնարավորություն ուներ հանրապետության փոքր քաղաքների, շրջկենտրոնների ու գյուղական վայրերի աշխատանքային ձեռ-

---

[55] Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.1, ց.21, գ.1, թ.6:
[56] ՀԱԱ, ֆ.1, ց.2, գ.4, թ.3-25:
[57] Նույն տեղում:

քերը օգտագործելու, արդյունաբերական ձեռնարկությունները տարբեր շրջաններում տեղաբաշխելու համար, սակայն նրանց մեծ մասը դարձյալ կենտրոնացած էր Երևանում, Գյումրիում և Վանաձորում: Հանրապետության 16 շրջաններից ոչ մեկում չկար ոչ մի այդպիսի ձեռնարկություն, իսկ 12 շրջանում կար միայն մեկական ձեռնարկություն[58]: Այս փաստը պերճախոս վկայություն է լայն սպառման ապրանքների արտադրության և սպասարկման ոլորտում տեղ գտած թերությունների :

1941թ. հունվարին Հայաստանի կառավարությունը նախատեսեց 1940թ. համեմատ տեղական արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացնել 208, իսկ արհեստագործական կոոպերացիայինը՝ 32 %-ով: Որոշվեց հանրապետությունում հիշյալ ճյուղի 71 մանր ձեռնարկությունների ու արհեստանոցների թիվը հասցնել 248-ի: Ապրիլին արդեն հանրապետությունում կազմակերպվեցին 58 արհեստանոցներ[59]:

Պատերազմի սկզբից տեղական արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը ներգրավվեց ռազմաճակատի պատվերները կատարելու գործի մեջ:

Նախապատերազմյան տարիներին հանրապետության թեթև արդյունաբերության մեջ զգալի տեղ էր գրավում տեքստիլ արդյունաբերությունը, որի զարգացման հիմքը բամբակագործությունն էր:

Թեթև արդյունաբերության ձեռնարկությունները կենտրոնացված էին Երևանում և Գյումրիում, որոնք թողարկում էին հանրապետության ողջ արտադրանքի 70 %-ը: 1938-1939 թթ. շահագործման հանձնվեց Գյումրիի տեքստիլ կոմբինատը: Ճյուղը զարգացավ հանրապետության այլ քաղաքներում (Վանաձոր, Գավառ, Ստեփանավան և այլուր):

1940թ. 1937թ. համեմատությամբ հիշյալ ճյուղի արտադրանքն իր ծավալով շեշտակի ավելացավ: Դա է վկայում ստորև բերված աղյուսակը[60]:

---

[58] Նույն տեղում, ֆ.1, ց.2, գ.4, թ.3-25:

[59] ՀԱԱ, ֆ. 113, ց.29, գ.34, թ.24:

[60] «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 172:

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	1937թ.	1940թ.
1.	Բամբակե մանվածք	հազար տ	2,5	5,7
2.	Բամբակե գործվածք	միլիոն տ	17,2	26,8
3.	Մետաքսե գործվածք	հազար մ	76	206
4 .	Բրդե գործվածք	-----,,-----	---	17
5.	Գորգեր և գորգեղեն	հազ.քառ.մ.	12,5	16,1
6.	Տրիկոտաժե սպիտակեղեն և վերնազգեստ	հազար հատ	536	3033
7.	Գուլպեղեն	միլիոն զույգ	8,5	9,8
8.	Բամբակի մանրաթել	հազար տ	6,2	10
9.	Հում մետաքս	տ	23	21

Թեթև արդյունաբերության համակարգում արտադրանքի ավելացման հետ տեղ էին գտել այնպիսի թերություններ, որոնք ընդհանրապես բնորոշ էին ոչ միայն հիշյալ ճյուղին, այլև ողջ խորհրդային տնտեսությանը:

Տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների մեջ արտադրական ցածր ցուցանիշներով առանձնապես աչքի էր ընկնում Գյումրիի տեքստիլ կոմբինատը, որը շահագործման հանձնելու առաջին իսկ օրվանից աննախանձելի վիճակում էր: Կոմբինատի մանվածքային գործարանը 1939թ. պլանը կատարել էր 44,7 %-ով, իսկ գործվածքային գործարանը՝ 61,7 %-ով: Վերջինս 24 միլիոն 137 հազար մետր բյազի փոխարեն արտադրել էր 14 միլիոն 888 հազար մետր[61]: Սակայն խորանանք պլանների թերակատարման պատճառների մեջ: Կոմբինատը լրիվ ապահովված չէր բանվորական ուժով, կոճերի պակասի պատճառով օրական 2-4 ժամ աշխատանքը ընդհատվում էր: 150 դազգահ չէր աշխատում ջուլհակ չլինելու պատճառով: Սրան ավելացրած 450-500 գործող դազգահներ էլ չեն աշխատել, որովհետև նախապատրաստական բաժինը

[61] «Խորհրդային Հայաստան», 9 հունվարի 1940թ.:

150-200 հենքի փոխարեն տվել է 60-70-ը: Աշխատանքային ծանր պայմանները, մարդկանց նկատմամբ ցուցաբերվող անհոգությունը հարկադրել են շատերին լքել աշխատանքը: Շատերն էլ հեռացվել են զանազան պատճառաբանություններով՝ պարապուրդի, աշխատանքային կարգապահությունը խախտելու համար: Այսպես, 1939թ. 11 ամսվա ընթացքում կոմբինատում աշխատանքից հեռացել են 2365 մարդ, նույն ժամանակամիջոցում ընդունվել են 2459[62], այն դեպքում, երբ ողջ գործարանում աշխատող բանվորների ու ինժեներատեխնիկական աշխատողների թիվը եղել է 350:

Պլանները թերակատարելուն նպաստում էր նաև հումքի պակասը: ՀԽՍՀ թեթև արդյունաբերության ժողկոմատի ակտիվի նիստում այս փաստն ընդգծվեց խիստ որոշակի[63]: Կոմբինատի պարապուրդները զգալի չափով պայմանավորված են եղել էլեկտրականության մատակարարման խափանումներով:

Պլանները թերակատարելու հետ մեկտեղ մեծ է եղել խոտան արտադրանքի թողարկումը: Ըստ մեր ունեցած տվյալների, արտադրանքի 10-12 %-ը, երբեմն նաև՝ 16,2, 16,6 %-ը խոտան է եղել: Հաճախ զանազան մեքենայություններով այդ խոտանը դիտվել է որակյալ արտադրանք և այդ ճանապարհով իրացվել: Այսպես, 1938թ. իրացվել է 725 հազար ռուբլու խոտան, որը գնվել է տնայնագործական կոոպերացիայի կողմից՝ կիսաֆաբրիկատների անվան տակ[64]:

Բերված փաստերը ամբողջական պատկերացում չեն տալիս հիշյալ ճյուղում տիրող վիճակի մասին: Չի կարելի աչքաթող անել այնպիսի արատավոր երևույթ, ինչպիսին հափշտակությունն է: Պատրաստի արտադրանքի կամ հումքի ու տարբեր նյութերի հափշտակությունը շատ սովորական ու տարածում գտած մի երևույթ էր: Երևանի կարի գործարանում, օրինակ, հումքի և թանկարժեք նյութերի պահպանությունը

---

[62] Նույն տեղում:

[63] «Խորհրդային Հայաստան», 28 հուլիսի 1939թ.:

[64] «Խորհրդային Հայաստան», 22 հունիսի, 24 հունիսի 1939թ.:

բարձիթողի վիճակում է եղել: 1939թ. միայն ձևարանի արտադրամասում պակասորդը կազմել է 514 հազար ռուբլի:

Տեքստիլ արդյունաբերությունից բացի նախապատերազմյան տարիներին մեծացավ հանրապետության կաշվի արտադրության ծավալը: Մայրաքաղաքի կաշվի գործարանը դարձավ այն հիմքը, որի վրա զարգացավ կոշիկի արտադրությունը: 1940թ. հանրապետությունում արտադրվել է 943 հազար զույգ կոշիկ, որը 1937թ. համեմատությամբ կազմում է 71 %[65]:

Թեպետև 1939թ. հանրապետության թեթև արդյունաբերությունը թողարկեց 37,8 միլիոն ռուբլու արտադրանք, որը 1937թ. համեմատությամբ աճել էր 40 %-ով, բայց արդյունաբերության հիշյալ ճյուղը այդ տարվա պլանը կատարեց ընդամենը 90,2 %-ով:

Նախապատերազմյան տարիներին Հայաստանի արդյունաբերության մեջ սննդի արդյունաբերությունն իր տեսակարար կշռով գերակշռում էր մյուս ճյուղերին: 1938թ. արդյունաբերության համախառն արտադրանքի 34,7 %-ը բաժին էր ընկնում սննդարդյունաբերությանը[66] (սննդարդյունաբերություն և օճառաեփում): Իսկ 1940թ. նրան բաժին էր ընկնում համախառն արտադրանքի 40 %-ը[67]: Այս ժամանակաշրջանում սննդարդյունաբերությանը բնորոշ էին զարգացման բարձր տեմպերը: 1913թ. համեմատությամբ համախառն արտադրանքի ծավալը մեծացավ 20 անգամ: Արտադրության ծավալների ընդլայնման հետ մեկտեղ փոխվեց նաև ներճյուղային կառուցվածքը: Սննդարդյունաբերությունը սկսեց թողարկել արտադրանքի նոր տեսակներ (երշիկեղեն, մակարոնեղեն, հրուշակեղեն, հանքային ջուր): Թե՛ արտադրանքի ծավալի ընդլայնումը և թե՛ ներճյուղային կառուցվածքում կատարված փոփոխությունները տեղի ունեցան սննդարդյունաբերության նոր ձեռնարկությունների կառուցման շնորհիվ: Նախապա-

---

[65] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.39.

[66] Социалистическое строительство Армянской ССР, с.28.

[67] *Գ.Ավագյան*, Խորհրդային Հայաստանի տնտեսական աշխարհագրություն, Ե., 1981, էջ 175:

տերազմյան տարիներին, օրինակ, կառուցվեցին Երևանի և Գյումրիի մսի կոմբինատները, Երևանի ձեթ-օճառի, հրուշակեղենի-մակարոնի, յուղի, պանրի ու հացի գործարանները: Դրանք հագեցված էին ժամանակակից բարձր արտադրողականություն ունեցող սարքավորումներով: Սննդարդյունաբերության մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում գինու-կոնյակի արտադրությունը, որը միավորված էր Արարատ տրեստի մեջ: Վերջինս տվել է 1939թ. սննդարդյունաբերության ողջ արտադրանքի 52 %-ը: Հանրապետության արտադրանքը միջազգային մեծ ճանաչման էր արժանացել: Նախապատերազմյան տարիներին սկսվեց սեղանի թեթև գինիների արտադրությունը:

1940թ. Հայաստանում արտադրվել էր 1117 հազար դեկալիտր գինի, 63 հազար դեկալիտր կոնյակ[68]: Կոնյակի և գինու արտադրությունն ընդարձակելու համար Երևանում կառուցվեցին նոր արտադրամասեր ու նկուղներ: 1940թ. Աշտարակում սկսվեց «Խերես» գինու գործարանի կառուցումը, որն այդ տեսակի գինի առաջին անգամ էր թողարկելու Խորհրդային Միության մեջ (600 հազար դեկալիտր տարողությամբ):

Սննդարդյունաբերության մյուս ճյուղը, որը զարգանում էր Հայաստանում, պահածոյագործությունն էր: Պահածոների արդյունաբերությունը կենտրոնացված էր մայրաքաղաքում և Մեղրիում: Երևանի պահածոների գործարանի կարողությունը մինչև 1939թ. հասնում էր 14 միլիոն տուփի, վերակառուցումից հետո նրա արտադրական ծավալն ընդարձակվեց և հասավ 21 միլիոն տուփի: Չնայած դրան, պահածոների գործարանն իր արտադրական պլանները չէր կատարում: 1940թ. Հայաստանի պահածոյագործներն արտադրել են 17,3 միլիոն պայմանական տուփ պահածո[69]: Մեծանում էր պահածո արտադրող ձեռնարկությունների թիվը: 1939թ. շահագործման հանձնվեց Այրումի գործարանը:

1940թ. Երևանում շահագործման հանձնվեց կաթի մեքե-

---

[68] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.45.

[69] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.48.

նայացված առաջին գործարանը: Կաթի մշակման մի շարք գործարաններ կառուցվեցին հանրապետության շրջկենտրոններում ու գյուղերում: Ավելացավ յուղի ու պանրի արտադրությունը: Պանրի և յուղի արտադրությունը 1937-1940թթ. հետևյալ պատկերն ուներ (տոննաներով)[70]:

	1937թ.	1938թ.	1940թ.
Կենդանական յուղ	343,7	696,8	1559
Զտված յուղ	4,1	5	6,1
Տարբեր տեսակի պանիրներ	748	1806	1876

Սննդարդյունաբերության ճյուղերից մեկը ծխախոտի արդյունաբերությունն էր: Նախապատերազմյան տարիներին սկսեց գործել ծխախոտի ֆերմենտացման արդյունաբերությունը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում արդյունաբերության այս ճյուղի արտադրանքը կրճատվեց: 1937թ. 1,300 միլիոն հատի փոխարեն 1940-ին արտադրվեց 1,084 միլիոն հատ գլանակ, որը կազմում էր 1937թ. արտադրանքի 83 %-ը[71]:

Այսպիսով, նախապատերազմյան տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսությունն աչքի էր ընկնում իր զարգացման բարձր տեմպերով: Առանձնապես բարձր էին արդյունաբերության զարգացման տեմպերը: 1937-1940թթ. արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց 68 %-ով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության արդյունաբերության մեջ իր տեսակարար կշռով ամենաբարձր տեղը գրավում էր սննդի արդյունաբերությունը (1940թ., 40 %), որին ևս բնորոշ էին զարգացման բարձր տեմպերը: Ճյուղի արտադրական ծավալների փոփոխության հետ մեկտեղ փոփոխվեց ներճյուղային կառուցվածքը: Դրական փոփոխություններ տեղի ունեցան նաև հիշյալ ճյուղի տարածքային տեղաբաշխման մեջ:

---

[70] Социалистическое строительство Армянской ССР, с.37.

[71] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.51.

Նախապատերազմյան տարիներին թեթև արդյունաբերության տեսակարար կշիռն ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ կազմել է 36 %: 1937-1940 թթ. նրա աճի տեմպերը վերելք ապրեցին (աճը 40 %):

Ուսումնասիրվող ժամանակահատվածում թեթև արդյունաբերության տեղաբաշխման մեջ ևս նկատվեցին դրական միտումներ: Բացի Երևանից և Գյումրիից ճյուղը զարգացավ նաև հանրապետության այլ քաղաքներում:

Հանրապետության ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը քիմիական արդյունաբերությունն էր, որը նույնպես աչքի ընկավ իր զարգացման բարձր տեմպերով: 1940թ. քիմիական արդյունաբերությունը թողարկում էր արդյունաբերական արտադրանքի 22,2 %-ը: Այն կենտրոնացած էր Երևանում, Վանաձորում և Ալավերդիում: Քիմիական արդյունաբերությունը ավանդական կալցիումի կարբիդից բացի տվեց ժողովրդական տնտեսության համար խիստ կարևոր արտադրանք՝ սինթետիկ կաուչուկ:

Հայաստանի ծանր արդյունաբերության մյուս ճյուղը պղնձի արտադրությունն էր, որը նախապատերազմյան տարիներին վերելք ապրեց: 1940թ. 1937թ. համեմատ արտադրությունն ավելացավ 25 %-ով: Այն կենտրոնացված էր Կապանում և Ալավերդիում: Պղնձարդյունաբերության մեջ հումքային պաշարների և արտադրական բազայի միջև առաջ էր եկել խզում: Ալավերդու հանքանյութերի պաշարները սպառվել էին, իսկ պղնձաձուլական կոմբինատի արտադրողական կարողությունները նորոգվեցին:

Զարգացման բարձր տեմպերով աչքի ընկան նաև մեքենաշինությունն ու մետաղամշակումը: Նախապատերազմյան տարիներին արմատապես փոխվեցին մետաղամշակման արդյունաբերության տեխնիկական բազան, արտադրության ծավալը և կառուցվածքը: 1940թ. արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1913թ. համեմատությամբ աճեց 8,7 անգամ, իսկ մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքն ավելացավ 15 անգամ: Սակայն պետք է նշել, որ արդյունաբերության այս ճյուղը տեղական նշանակություն ուներ:

Նշված ժամանակաշրջանում Հայաստանի էներգետիկային բնորոշ առանձնահատկությունը հիդրոէներգետիկայի հիմքի վրա խոշոր էներգետիկայի զարգացումն էր: Արդյունաբերության այս ճյուղը նույնպես բնութագրվում էր զարգացման բարձր տեմպերով: Եթե 1937թ. Հայաստանում արտադրվել էր 258,3 միլիոն կվտժ էլեկտրաէներգիա, ապա 1940թ.՝ 395,3 միլիոն կվտժ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ երևան եկան մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված էին անարդյունավետությամբ, հանրապետության սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները և բնակչության ազգային շահերն անտեսող տնտեսական բացերով ու սխալներով:

Էներգատար մի շարք ճյուղերի (քիմիական, պղնձարդյունաբերության) օրավուր աճող պահանջները բավարարելու համար հարկ եղավ զարկ տալ հիդրոէներգետիկային, որն ի վերջո հանգեցրեց հանրապետության ջրային պաշարների լարվածությանը:

Քիմիական արդյունաբերության և գունավոր մետալուրգիայի զարգացումը, Երևանում, Վանաձորում, Ալավերդիում հսկա գործարանների կառուցումն ու վերակառուցումը առաջ բերեցին բնապահպանական լուրջ խնդիրներ և այդ տեսակետից դարձան աղետի գոտիներ:

Արդյունաբերության այդ ճյուղերը միութենական ձեռնարկությունների հումքի կցորդներն էին: Նրանք վերջնական արտադրանք չէին թողարկում:

Հանրապետության սզգային հարստությունն օգտագործվում էր միութենական խնդիրների լուծման համար: Հայաստանի խոշոր ձեռնարկությունները միութենական սեփականության օբյեկտներ էին, և նա չէր կարող դրանք իր կարիքների համար օգտագործել:

Տնտեսության մեջ երևան եկած դժվարությունները հաղթահարելու, տնտեսության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կուսակցական-խորհրդային բյուրոկրատիան կյանքի կոչեց վարչահրամայական նոր մեթոդներ: Ինչպես ողջ

Միությունում, այնպես էլ Հայաստանում արտադրության տարբեր մակարդակներում աշխատողների նկատմամբ կիրառվեցին բռնություններ, որոնք սակայն ոչ միայն սպասվող արդյունքը չտվեցին, այլև խիստ բացասաբար անդրադարձան հանրապետության աշխատավորության բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

բ) Վարչահրամայական նոր մեթոդներն ու դրանց հետևանքները

Որքան էլ նշանակալից լինեին խորհրդային տնտեսության նվաճումները, որքան էլ շատ կառուցվեին նոր արդյունաբերական ձեռնարկություններ, և որքան էլ ավելանային թողարկվող արտադրանքի ծավալները, այդուհանդերձ, վարչահրամայական համակարգը չափազանց լավ էր ըմբռնում, որ երկիրը ո՛չ ներքին գործերի կոմիսարիատին ենթակա ահռելի աշխատանքային գաղութների վերածելով և ո՛չ էլ ժամանակ առ ժամանակ տնտեսական մեխանիզմի և ինքնուրույնության առանձին մանր լծակների գործադրումով երբեք հնարավոր չէր հասնել տնտեսության արդյունավետությանը:

Նախապատերազմյան տարիներին խորհրդային տնտեսության արդյունավետությունը դրսևորվում էր տարբեր ձևերով: Ամենից առաջ աչքի էին զարնում աշխատանքի արտադրողականության չափազանց ցածր մակարդակը, ժամանակակից տեխնիկայի ու տեխնոլոգիական գործընթացների պակասը: Սրանց հետ մեկտեղ նկատվում էր աշխատող ձեռքերի պակաս մի կողմից, նրանց հոսունությունը՝ մյուս կողմից, և վերջապես անհրաժեշտ արտադրանքն ամեն ճիգով ապահովելու համար բանվորական ուժի ավելցուկի կուտակումը շատ ձեռնարկություններում՝ երրորդ կողմից: Տնտեսության ոչ արդյունավետ լինելու փաստի վկայությունն էր նաև թողարկվող արտադրանքի անորակությունը: Խորհրդային տնտեսությանը բնորոշ էին նաև անարխիան ու խճճվածությունը: Օրինակ, երրորդ հնգամյակի 2,5 տարում արդյունաբերության մեջ հաշվարկված կորուստները հավասար են եղել ամբողջ

արդյունաբերության մեկ և կես ամսվա թողարկած արտադրանքին: Իսկ անկազմակերպվածության ու անարխիայի մասին պերճախոս է միայն այն փաստը, որ մինչև 1940թ. նոյեմբեր ամիսը 8 արդյունաբերական ժողկոմատների ձեռնարկություններում չէին արտադրվել 33 հազար մետաղահատ հաստոցներ, այն դեպքում, երբ ողջ տարվա ընթացքում արտադրվել էր ընդամենը այդպիսի 58 հազար հաստոց[72]: Հարց է առաջանում, արդյոք դա ինքնանպատակ չէ՞ր, կամ արտադրություն չէ՞ր հանուն արտադրության: Վարչաբյուրոկրատական ապարատի ուռճացումը, ռազմականացման ուղին բռնած երկրի ռազմական մեծ ծախսերը առավել ծանրացրին տնտեսության առանց այն էլ անմխիթար վիճակը:

Խորհրդային տնտեսության առջև ծառացած դժվարին, երբեմն անհաղթահարելի թվացող խնդիրները լուծելու համար կար երկու ուղի՝ մեկը տնտեսական լծակների կիրառումն էր, իսկ մյուսը՝ վարչահրամայական մեթոդների գործադրումը: Նախապատվությունն, անշուշտ, տրվեց երկրորդին, որովհետև խորհրդային իշխանության անցած ուղու ընթացքում մեկ անգամ չէ, որ այս մեթոդն իրեն «արդարացրել» էր:

1938թ. Ժողկոմխորհի, ՀամԿ(բ)Կ-ի և ՀԱՄԿԽ-ի որոշման համաձայն աշխատանքային կարգապահությունը կարգավորելու համար սահմանվում էին խիստ միջոցներ: Այն բանվորներն ու ծառայողները, ովքեր մեկ ամսվա ընթացքում երեք անգամ ուշանային աշխատանքից, վերոհիշյալ որոշման համաձայն, ենթակա էին հեռացման: Ձեռնարկություններից ազատված բանվորներն ու ծառայողները զրկվում էին իրենց գերատեսչություններին պատկանող բնակարաններում կամ հանրակացարաններում ապրելու իրավունքից[73]: Այս որոշումը, սակայն, արդյունք չտվեց, և 1940թ. հունիսի 26-ին կյանքի կոչվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագիրը՝ «8-ժամյա բանվորական օրվա, 7-օրյա բանվորական շաբաթվա անցնելու

---

[72] *О.Хлевнюк*, 26 июня 1940г. иллюзии и реальности администрирования, с.87.

[73] Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам, Т.2, с.549 .

և ձեռնարկություններից ու հիմնարկներից բանվորների ու ծառայողների ինքնագլուխ հեռանալը արգելելու մասին» վերնագրով[74]:

Վերոհիշյալ հրամանագրի մեջ առանձնանում էին երեք կարևոր խնդիրներ. առաջին, երկարացվում էր բանվորական աշխատաժամանակը (միջին հաշվով ամիսը 33 ժամ), երկրորդ, նրանք ամրացվում էին իրենց աշխատատեղերին և երրորդ, կարգազանցների համար սահմանվում էին խստագույն պատիժներ:

8-ժամյա աշխատանքային օրվա անցնելու հետ մեկտեղ միութենական կառավարության որոշմամբ բարձրացվեցին արտադրական նորմաները, միաժամանակ իջեցվեցին վարձաչափերը[75]:

Գործալիքը, առանց հարգելի պատճառների, աշխատավայրում պատժվում էր ուղղիչ-աշխատանքներով մինչև վեց ամիս ժամկետով, աշխատավարձի 25 %-ի բռնագանձումով: Ինքնագլուխ աշխատանքից դուրս եկողը ենթակա էր բանտարկության՝ 2-ից 4 ամիս ժամկետով, ընդ որում դատավարությունները իրականացվելու էին անհապաղ: Հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները, իրենց հերթին, լուրջ պատասխանատվություն էին կրում վերոհիշյալ կարգը խախտելու դեպքում:

Հունիսի 26-ին լրագրերում տպագրվեց ՀամԿԽ-ի կոչը՝ ուղղված երկրի բանվորներին, ինժեներներին, տեխնիկներին ու ծառայողներին, որի մեջ, շահարկելով երկրի համար ստեղծված ռազմական սպառնալիքը, կոչ էր արվում ձեռնարկել միջոցներ, որոնք հար ու նման էին հունիսի 26-ին արդեն ընդունված հրամանագրին: Սա, անշուշտ, ժողովրդին նախապատրաստելու նպատակ էր հետապնդում: Շուտով զուտ քարոզչական նպատակներով կյանքի կոչվեցին զանազան այլ միջոցառումներ: Երկրի ու հանրապետության շատ ձեռնարկու-

---

[74] Решения партии и правительства по хозяйственным вопросам. Т.2, с.757.

[75] Постановление пленума ЦК ВКП(б) 31 июля 1940г., "Известия ЦК КПСС", 1990, N2, с.186-187.

թյուններում ու հիմնարկներում տեղի էին ունենում միտինգներ, որոնց մասնակիցները պարտավորվում էին աշխատել 7-8 ժամ, ինչպես նշված էր Գերագույն խորհրդի հրամանագրում:

1940թ. հունիսի 27-ին «Խորհրդային Հայաստան» թերթը տեղեկացնում էր Կիրովի անվան կոմբինատում տեղի ունեցած միտինգի մասին, որին մասնակցում էին 2 հազար աշխատողներ: Ձեռնարկության կուսակցական կազմակերպության քարտուղար Թ.Թադևոսյանն, օրինակ, միտինգում հայտարարեց. «Ինչու՞ կապիտալիստական երկրների բանվորները ուրիշների՝ կապիտալիստների համար կարող են 12 և ավելի ժամ աշխատել, իսկ մենք մեզ համար չենք կարող 7-8 ժամ աշխատել: Մենք կարող ենք և պետք է աշխատենք, որ անառիկ դարձնենք մեր հայրենիքի սահմանները... որ մեծ Ստալինը գոհ լինի մեր աշխատանքից...»[76]:

Հարկավոր էր ամբողջ երկրի մասշտաբով ի ցույց դնել ոչ միայն հայրենիքին ու «մեծ Ստալինին» ժողովրդի անսահման սերն ու նվիրվածությունը, այլև գործի դնել պատժիչ մեխանիզմն իր ողջ ուժով՝ հատկապես մամուլում մեծ տեղ տալով ցուցադրական դատավարություններին:

Հուլիսի 3-ին «Խորհրդային Հայաստանն» արդեն տեղեկացնում էր հուլիսի 2-ին Մոսկվայում գործալիքների, չվողների, արտադրությունը կազմալուծողների նկատմամբ սկսվելիք դատավարությունների վերաբերյալ:

Հանրապետությունում նույնպես հետ չմնացին սոցիալիստական օրինականությունը խախտողներին հայտնաբերելու և պատժելու գործում: Այդ մասին առատ տեղեկություններ են սփռված Հայաստանի մամուլի տարբեր օրգաններում: Վանաձորի քիմիական կոմբինատում երևան էր եկել գործալիքների մի խումբ: Բանվոր Հ.Տեր-Ողորմյանը բացակայել էր աշխատանքից, իսկ Ա.Առաքելյանն ու Լ.Մանուկյանը աշխատանքից բացակայել էին 6 ժամ: Ն.Գորլևեյը ուշացել էր երկու անգամ, Ս.Վարդանյանը բացակայել էր մեկ օր, իսկ Տ.Մանուկյանն ինքնագլուխ լքել էր աշխատանքը: Թերթը ոչ առանց

---

[76] «Խորհրդային Հայաստան», 27 հունիսի 1940թ.:

հպարտության տեղեկացնում էր բոլոր գործալիքների պատժվելու փաստի մասին[77]: Բանվորներից ու ծառայողներից բացի պատասխանատվության էին ենթարկվում նաև ձեռնարկությունների ղեկավարները և արտադրության մյուս կազմակերպիչները:

Անշուշտ, շատերն էին հասկանում, որ գործալքում ծնող հիմնական պատճառները ոչ այնքան գործալիքներն էին, որքան սոցիալական կյանքի բարձիթողը, նախադպրոցական հաստատությունների խիստ պակասը, տրանսպորտային միջոցների անբավարար աշխատանքը, առողջապահական հիմնարկներում ու սպասարկման ոլորտում տեղ գտած թերություններն ու բացերը: Ահա թե ինչու հաճախ շատ ձեռնարկությունների ղեկավարներ ու հիմնարկների պետեր, ելնելով ստեղծված պայմաններից, հաճախ մեղմ էին վերաբերվում կարգազանցներին, որի համար իրենք խստորեն պատժվում էին: Երևանի հացի գործարանի աշխատակից Բ.Զարգարյանն օգոստոսի 5-ին պարապուրդ է տալիս, իսկ տնօրեն Մարտիրոսյանը հաջորդ օրը նրան արձակուրդ է ձևակերպում: Թերթը կշտամբում է նույն գործարանի տնօրենին և կուսակցական կազմակերպության քարտուղարին, ովքեր 1 ժամ 8 րոպե աշխատանքից բացակայած Խ.Գևորգյանին պատժելու փոխարեն բավարարվել են միայն գործերը դատարան ուղարկելով: Ապա գոհունակությամբ նշվում է, որ շրջանային կոմիտեն վերոհիշյալ ղեկավար աշխատողներին կուսակցական տույժեր է տվել: Աշխատանքից հեռացվել և դատական պատասխանատվության է ենթարկվել հացառի տնօրեն Հ.Աթանեսյանը[78]:

Բռնության մեթոդների կիրառումը խիստ բացասաբար էր ազդում ձեռնարկությունների բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Շատերն աշխատում էին բռնություններից հեռու մնալ, շատերին համակում էին անտարբերությունը, ոչնչի համար պատասխանատու չլինելու հոգեբանությունը, լայնորեն տարածվում էին զրպարտչությունը, միմյանց նկատմամբ հաշվեհարդար տեսնելու կիրքը:

---

[77] «Խորհրդային Հայաստան», 14 հուլիսի 1940թ.:

[78] «Խորհրդային Հայաստան», 16 օգոստոսի 1940թ.:

1940թ. հունիսի 26-ի հրամանագիրը չտվեց այն, ինչ ակնկալում էր վարչահրամայական համակարգը: Մայրաքաղաքի ակտիվի ժողովում ելույթ ունենալով՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունյանն իր դժգոհությունն արտահայտեց այդ որոշման իրականացումից: Նրա ասելով՝ հուլիս ամսին գործալքումների թիվը հունիսի համեմատությամբ պակասել էր ընդամենը 33 %-ով: Իսկ մի շարք ձեռնարկություններում (շինանյութերի, կաթի ու մսի արդյունաբերության) արտադրանքի ծավալը նվազել էր: Կենտրոնական կոմիտեի քարտուղարը խստորեն քննադատում էր գործալիքներին հովանավորող ձեռնարկությունների ղեկավարներին, դատախազական և դատական օրգանների աշխատողներին և նրանցից պահանջում խիստ միջոցներ կիրառել[79]:

Հունիսի 26-ի հրամանագրի անարդյունավետությունը բացահայտ էր: Փորձը ցույց էր տալիս հազար անգամ հաստատված այն իրողությունը, որ հարկադրանքն ու բռնության մեթոդները արդարացված չէին: Օրինակ, եթե հիշյալ օրենքի հետևանքով Միության մասշտաբով 1940թ. չորրորդ եռամսյակում գործալքումները 1939թ. նույն ժամանակամիջոցի համեմատությամբ նվազեցին ավելի քան երեք անգամ, որը հավասար էր արդյունաբերության մեջ կես միլիոն աշխատող նոր ձեռքեր ընդգրկելուն, արդյունքն ավելի քան համեստ էր: 1939թ. չորրորդ եռամսյակում արդյունաբերական արտադրանքի աճը կազմել էր 14,7 %, իսկ 1940թ. նույն ժամանակամիջոցում՝ 11 %[80]:

Վարչահրամայական մեքենան զգում էր իր կիրառած մեթոդների ոչ արդյունավետ լինելը: Այդ նպատակով հրավիրվեց հատուկ պլենում, որն անդրադարձավ 1940թ. հունիսի 26-ի հրամանագրին: Հիշյալ հրամանագրի ոգուն համապատասխան փոփոխության ենթարկվեցին արտադրական ձեռնարկությունների ներքին կարգապահության կանոնները, վերանայվեցին աշխատանքային և քրեական օրենսդրության առանձին

---

[79] «Խորհրդային Հայաստան», 18 օգոստոսի 1940թ.:

[80] *О.Хлевнюк*. 26 июня 1940 г. иллюзии и реальности администрирования, с.94.

հոդվածները: Ընդսմին ձեռնարկությունների ղեկավարներից պահանջում էին թեկուզև բռնությունների միջոցով ապահովել կարգապահության հաստատումը[81]:

Տնտեսության դժվարին խնդիրներից մեկն արտադրանքի որակն էր, որ հաղթահարելու համար հավատարիմ մնալով հին սկզբունքներին, կրկին դիմեցին արտակարգ միջոցների, և կյանքի կոչվեց մի նոր հրամանագիր: 1940թ. հուլիսի 10-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով վատորակ և ոչ լրակազմ արտադրանք տալն ու ստանդարտներին չհամապատասխանելը հակապետական հանցագործություն էր դիտվում և համարվում էր վնասարարություն:

Հիշյալ հրամանագիրն իր սուր ծայրով ուղղված էր ձեռնարկությունների տնօրենների, ինժեներների, տեխնիկական վերահսկողության բաժինների պետերի դեմ: Շուտով երկրով մեկ ծավալվեց բռնությունների նոր ալիք, որին զոհ գնացին այս անգամ արդեն բոլոր օղակների արտադրության կազմակերպիչները:

---

[81] Постановление пленума ЦК ВКП(б) 31 июля 1940г., "Известия ЦК КПСС", 1990, N2, с.188.

Գ Լ Ո Ւ Խ Բ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ա) Հանրապետության արդյունաբերության վերակառուցումը

Հայտնի է, որ ԽՍՀՄ կառավարությունը վերահաս պատերազմի սպառնալիքի պայմաններում նախապես չէր մշակել երկրի տնտեսությունը ռազմական ռելսերի վրա դնելու միասնական ծրագիր: Այդ ծրագիրը փաստորեն մշակվեց պատերազմի ընթացքում և այն էլ հաջորդական մի քանի պլանների շնորհիվ: Այսպես, պատերազմի սկսվելուց մեկ օր անց՝ 1941թ. հունիսի 23-ին գործողության մեջ մտավ մոբիլիզացիոն պլանը, որը մշակվել էր դրանից ընդամենը երկու շաբաթ առաջ և չէր նախատեսում երկրի ռազմատնտեսական ներուժի այնպիսի վերակառուցում, որի շնորհիվ հնարավոր լիներ գերազանցության հասնել Գերմանիայի նկատմամբ: Ահա թե ինչու հունիսի 30-ին հաստատվեց 1941թ. երրորդ եռամսյակի ժողովրդատնտեսական մոբիլիզացիոն նոր պլանը, որը, սակայն, ևս բավարար չէր լուծելու երկրի առջև ծառացած ռազմատնտեսական խնդիրները, և մեկ ուրիշ պլանի կազմումը ժամանակի հրատապ պահանջը դարձավ:

1941թ. օգոստոսի 16-ին ՀԱՄԿ(բ)Կ ԿԿ-ն և ԽՍՀՄ ժողկոմխորհը հաստատեցին Պովոլժիեի, Ուրալի, Արևմտյան Սիբիրի, Ղազախստանի և Միջին Ասիայի՝ 1941թ. չորրորդ եռամսյակի և 1942թ. ռազմատնտեսական պլանը:

Ըստ այդ պլանի՝ վերը նշված շրջանները դառնում էին ԽՍՀՄ-ի ռազմական արդյունաբերության կարևորագույն բազաները: Այնտեղ էին տեղափոխվում երկրի եվրոպական շրջանների արտադրական ձեռնարկությունները, որոնք վերամասնագիտացվում էին ռազմական արտադրության համար: Նախատեսվում էր ոչ միայն մարտական տեխնիկայի, ռազմա-

մթերքի ու գինամթերքի շեշտակի աճ, այլև սև ու գունավոր մետաղների, գլանվածքի, վառելանյութերի, հանքաքարի, էներգիայի, քիմիական, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքի ընդլայնում, տրանսպորտային հաղորդակցության ընդարձակում և այլն[82]:

Թշնամու նկատմամբ գերազանցության հասնելու համար անհրաժեշտ էր վերակառուցել ոչ միայն տնտեսությունը, այլև վերափոխել հասարակական-պետական կառավարման համակարգը:

1941թ. հունիսի 30-ին ստեղծվեց պաշտպանության պետական կոմիտեն, որը գլխավորեց Ի.Վ.Ստալինը: Այն իր ձեռքում կենտրոնացրեց երկրի ողջ իշխանությունը: Անհրաժեշտության դեպքում այդ կոմիտեին կից ստեղծվում էին տարբեր հանձնաժողովներ, կոմիտեներ, բյուրոներ և այլն: Պաշտպանության պետական կոմիտեն տեղերում ուներ իր ներկայացուցիչները: Ժողովրդական տնտեսության վերակառուցումն ընթանում էր պետական ապարատի և այլ հաստատությունների հաստիքները կրճատելու ուղիով:

Հանրապետության ժողովրդական տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու հետ վերակառուցվեցին նաև կուսսկցական, խորհրդային ու կառավարման մարմինների աշխատանքները:

Դեռևս մինչև պատերազմի սկիզբը ՀամԿ(բ)Կ 18-րդ կուսակցական կոնֆերանսի որոշմամբ ստեղծվեց տեղական կուսակցական կազմակերպությունների ճյուղային քարտուղարների ինստիտուտը: Պատերազմի ժամանակ ուռճացվեց հանրապետության կուսակցական կազմակերպության ապարատը: Կենտկոմում երևան եկան նոր բաժիններ քիմիական, պղնձահանքային արդյունաբերության և էլեկտրակայանների: Սրանք ավելացան նախկինում գործող արդյունաբերության բաժնի կողքին: Կենտրոնական կոմիտեի ապարատի այս ուռճացումը բացատրվել է «ժողովրդական տնտեսության նկատմամբ կուսակցական ղեկավարության ուժեղացմամբ, որը համառորեն

[82] Советский Союз в годы Великой Отечественной войны., с.83

թելադրվում էր պատերազմի բարդ պայմանների և առաջ եկած մասշտաբային խնդիրների հետևանքով»[83]: Դժվար չէ նշմարել տվյալ ժամանակաշրջանում առկա և տրամագծորեն միմյանց հակադիր երկու միտում՝ մի կողմից պետական ապարատի կրճատում, մյուս կողմից՝ կուսակցական ապարատի ուռճացում:

ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղարը՝ Գ.Հարությունյանը, միաժամանակ Անդրկովկասի ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ էր, երկրորդ քարտուղարը՝ Ս.Միքայելյանը, որը ղեկավարում էր հանրապետության արդյունաբերությունը, նաև կարմիր բանակին տաք հագուստ հանգանակող հանձնաժողովի նախագահն էր:

Արդյունաբերական կարևոր նշանակություն ունեցող ձեռնարկություններում (Կիրովի անվան կոմբինատ, Գյումրիի տեքստիլ կոմբինատ, Քանաքեռհէկ) ընդլայնվեցին ՀամԿ(բ) կուսկազմակերպիչների իրավունքները:

ՀԽՍՀ ժողկոմխորհին կից ստեղծվեց ժողկոմխորհի լիազորություններով օժտված պետական կարգադրիչ մարմին՝ «Փոքր ժողկոմխորհի նիստ», որը ղեկավարում և կոորդինացնում էր հանրապետության ռազմական տնտեսության աշխատանքները: «Փոքր ժողկոմխորհի նիստի» կազմի մեջ էին մտնում ժողկոմխորհի նախագահը (Ա.Փիրուզյան), նրա տեղակալը (Գ.Չոլախյան), նիստի քարտուղարը (Գ.Դովլաթյան), Անդրկովկասի ռազմաճակատի մատակարարման վարչության ներկայացուցիչը (Վլասով), Հանրապետության պետպլանի նախագահը (Բ.Աստվածատրյան), տեղարդ ժողկոմը (Լ.Խաչատրյան), հանրապետության զինկոմը (Ասատրյան) և ուրիշներ:

Ստեղծվեց հանրապետության կառավարության նախագահի տեղակալի նոր պաշտոն, որը միաժամանակ ռազմաճակատի թիկունքի գծով պետի տեղակալն էր: Այդ պաշտոնում նշանակվեց Ռ.Ազիզբեկյանը:

Հանրապետության ժողովրդական տնտեսությունը

---

[83] *В.Мурадян*, Компартия Армении в годы Великой Отечественной войны, с.59.

պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցելու գործում էական նշանակություն ունեցավ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 9-րդ պլենումը, որը տեղի ունեցավ 1941թ. նոյեմբերի 20-ին: Պլենումը խնդիր էր դնում ամբողջովին անցնելու ռազմական պատվերների կատարմանը: Առանձնապես շեշտվում էր ռազմավարական հումք՝ պղինձ, կաուչուկ, կարբիդ, երկաթի սիլիցիում թողարկող ձեռնարկությունների արտադրությունները ընդլայնելու, պլանների գերակատարումը ապահովելու անհրաժեշտությունը:

Տրանսպորտի աշխատողներին հանձնարարվում էր կտրուկ կերպով բարելավել ռազմական բեռնափոխադրումների աշխատանքները: Գիտահետազոտական հաստատությունների պլաններում արտացոլվելու էին պաշտպանական նշանակություն ունեցող խնդիրները[84]:

Այս խնդիրներն իրագործելու համար կյանքի էր կոչվել տարբեր մակարդակների վերահսկիչների լայն ցանց: Ժողովրդական կոմիսարները և ձեռնարկությունների ղեկավարներն անձնական պատասխանատվություն էին կրում ռազմական պատվերները ժամանակին ու որակով կատարելու համար: Հայաստանի ժողկոմխորհը իր հերթին պիտի վերահսկեր ժողկոմների, ձեռնարկությունների ղեկավարների և շրջխորհուրդների նախագահների աշխատանքն ու գործունեությունը: Սրանից բացի կար նաև պետական հսկողության ժողկոմ, որը պետք է հսկեր ռազմական պատվերների կատարումը և պարբերաբար այդ հարցերը բարձրացներ կուսակցական, խորհրդային ղեկավար օրգաններում: Վերջապես ռազմական պատվերներ կատարող ձեռնարկությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունները կոչված էին ուժեղացնել հսկողությունն այդ ուղղությամբ, հաճախակի լսել նրանց ղեկավարների հաշվետվությունները:

Հայրենական մեծ պատերազմը փոխեց հանրապետության ժողովրդական տնտեսության համամասնությունը: Եթե մինչև պատերազմը Հայաստանի ժողովրդական տնտե-

---

[84] Советская Армения, с.101-103.

սությունը հիմնականում տալիս էր քաղաքացիական արտադրանք, այժմ դրվում էր ռազմական արտադրանք թողարկելու հարցը: Պետք է նշել, որ դրա իրականացման համար հանրապետությունում կային անհրաժեշտ նախապայմաններ, որոնցից հիմնականը բազմաճյուղ արդյունաբերությունն էր:

Հայաստանի ռազմական արդյունաբերության ստեղծումը հիմնականում կախված էր ծանր արդյունաբերությունից, որի տարբեր ճյուղերը զարգացման տարբեր մակարդակների վրա էին գտնվում:

Ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը քիմիական արդյունաբերությունն էր, որը ԽՍՀՄ-ի խոշոր արտադրություններից էր և հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի 16,3 %-ն էր կազմում՝ (1938թ.)՝ զիջելով սննդի ու թեթև արդյունաբերությանը[85]:

Ծանր արդյունաբերության մյուս կարևոր ճյուղը էլեկտրաէներգիայի արդյունաբերությունն էր, որին բնորոշ էին զարգացման բուռն տեմպերը: 1940թ. Հայաստանում արտադրվել էր 395.3 միլիոն կվտժամ էլեկտրաէներգիա[86]: Այս ճյուղը տալիս էր ծանր արդյունաբերության համախառն արտադրանքի 7,6 %-ը[87]:

Հանրապետությունում զգալի էր նաև մեքենաշինական ու մետաղամշակման արդյունաբերության դերը: Հիշյալ ճյուղը թեև նախապատերազմյան տարիներին վերակառուցվեց, բայց արդյունաբերության մեջ իբրև ինքնուրույն ճյուղ դեռևս չէր ձևավորվել և տալիս էր համախառն արտադրանքի 4,9 %-ը:

Ծանր ինդուստրիայի ճյուղերից էր պղնձարդյունաբերությունը, որը նախապատերազմյան տարիներին տալիս էր հանրապետության համախառն արտադրանքի 4,2 %-ը[88]:

Հանրապետության տնտեսությունը պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցելու գործում անհրաժեշտ էր հաղթահարել մի շարք դժվարություններ:

---

[85] Социалистическое строительство, с.28.

[86] Народное хозяйство Армянской ССР. Е., 1957, с.30.

[87] Социалистическое строительство, с.28.

[88] Նույն տեղում:

Համընդհանուր մոբիլիզացիայի հետևանքով ռազմաճակատ էին մեկնել հազարավոր որակյալ բանվորներ ու ինժեներատեխնիկական աշխատողներ: Եթե պատերազմի սկզբում հանրապետության բանվորների թիվը 155,7 հազար էր, ապա հոկտեմբերից այդ թիվը հասավ 123,1 հազարի: Այսինքն՝ աշխատող ձեռքերի թիվը կրճատվեց 32,6 հազարով: 1942թ. 1941թ. համեմատությամբ հանրապետության բանվորների թիվը կրճատվեց 26 %-ով, միութենականի 60 %-ի[89] դիմաց: Հետագայում թեև մի շարք քայլեր ձեռնարկվեցին աշխատուժը վերականգնելու համար, սակայն բանվորների թվի նվազումը բացասաբար անդրադարձավ տնտեսության վրա:

Լուրջ վնասներ էր կրել ժողովրդական տնտեսության նյութատեխնիկական բազան: Ռազմաճակատ էին տարվել արդյունաբերական ձեռնարկությունների տրանսպորտային միջոցները: Պատերազմի սկզբից հանրապետությունը ռազմաճակատին տրամադրեց ավելի քան 1000 սվտոմեքենա: Հայաստանը տրանսպորտի և քաշող տեխնիկայի այլ միջոցների գծով մոբիլիզացիոն պլանը կատարեց 100-103 %-ով[90]:

Փոխվեց հանրապետության և երկրի տարբեր շրջանների միջև եղած աշխատանքի բաժանման համակարգը: Խզվեցին Հայաստանի հետ ունեցած տնտեսական այն շրջանների կապերը, որոնք գրավվել էին թշնամու կողմից: Հանրապետությունն այդ շրջաններից չէր ստանում հումք, վառելիք և սարքավորումներ: Դրությունը խիստ բարդացավ հատկապես 1942թ., երբ դադարեց Դոնբասից կոքսի ստացումը: Օրվա հրամայական պահանջ էր դարձել առավելագույն չափով օգտագործել հանրապետության բնական ու նյութական պաշարները, հայթայթել նյութերի ու հումքի նոր տեսակներ, խնայողաբար օգտագործել դրանք, նոր կապեր հաստատել ոչ միայն տարածաշրջանում, հանրապետությունում, այլև տվյալ շրջանում, քաղաքում և նույնիսկ արտադրական միևնույն ձեռնար-

---

[89] *Հ.Հարությունյան,* Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, էջ 33:

[90] «Հայաստանի կոմունիստական կուսակցության որոշումներ», Ե., 1963, էջ 523:

կությունում: Տարածաշրջանային տնտեսական նոր կապերի ստեղծման օրինակ է Վրաստանից ստացված քարածուխը, որը փոխարինեց Ուկրաինայից ստացվող կոքսին ու քարածխին: 1942թ. Հայաստանը սպառել է 180 հազար տոննա քարածուխ, որից 137 հազար տոննան ստացվել է Տկվիրբուլիից, 22 հազար տոննան՝ Տկվարչելիից[91]:

Հայաստանը Վրաստանից և Ադրբեջանից սկսեց ստանալ երկաթ և պողպատ: Վառելիքաէներգետիկ հումքի պակասը լրացնելու համար գործի դրվեցին հանրապետության ներքին ռեզերվները: Հարկ եղավ կազմակերպել ու ընդլայնել տեղական ածխի և տորֆի հանույթը: Խնդիր դրվեց ձեռնամուխ լինել վառելափայտի, եղեգի, բամբակի ցողունների և խաղողի վազերի մթերմանը: Վառելանյութի վերջին տեսակները վաղուց չէին օգտագործվում, և միայն հանրապետության ջերմամատակարարման բազայի ծայրահեղ սրվածությունն էր հարկադրում նման քայլերի դիմելու:

Ջաջուռում կազմակերպվեց գորշ ածխի հանույթը՝ տարեկան 6 հազար տոննա[92]: Ընդարձակվեց տորֆի հանույթը Կալինինոյի (այժմ՝ Տաշիր) և Բասարգեչարի (այժմ՝ Վարդենիս) շրջաններում՝ տարեկան 22 հազար տոննա[93]: Վանաձորում, Ստեփանավանում, Սևանում, Ամասիայում, Սպիտակում և Գյումրիի մերձակայքում նաև ձեռնարկվեցին տորֆի հանույթի աշխատանքներ:

Վառելիքային պաշարներ հայթայթելու գործում կային բազմաթիվ դժվարություններ: Ծանր էին աշխատանքային պայմանները, արտադրության գործընթացներն իրականացվում էին ձեռքի աշխատանքով, չկային չորանոցներ, սուղ էին փոխադրամիջոցները, չկային բանվորական կացարաններ: Ցրտաշունչ ձմռան պայմաններում շատ վայրերում աշխատանքները դադարում էին, հաճախ էլ ընկնում էր արտադրանքի որակը, և այն չէր հասնում սպառողին:

Պատերազմի պահանջներին համապատասխան հանրա-

---

[91] «Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 91:

[92] Советская Армения, с. 310.

[93] «Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 91:

պետության արդյունաբերության վերակառուցման և հատկապես զենքի ու զինամթերքի արտադրության գործում նույնպես լուրջ դժվարություններ կային: Հայաստանը մինչև պատերազմը չէր մասնագիտացել այդ արտադրությունների ասպարեզում, չկային այդ բնագավառի որակյալ բանվորներ ու ինժեներատեխնիկական աշխատողներ: Ձեռնարկություններում անհրաժեշտ էր կազմակերպել արտադրական նոր գործընթացներ, արտադրությունը վերազինել նոր սարքերով ու հարմարանքներով: Պատերազմի սկզբից զգացվում էր մետաղների, գլանվածքի և այլ նյութերի պակաս:

Այս ամենով հանդերձ Հայաստանի ժողովրդական տնտեսությունը սկսեց ռազմաճակատի կարիքները բավարարող արտադրանքի թողարկումը: Հայաստանը հիմնականում կատարում էր անդրկովկասյան ռազմաճակատի պատվերները:

1941թ. նոյեմբերին անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը, ելնելով իր զորքերի սպառազինության անբավարարությունից (պակասում էին ձեռքի, հաստոցավոր գնդացիրներ և 120 մմ ականանետներ), որոշեց Անդրկովկասի գործարաններում պատվիրել այդ զենքերին մասնակիորեն փոխարինող հետևյալ զենքերը

ա) 7,62 մմ ավտոմատ (25 հազար հատ),

բ) 50 մմ վաշտային ականանետ (3 հազար հատ),

գ) 82 մմ գումարտակային ականանետներ (2900 հատ):

Միաժամանակ առաջարկվում էր Անդրկովկասի հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին մեկ ամսվա ընթացքում յուրացնել

50 և 82 մմ ականների, 45 մմ հակատանկային, 76 մմ լեռնային հրանոթի արկերի, ձեռքի հակահետևակային նռնակների, հրացանների և ատրճանակի փամփուշտների արտադրությունը[94]:

Զենքի ու զինամթերքի արտադրության գործում Հայաստանում մեծ բաժինն ընկնում էր Երևանի հաստոցաշինական գործարանին: Գործարանը Հայաստանի մեքենաշինական հնա-

---

[94] Советская Армения, с. 99-100.

գույն ձեռնարկություններից էր, նրա հաստոցներն ու սարքավորումները հին էին ու բազմատեսակ: Ցածր էր դրանց արտադրողականությունը: Անհրաժեշտ էր լրացուցիչ միջոցների ձեռնարկումով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Իրոք, գործարանում ձեռքով կատարվող մի շարք ծանր աշխատանքները մեքենայացվեցին, ապահովվեց արտադրանքի անընդմեջ թողարկումը, կրճատվեց խոտանը: Քարածխի պակասը հարկադրեց ստեղծել հեղուկ վառելանյութով աշխատող հատուկ հնոց, որի արտադրանքն առավել որակյալ էր: Կազմակերպվեց նաև ճշգրիտ չափիչ սարքերի ու գործիքների արտադրությունը[95]: Ձենք ու զինամթերք էին արտադրում նաև Երևանի կարբիդի գործարանը, Կիրովի անվան քիմիական կոմբինատը, Երևանի մեխանիկական գործարանը, Երքաղարդ կոմբինատը, Գյումրիի մետաքսի կոմբինատը, մեխանիկական գործարանը, Վանաձորի քիմիական, Ալավերդու պղնձաձուլական կոմբինատները, Արզնու հանքային ջրերի գործարանի մեխանիկական արհեստանոցը և այլ ձեռնարկություններ:

Ձենքի ու զինամթերքի սուր պահանջը հարկադրում էր միութենական կառավարությանը լրացուցիչ միջոցներ փնտրել դրանց արտադրությունն ընդլայնելու ուղղությամբ: Հայաստանի կառավարությանը հանձնարարվել էր ուսումնասիրել հանրապետության ունեցած հնարավորությունները:

ՀԽՍՀ ժողկոմխորհի հաշվարկներով Հայաստանն ամսական ի վիճակի էր արտադրել 20 հազար հրկիզիչ ավիառումբի պատյան, 21 հազար 50 մմ ականի պատյան, 26 հազար ձեռքի նռնակ: Այնուհետև նշվում էր անհրաժեշտ սարքերի առկայության դեպքում 502 մմ ականների պատյանների արտադրության մեծացման հնարավորությունը[96]: Այս փաստերը ցույց են տալիս, որ հանրապետության մեքենաշինական ձեռնարկություններն իրենց ողջ կարողությունները գործի էին դրել ռազմաճակատի պատվերները կատարելու համար:

---

[95] *Կ.Կոզմոյան*, Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, էջ 37-40:

[96] Советская Армения, с. 111-112.

Պատերազմի սկզբում ԽՍՀՄ-ի զինված ուժերը սպառազինությամբ զիջում էին հակառակորդին: Դեռևս արտադրվում էին հրաձգային զենքի որոշ տեսակներ 1891/1930 թթ. նմուշի հրացաններ, 1891/1930 թթ. նմուշի նշանառու հրացաններ, 1895թ. նմուշի ատրճանակներ[97]: Պատերազմի սկզբից զգացվեց զրահարար հրաձգային զենքերի պակաս: Այս նպատակով սկսեցին օգտագործել նույնիսկ դյուրավառ խառնուրդով շշեր[98]:

1941թ. նոյեմբերին հանրապետության ժողկոմխորհը միջոցներ ձեռնարկեց սովպրեն գործարանում դյուրավառ խառնուրդով շշերի արտադրությունը կազմակերպելու համար[99]:

Վերը նշված միջոցառումների շնորհիվ 1941թ. երկրորդ կեսին հանրապետությունում արտադրվեց ընդամենը երեք նմուշի զինամթերք: Դրանք էին՝ հրկիզիչ ավիառումբի, հակատանկային և հակահետևակային ականների պատյաններ՝ համապատասխանաբար 110,50 և 103,5 հազար հատ[100]: 1941թ. ընդհանուր արտադրանքի քանակը հասավ 263,5 հազարի:

Զենքի ու զինամթերքի մյուս տեսակների արտադրությանը հանրապետությունը ձեռնամուխ եղավ 1942թ.: 1942թ. զինամթերքի արտադրության բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ պատերազմի ողջ պատմության մեջ նրա տեսակներին ամենաբարձրը եղավ և կազմեց 12 անուն 538,2 հազար ընդհանուր քանակով[101]:

Արտադրվող զինամթերքի հիմնական տեսակներն էին ավիառումբերի, հակատանկային, հակահետևակային տարբեր տիպերի ականների պատյաններն ու պայթուցիկները: Նույն թվականին թողարկվեց զենքի մեկ տեսակ՝ 55 մմ արկերի պատյաններ՝ պահեստամասերով և գործիքներով[102]:

---

[97] *Г.С.Кравченко*, Экономика СССР в годы Великой Отечественной войны, с. 188.

[98] Советская Армения, с. 189.

[99] Նույն տեղում, էջ 100,101:

[100] Նույն տեղում, էջ 327, 328:

[101] Նույն տեղում:

[102] Советская Армения, с. 327-328.

1943թ. արտադրվել էր զինամթերքի 6 տեսակ, որոնցից 3-ի արտադրությունն առաջին անգամ էր իրականացել: Այդ տարվա զինամթերքի արտադրության առանձնահատկությունն այն է, որ նախորդ տարվա համապատասխան նմուշների համեմատ արտադրանքի քանակը աճել էր, մինչդեռ արտադրանքի ընդհանուր քանակը նվազել և կազմել էր 483,2 հազար հատ[103]:

1944թ. թողարկվել էր 4 նմուշի զինամթերք, նոր արտադրանք չէր թողարկվել: Կրճատվել էր թե՛ արտադրության տեսականին և թե՛ քանակը: Այդ տարի արտադրված զինամթերքի քանակը հասել էր 91,9 հազարի[104]: Հայաստանի զինամթերքի և զենքի արտադրության տեսականին և քանակը ըստ տարիների հետևյալ պատկերն ունի.

1941թ. 3 տեսակ 263,5 հազար հատ,

1942թ. 12 տեսակ 538,2 հազար հատ,

գումարած 428 լրակազմ զենքի մեկ տեսակ,

1943թ. 6 տեսակ 483,2 հազար հատ,

1944թ. 4 տեսակ 91,9 հազար հատ:

Այսպիսով, պատերազմի երեք տարիները զենքի ու զինամթերքի արտադրության տեսակետից եղել են լարված: Եթե 1942-1943թթ. լարվածությունն ու դժվարությունները պայմանավորված էին արտադրանքի քանակի աճով, ապա 1941թ. նաև այն բանով, որ առաջին անգամ էին ձեռնամուխ լինում այդպիսի արտադրանք թողարկելու գործին:

Պետք է նկատել, որ զենքի ու զինամթերքի պլանավորման և արտադրության կազմակերպման գործում կային լուրջ թերություններ ու բացթողումներ: Հաճախ նախատեսված ռազմամթերքի մեկ մասն էր միայն արտադրվում: Զինամթերքը չէր արտադրվում նախապես մշակված ժամկետացանկերի համաձայն, դրանք հաճախ խախտվում էին:

Հանրապետության արդյունաբերությունը ռազմաճակատի պահանջները բավարարելու համար ձեռնամուխ էր եղել նաև գումակային գույքի, հրետանային ծառայության գույքի,

---

[103] Նույն տեղում:

[104] Նույն տեղում:

կապի գույքի և իրերի, հակաքիմիական, հրշեջ, քողարկման և հակաօդային պաշտպանության իրերի, ինժեներային ծառայության գույքերի արտադրությանը:

Ռազմաճակատի համար նշված իրերի և գույքի արտադրության համար Հայաստանում ամենից ծանրաբեռնվածը եղել է 1941թ. երկրորդ կեսը և 1942թ., իսկ 1943թ. արտադրանքի այդ տեսակների թողարկումը կամ խիստ կրճատվել էր, կամ դադարեցվել:

Բացի վերը հիշատակված արտադրանքից հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները ռազմաճակատին մատակարարում էին նաև հագուստ, հանդերձանք, գործվածք ու գույք: Եվ եթե զենքի ու զինամթերքի արտադրության ասպարեզում հանրապետության արդյունքները չափազանց համեստ էին, ապա հանդերձանքի ու գույքի տեսականու ու ծավալի գծով Հայաստանը աչքի էր ընկնում: Հանրապետության արդյունաբերությունը բանակի համար արտադրում էր զինվորական հագուստի ու գույքի ամենահիմնական՝ թվով 53 տեսակները[105]:

Արտադրված զինվորական հագուստի ու գույքի 53 արտադրատեսակներից կարևոր էին շինելները (246,2 հազար հատ), կիսամուշտակները (40 հազար հատ), բաճկոնները (39,6 հազար հատ), բամբակյա բաճկոնները (18,9 հազար հատ), կիսակոշիկները (155 հազար զույգ), մեծ քանակությամբ սպիտակեղեն (61,516 հազար մետր գործվածք) և գույքի զանազան տեսակներ, որոնց զգալի մասը Հայաստանում արտադրվել է ամբողջ պատերազմի ընթացքում:

Զինամթերքից ու ռազմական հանդերձանքից զատ, առավել ծանրակշիռ էին արդյունաբերության այն ճյուղերի դերն ու նշանակությունը, որոնք թողարկում էին ռազմավարական նշանակություն ունեցող հումք: Այս տեսակետից առաջնակարգ էր քիմիական արդյունաբերությունը: Այդ ճյուղի արտադրանքի որոշ տեսակների՝ սինթետիկ կաուչուկի, կալցիումի կարբիդի արտադրությամբ հանրապետությունը նա-

---

[105] Советская Армения, с. 332-334.

խապատերազմյան ժամանակաշրջանում առաջատար տեղ էր գրավում երկրի մասշտաբով: Քիմիական արդյունաբերությունը կենտրոնացված էր Երևանում, Վանաձորում և Ալավերդիում: Պատերազմի սկզբում Դոնբասի քիմիական ձեռնարկությունների կորստից, Մոսկվայի, Լենինգրադի ու երկրի այլ շրջանների ձեռնարկությունների էվակուացումով խիստ կրճատվեց քիմիական արտադրանքի թողարկումը: Դեպի արևելք էվակուացված քիմիական արդյունաբերության ձեռնարկություններից ու արտադրամասերից տեղ հասան միայն 8-ը, որոնք թողարկեցին կեսից պակաս արտադրանք[106]: Ահա թե ինչու նշված ժամանակաշրջանում առավել մեծացավ թիկունքի ձեռնարկությունների նշանակությունը:

Հայաստանի քիմիական արդյունաբերության հիմնական արտադրատեսակները ռազմական նշանակության առաջնակարգ հումք էին: Նավթավերամշակման և օճառի արդյունաբերության համար բացառիկ նշանակություն ուներ կաուստիկ սոդան: Առանց դրա անհնար էր ստանալ բարձրորակ ավիացիոն բենզին և տանկային վառելիք: Բաքվի նավթարդյունաբերությունը, որը պատերազմի տարիներին Խորհրդային Միության նավթի արտադրության հիմնական բազան էր, մեծ մասամբ օգտագործում էր Հայաստանի ձեռնարկությունների արտադրած կաուստիկ սոդան:

Հանրապետության քիմիական արտադրության կարևորագույն տեսակներից էր սինթետիկ կաուչուկը, որի սղությունը խիստ զգալի էր: Վերջապես դժվար էր գերագնահատել կալցիումի կարբիդի դերն ու նշանակությունը, որի արտադրությամբ դեռևս մինչև պատերազմը Հայաստանը առաջատար տեղ էր գրավում՝ տալով Խորհրդային Միության կարբիդի արտադրանքի մոտավորապես 64 %-ը[107]:

Պատերազմի տարիներին Հայաստանը տարեկան արտադրում էր 90 հազար տոննա կարբիդ: Բացի պատվիրա-

---

[106] *Я.Е.Чадаев*, Экономика СССР в период Великой Отечественной войны, с 92.

[107] *Պ.Ոսկերչյան*, Խորհրդային Հայաստանի արդյունաբերությունը 1920-1940թթ., Ե., 1966, էջ 73:

տուներին կանոնավոր կերպով առաքվող արտադրանքից, հաճախ հարկ էր լինում լրացուցիչ առաքումներ կատարել:

Քիմիական արդյունաբերության՝ պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցումը ընթացավ մի կողմից եղած արտադրական կարողությունների ընդլայնումով, իսկ մյուս կողմից՝ նոր արտադրությունների յուրացումով: Ճյուղի նման տիպի վերափոխությունը բխում էր 1942թ. հունվարին հանրապետության քիմիական արդյունաբերության առաջատար Կիրովի անվան Երևանի քիմիական գործարանի առջև պաշտպանության պետական կոմիտեի դրած խնդիրներից: Պահանջվում էր ոչ միայն ընդլայնել կաուչուկի, կաուստիկ սոդայի, կալցիումի կարբիդի արտադրանքի ծավալը, այլև տալ նորերը՝ կարբինոլիդ, նոր տեսակի սոսինձ, հեղուկ քլոր, ռետինատեխնիկական իրեր, լաքեր, հակատանկային հեղուկ վառելիք և այլն: Նոր արտադրատեսակներ թողարկելու հանձնարարականներ ստացավ նաև Վանաձորի քիմիական գործարանը, որի հիմնական արտադրանքի տեսակներն էին ցիանամիդ կալցիումը, կալցիումի կարբիդը, քացախաթթուն, ցիանադին ծուլվածքը: Երևանի կարբիդի գործարանի արտադրության տեսականու մեջ մտավ պլաստմասսան:

Քիմիական արդյունաբերության արտադրական կարողությունները նորոգվեցին և ընդարձակվեցին, շահագործման հանձնվեցին նորերը: Կիրովի անվան գործարանում սկսվեց կարբոնալի ու հեղուկ քլորի արտադրամասերի կառուցումը: Ռետինատեխնիկական արտադրությունը զարգացնելու նպատակով կառուցվեց արդտեխնիկա գործարանը, ընդարձակվեցին Վանաձորի քիմիական գործարանի կարողությունները:

Այդուհանդերձ, Երևանի Կիրովի անվան քիմիական գործարանը, որը հանրապետության քիմիական ձեռնարկություններից ամենամեծն էր, լուրջ դժվարությունների առաջ էր կանգնել: Ստորև ներկայացնում ենք գործարանի արտադրական ցուցանիշները 1941թ. առաջին և երկրորդ կիսամյակներում[108]:

---

[108] ՀԱԱ. ֆ.1, ց.22, գ.4, թ.64-65:

Արտադրանքի տեսակը	չափի միավ.	առաջին կիսամյակ			երկրորդ կիսամյակ			II կիսամյակում I-ի համեմատությամբ կատարված %-ային հարաբերությամբ
		պլանը	փաստացի կատ.	%	պլանը	փաստացի կատ.	%	
Կաուչուկ	տոննա	2300	1422,7	61,8	3000	1698,3	47,3	119,4
Կալցիումի - կարբիդ	,,	3180	21200,8	85,5	340000	23442,2	68,9	86,1
Կաուստիկ - սոդա	,,	3800	3163,6	82,3	4750	3213,0	67,6	101,6
Աղաթթու	,,	1390	1324,3	95,3	1580	949,5	60,1	71,7
Պոլիքլորիդներ	,,	600	714,4	119,9	204	276,7	135,6	38,5

Բերված տվյալներից երևում է, որ գործարանը բացի պոլիքլորիդներից 1941թ. պլանները թերակատարել էր: Պլանների կատարման վիճակը բարվոք չէր նաև 1942թ.: Նշված ժամանակաշրջանում կաուչուկի արտադրության պլանը կատարվել էր 65, կալցիումի կարբիդինը՝ 60, կաուստիկ սոդայինը՝ 80 %-ով[109]:

Ռազմաճակատին անհրաժեշտ էին նաև գունավոր մետաղներ ու հատկապես պղինձ: Այս կարևոր հումքի արտադրությունը նախապատերազմյան տարիներին ինտենսիվորեն չզարգացավ, և նրա համախառն արտադրանքը միայն 1940թ. հասավ և գերազանցեց 1913թ. մակարդակը[110]: Հայաստանում պղնձի արտադրությունը կենտրոնացված էր Ալավերդիում և Կապանում: Կապանում գործում էր պղնձահանքային կոմբինատը հարստացուցիչ ֆաբրիկայի հետ, իսկ Ալավերդիում՝ հանքվարչությունը և պղնձաձուլական գործարանը: Կապանից

[109] ՀԱԱ, ֆ.1, ց.23, գ. 26, թ.26:

[110] *Պ.Ոսկերչյան*, Խորհրդային Հայաստանի արդյունաբերությունը, էջ 64: Ըստ մեկ այլ տեսակետի 1913թ. մակարդակը գերազանցվեց 1936թ. (տես «Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 98):

պղնձի խտանյութը տեղափոխվում էր Ալավերդի, որտեղ ծուլվում էր: Հայաստանն արտադրում էր չզտված սև պղինձ, որը զտվում էր երկրի այլ ձեռնարկություններում:

Թեև բանվորներն աշխատանքային մեծ ակտիվություն ցուցաբերեցին, այդուհանդերձ 1942թ. պլանների կատարումը ձախողվեց, իսկ 1943թ. մետաղի ծուլումը կրճատվեց երկու անգամ:

Պլանները թերակատարել էին թե՛ Կապանում և թե՛ Ալավերդիում: 1942թ. հանքանյութի հանման 7 ամսվա պլանը կատարվել էր 79,3 %-ով, իսկ պղնձի խտանյութի արտադրության պլանը 78,1 %-ով: Հարստացուցիչ ֆաբրիկայի սարքավորումների խափանման հետևանքով 1942թ. 6 ամսվա աշխատանքային ժամերի 37 %-ը պարապուրդ էր տրվել[111]: Լեռնահանքային կոմբինատում արձանագրվել էր 55 գործալքում, 67 հոգի ինքնակամ հեռացել էին աշխատանքից: Ըստ ՀԿԿ ԿԿ 1942թ. օգոստոսի 24-ի բյուրոյի տված գնահատականի՝ Կապանի լեռնամետալուրգիական կոմբինատի տնօրեն Մովսիսյանը չէր ապահովել կոմբինատի աշխատանքի վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան, որի պատճառով նա հեռացվել էր աշխատանքից: Ֆաբրիկայի նոր տնօրեն էր նշանակվել ՀԿԿ ԿԿ քարտուղար Ա.Չախկալյանը: Աշխատանքից հեռացվել էր նաև հարստացուցիչ ֆաբրիկայի տնօրենը[112]:

Դրությունը բարվոք չէր նաև Ալավերդու հանքվարչությունում: 1942թ. հանքանյութի արդյունահանման 10 ամսվա պլանը կատարվել էր ընդամենը 84,4 %-ով, իսկ վերջին ամիսներին այնքան էր կրճատվել, որ կազմել էր 1942թ. հունվարին արդյունահանվածի 50 %-ը: Հանքանյութի տեղափոխման 10 ամսվա պլանը կատարվել էր 50,8 %-ով: Շամլուղի հանքերում կուտակվել էր 26 հազար տոննա հանքանյութ: Շարքից դուրս էին եկել Ախթալայի տրակտորային և վագոնային հավաքակայանները[113]:

---

[111] ՀԱԱ. ֆ.1, ց.22, գ.39, թ.141:

[112] Նույն տեղում:

[113] Նույն տեղում, գ.36, թ.31:

Նշվածից բացի պլանների թերակատարումը այլ պատճառներ ևս ուներ: Նախ՝ պիտի ասել, որ ռազմաճակատ էր մեկնել որակյալ բանվորների մեծ մասը: Ռազմաճակատ մեկնածներին փոխարինելու էին եկել արտադրական փորձ չունեցող պատանիները: Նրանց համար չափազանց դժվար էր ուժից վեր ֆիզիկական աշխատանք կատարելը: 1942թ. հուլիսին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի պլենումում Կապանի պղնձահանքային կոմբինատի տնօրեն Մովսիսյանը նշում էր, որ իրենց մոտ հավաքվել են «ինչ-որ երեխաներ, որոնք աշխատանքի դուրս գալուց առաջ լաց են լինում և ասում են, որ այդ աշխատանքը իրենց ֆիզիկական ուժերից վեր է»:

Դյուրին չէր նաև կանանց գործը, որոնց տեսակարար կշիռը արդյունաբերության այդ ճյուղի մեջ մեծացավ: Եթե 1943թ. հանրապետության գունավոր մետալուրգիայի արդյունաբերության մեջ աշխատում էր 498 կին, ապա 1944թ. նրանց թիվը հասավ 657-ի[114]:

1942թ. արդյունաբերության այդ ճյուղի մեջ ընդգրկված բանվորների թիվը հասնում էր 1773-ի, իսկ հաջորդ տարին՝ 1727-ի:

Զինվորական կոմիսարիատները բանվորներին բանակ զորակոչելիս հաճախ առաջնորդվում էին իրենց գերատեսչական շահերով, անտեսում էին վերադաս օրգանների որոշումների կատարումը, մի բան, որը մեծապես խանգարում էր արդյունաբերական այդ ճյուղը բանվորական ձեռքերով ապահովելու խիստ կարևոր գործին: 1942թ. Կապանի պղնձահանքային կոմբինատում որակյալ բանվորների ընդամենը 30 %-ն էր մնացել, մինչդեռ օրենքով պետք է աշխատող ձեռքերի 60 %-ը թողնվեր տեղում: Ավելին, կոմբինատի տնօրեն Մովսիսյանը ՀԿԿ ԿԿ-ին տեղեկացնում էր, որ կառավարության որոշմամբ գյուղերից հանքերում աշխատելու համար հավաքագրված 135 հոգին ընդամենը 10 օր են աշխատել, որովհետև նրանց զորակոչել են բանակ: Նույն գործարանի նոր նշանակված տնօրեն Չախկալյանի ասելով զինվորական կոմիսարիատը բանակ էր

---

[114] ՀԱԱ, ֆ.163, ց.15, գ.243, թ.57 և գ.253, թ.11:

զորակոչել այն որակյալ բանվորներին, ովքեր ամրացագիր ունեն, անգամ Դոնբասից եկած մի խումբ ռուս հանքագործների[115]:

Պլանների կատարման թերացումների հիմնական պատճառներից էր նաև արտադրության ընթացքում օգտագործվող նյութերի պակասը: 1942թ. Ալավերդու գործարանը Դոնբասից չէր ստանում բարձրորակ կոքս, անտրացիտ և հրակայուն աղյուս: Գործարանի կոլեկտիվը հարկադրված էր գտնել սրանց փոխարինող նյութեր: Քարածխի կոքսը փոխարինվեց նավթային կոքսով, իսկ հրակայուն աղյուսը՝ Շահալիի հրակայուն կվարցով, որի բազայի վրա Ալավերդու գործարանում կառուցվեց հրակայուն աղյուսի արտադրամաս:

Չի կարելի անտեսել աշխատանքների կազմակերպման ու վարձատրման բյուրոկրատական մեթոդները, ղեկավար աշխատողների հանդես բերած կամայականությունը: Նրանք բանվորներին նյութապես խրախուսելու փոխարեն խախտում էին վարձատրության կարգը, մի բան, որ վերջիններիս մեջ հաճախ էր ծնում անտարբերություն, զրկում շահագրգռվածությունից: 1942թ. մայիսի 6-ին Կապանում երկու հանքագործներ Հարությունյանն ու Մարտիրոսյանը, իրենց պլանները թեև կատարում են 135 %-ով, բայց հանքի վարիչ Պերիյանը Մարտիրոսյանի կատարածը գրանցում է 168 %-ով, իսկ Հարությունյանինը 101 %-ով[116]: Նման արարքը ոչ միայն չարաշահման համար դուռ էր բացում, այլև Հարությունյանին զրկում էր առավել արդյունավետ աշխատելու հնարավորությունից: Տարբեր սարքերի խափանումներն ու պահեստամասերի չբավարարելը նույնպես իրենց կնիքն էին դնում պլանների կատարման վրա: Կապանում, օրինակ, մեկ և կես տարի չաշխատեց հզոր օդամղիչը, որի մասերից մեկը պետք է ուղարկվեր Ուրալից[117], ինչը մեծապես խանգարեց հանքաքարի հանույթի ավելացմանը:

Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ երևան եկած ձախողումները շտկելու նպատակով 1942թ. փետրվարի 2-ին

---

[115] Նույն տեղում, ֆ.1, ց.31, գ.54, թ. 127:

[116] ՀԱԱ, ֆ.1, ց.31, գ.6, թ.263-282:

[117] "Правда", 1 декабря, 1941 г.

ՀԿ(բ)Կ ԿԿ-ն որոշում ընդունեց Ալավերդու և Կապանի ձեռնարկությունները վերակառուցելու մասին: Կենտրոնական կոմիտեն հանձնարարեց շրջանային կուսակցական կոմիտեներին քննարկել այդ որոշումը և միջոցներ ձեռնարկել տվյալ ձեռնարկությունները կարճ ժամկետներում վերակառուցելու համար: Շուտով իրականացվեց դրանց վերակառուցումը: Չնայած դրան, ինչպես նշվեց, պղնձի արտադրությունը Հայաստանում նվազեց ավելի քան երկու անգամ: Այս հանգամանքն այն իրողության լավագույն ապացույցն է, որ արտադրական հարցերը հաճախ էլ հնարավոր չի լինում լուծել վարչաբյուրոկրատական եղանակներով:

Հայաստանի պղնձագործները եղած դժվարությունները հաղթահարեցին միայն 1944 և 1945թթ.: 1944թ. նախորդ տարվա համեմատությամբ պղնձի ձուլումը ավելացավ 40, իսկ 1945թ. 46 տոկոսով[118]:

Հանրապետության արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկը թեթև արդյունաբերությունն էր: ԽՍՀՄ-ում թեթև արդյունաբերության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան որոշակիորեն տարբերվեց ծանր արդյունաբերության վերակառուցումից: Ի տարբերություն վերջինի՝ թեթև արդյունաբերության ձեռնարկությունների էվակուացիան ընթացավ մեծ դժվարություններով ու ձգձգումներով, որովհետև կառավարության ուշադրությունը հիմնականում բևեռված էր ծանր արդյունաբերության ձեռնարկությունների էվակուացիայի վրա: Թեև արդյունաբերության արտադրանքի գծով ռազմաճակատի կարիքների բավարարումը ընկավ թիկունքի ձեռնարկությունների վրա[119]: 1941թ. նախատեսվել էր արևելք էվակուացված թեթև արդյունաբերության ձեռնարկությունների միայն 1/3-ը վերականգնել, որոնցից այդ տարի շահագործման հանձնվեց ընդամենը 35 ձեռնարկություն (որոնց թվում և սննդի), իսկ մնացածը մասնակիորեն շահագործման հանձնվեց պատերազմի վերջին տարիներին[120]: Այստեղից էլ

---

[118] *Կ.Կոզմոյան*, Ալավերդի, էջ 93:

[119] История социалистической экономики, т.5, М., 1978, с.122.

[120] Նույն տեղում:

պարզ է, որ Հայաստանը իբրև թիկունքի հանրապետություն, կարևոր դեր պիտի խաղար բանակի պահանջները բավարարելու գործում:

Թեթև արդյունաբերության ժողկոմատը պատերազմի սկզբում ուներ 15 տեսակի ռազմական պատվեր, որոնք գերակատարում էր: Սակայն տարեկան պլանը հիշյալ ճյուղի ձեռնարկությունները կատարեցին 82,3 %-ով: Զգալիորեն թերակատարվեց տեսականու պլանը, չպահպանվեց արտադրանքի որակը, թույլ տրվեց աշխատավարձի գերածախս[121]: Հանրապետության տեքստիլ արդյունաբերությունը հոկտեմբերից անցավ ռազմական պատվերների կատարմանը[122]: Այն բանակի համար արտադրում էր բյազ, մառլյա և պարկացու կտոր[123]:

Տեքստիլ արդյունաբերությունը 1941թ. պլանները կատարեց 88 %-ով[124]: 1942թ. թեթև արդյունաբերության ձեռնարկությունների համար սահմանվել էին պլանային առաջադրանքներ, որոնք ժողկոմ Ջահանգիրյանի կարծիքով իրատեսական չէին, և նա ՀԿԿ ԿԿ քարտուղար Ա.Սարգսյանին ուղղած իր նամակում հիմնավորում էր այդ ու մատնանշում առավել հավանական տվյալներ: Այս փաստը պերճախոս վկայությունն է այն բանի, որ պլանավորող կազմակերպություններն անտեղյակ էին ձեռնարկությունների արտադրական կարողություններին, հումքով ու նյութով նրանց ապահովված լինելուն, խորամուխ չէին լինում աշխատուժի հնարավորությունների մեջ և այլն:

1942թ. հանրապետության թեթև արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկությունների համար սահմանվել էին հետևյալ պլանային առաջադրանքները.

1) Ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքն անփոփոխ գներով կազմելու էր 44,6 միլիոն ռուբլի

2) գուլպա, կիսագուլպա - 11,5 միլիոն զույգ

---

[121] ՀԱԱ, ֆ. 030, գ.22, թ.26-27:

[122] Նույն տեղում, ֆ.1, գ.21, գ.17, թ.58:

[123] Նույն տեղում, գ.21, գ.13, թ.86-87:

[124] Նույն տեղում, գ.21, գ.17, թ.87:

3) տրիկոտաժե սպիտակեղեն - 2 միլիոն հատ

4) կոշիկ - 500 հազար զույգ

5) կոշտ կաշվի մշակում - 400 տոննա

6) փափուկ կաշվե ապրանքներ - 60 միլիոն քառակուսի դեցիմետր

7) կապիտալ ներդրումներ - 700 հազար ռուբլի[125]:

Պլանավորող մարմինները ժամանակին չէին տեղեկացնում համապատասխան ժողկոմատների, գերատեսչությունների ու արտադրական ձեռնարկությունների ղեկավարներին՝ վերջիններիս տնօրինության տակ գտնվող ձեռնարկությունների համար սահմանված պլանների մասին: Հակառակ դեպքում ինչո՞վ բացատրել այն, որ հանրապետության թեթև արդյունաբերության ժողկոմը միայն 1942թ. 2-րդ կիսամյակում էր փորձում կարգավորել նույն տարվա պլանային առաջադրանքները և կենտկոմի քարտուղարին ուղղած իր նամակում նպատակահարմար էր համարում իր՝ Մոսկվա մեկնելու անհրաժեշտությունը՝ ԽՍՀՄ ժողկոմխորհում Հայաստանի թեթև արդյունաբերության պլանները ճշգրտելու համար[126]:

Մեզ չհաջողվեց պարզել, թե արդյոք կարողացավ ժողկոմը հստակություն մտցնել իր ղեկավարած ճյուղի պլաններում, թե նրա առաջարկները դեմ առան բյուրոկրատիայի անխորտակելի պատնեշին:

Հանրապետության տնտեսության մեջ զգալի էր սննդարդյունաբերության դերը: Այդ ճյուղի ձեռնարկություններն անբավարար էին վերակառուցում իրենց աշխատանքները նոր պայմանների համապատասխան[127]: Այդուհանդերձ թե՛ այս և թե՛ մսեղենի, կաթնեղենի արդյունաբերության ժողկոմատների՝ 1941թ. արտադրական ցուցանիշները համեմատաբար բարձր էին: 9 ամսվա պլանները հիշյալ ժողկոմատները համապատասխանաբար կատարել էին 98,6 և 112 %-ներով[128]:

Նոր պայմանները ճյուղին թելադրում էին նոր խնդիրներ:

---

[125] ՀԱԱ, ֆ.1, ց.0931, գ.26, թ.40:

[126] Նույն տեղում, ֆ.1, ց. 031, գ. 26, թ.40:

[127] ՀԱԱ, ց.21, գ.17, թ.37:

[128] Նույն տեղում, ֆ.1, ց.21, գ.11, թ.24-26:

Բնակչության պահանջները բավարարող սննդամթերք արտադրելու հետ մեկտեղ անհրաժեշտ էր մթերք արտադրել նաև ռազմաճակատի համար: Այդ նպատակով սննդարդյունաբերության մի շարք ճյուղերի ձեռնարկությունների արտադրանքն ընդլայնվեց, յուրացվեցին արտադրության նոր տեսակներ, ընդարձակվեցին ձեռնարկությունների արտադրական կարողությունները, կառուցվեցին նորերը, տեղադրվեցին նոր սարքավորումներ:

Որոշակի աշխատանքներ կատարվեցին ճյուղի ձեռնարկությունների մե կառուցվածքային փոփոխություններ կատարելու և բանվորական կադրերով ապահովելու ուղղությամբ:

Երևանի պահածոների գործարանը յուրացրեց մսի պահածոների արտադրության նոր տեխնոլոգիա: Օխախոտի ֆաբրիկան ընդլայնեց իր արտադրանքի տեսականին: Գյումրիի մսի կոմբինատը բացի իր հիմնական արտադրանքից սկսեց թողարկել նաև բժշկական պատրաստուկներ:

1942թ. սկզբից միջոցներ ձեռք առնվեցին Երևանի ձեթօճառ կոմբինատում տնտեսական օճառի տարեկան արտադրանքը 7600 տոննայից հասցնել 10 հազար տոննայի[129]: Հոկտեմբերյանի եթերայուղատու գործարանում 1942թ. սկսվեց տարեկան 2 միլիոն պայմանական տուփ մրգի պահածոյի արտադրությունը: Այդ նպատակով նշված գործարանում տեղադրվեցին Խաչամսկի պահածոների գործարանի սարքավորումները[130]:

1942թ. կեսերից վերսկսվեց Հոկտեմբերյանի պահածոների գործարանի շինարարությունը, որը դադարեցվել էր սկսված պատերազմի պատճառով: Աշխատանքները կազմակերպվելու էին այնպես, որ շահագործման հանձնվող արտադրամասում տարեկան 5 միլիոն պայմանական տուփ պահածո արտադրվեր[131]:

Աշխատանքներ տարվեցին այս և սննդարդյունաբերու-

---

[129] Նույն տեղում, ֆ.1, ց.22, գ.24, թ.45-46:
[130] Նույն տեղում, ց.22, գ.29, թ.34:
[131] ՀԱԱ, ֆ.1, ց 22, գ.32, թ.44:

թյան մյուս ձեռնարկություններն ու տնտեսություններն աշխատող ձեռքերով ապահովելու համար:

Տեղական հումքից ստացվող մթերային ապրանքների արտադրությունը մեծացնելու նպատակով քաղաքային ու շրջանային արդյունաբերական կոմբինատներից 1942թ. առանձնացվեցին սննդի ձեռնարկություններն ու կազմակերպությունները, և ստեղծվեցին սննդի առանձին, ճյուղային շրջանային ու քաղաքային կոմբինատներ: Հիշյալ շրջսնունդ-կոմբինատներին թույլատրվեց խաղող մշակող շրջանների մշակած խաղողի մնացուկներից կազմակերպել գինու և օղու արտադրություն[132]:

Պատերազմի տարիներին սննդարդյունաբերության շատ ձեռնարկություններ թերակատարում էին իրենց պլանային առաջադրանքները: Այս ճյուղի հետ մնացող ձեռնարկություններից էր Երևանի ձեթ-օճառ կոմբինատը, որը չկատարեց ո՛չ 1941թ. և ո՛չ էլ 1942թ. պլանը[133]: 1942թ. 1940թ. համեմատությամբ կրճատվեց նաև պահածոյի արտադրանքը: Եթե 1940թ. հանրապետությունում արտադրվել էր 17,3 միլիոն պայմանական տուփ, ապա 1942թ.՝ 16,7 միլիոն[134]: Դա միանգամայն հասկանալի էր, որովհետև հումքի և մթերքի խիստ պակասը կրճատում էր արտադրանքի ծավալը:

բ) Արդյունաբերության հետագա զարգացումը

Հանրապետության արդյունաբերությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցումից հետո պատերազմի հաջորդ շրջանում արդյունաբերության զարգացման բնորոշ առանձնահատկությունը եղած արտադրական կարողությունների ընդլայնումն էր և նոր արտադրատեսակների թողարկումը:

Հանրապետության քիմիական արդյունաբերության ար-

---

[132] Նույն տեղում, ֆ.1, ց.22, գ.32, թ.44:

[133] Նույն տեղում, ֆ.1, ց. 031, գ.10, թ.30:

[134] Народное хозяйство Арм. ССР, Е., 1957, с.48 և ՀԱԱ, ֆ.1, ց.31, գ.23, թ.122:

տադրանքի տեսականին ընդլայնվեց, ռազմաճակատի համար թողարկվեցին նոր նյութեր, որոնք որպես հումք օգտագործվում էին տարբեր արտադրություններում: Սովպրենը 1942թ. վերջերին արտադրեց քլորոֆորմ նյութը, որը որպես հումք օգտագործվում էր Վրաստանում արտադրվող կոֆեինի համար: Վերջինի պահանջը Անդրկովկասի ռազմաճակատի համար զգալի էր[135]:

Քիմիական արդյունաբերության մեջ ձևավորվեցին նոր ճյուղեր: Սրանք հումքի թողարկումից անցան պատրաստի արտադրանք տալուն: Այդ ձեռնարկություններից էր արդտեխնիկա գործարանը, որտեղ 1943թ. կեսերից սկսվեց ավտոդողերի արտադրությունը[136]: Գործարանը համալրվեց ԽՍՀՄ-ի եվրոպական մասից էվակուացված սարքավորումներով: Հանրապետությունում այս ճյուղի արտադրանքը կազմակերպելու և տեղական կադրերի որակավորումը բարձրացնելու գործում զգալի դեր խաղացին միութենական ռետինատեխնիկական արդյունաբերության ժողկոմատի կողմից Երևան գործուղված մասնագետները: Հիշյալ ձեռնարկության արտադրական հաջողությունները սկզբում չափազանց համեստ էին: 1944թ. առաջին եռամսյակի պլանը կատարվել էր 34 %-ով, ցածր էր նաև աշխատանքի արտադրողականությունը[137]: 1944թ. պետք է ավարտվեին ավտոդողերի արտադրամասի թերավարտ գործերը, որոնցից հետո գործարանի կարողությունը տարեկան 50 հազար դողից հասնելու էր 120 հազարի[138]:

1943թ. շահագործման հանձնվեց Երևանի քիմիադեղագործական գործարանը, որն արտադրում էր մեծ պահանջարկ ունեցող դեղամիջոցներ:

Շարունակվում էր քիմիական արդյունաբերությունը գերխոշոր գործարաններով հագեցնելու քաղաքականությունը: Դրա վկայությունը պոլիվինիլացետատ գործարանի շինարարության վերսկսումն էր, որը դադարեցվել էր 1940թ.: Այս

---

[135] ՀԱԱ, ֆ.1, գ.22, գ.34, թ.146:
[136] Նույն տեղում, ֆ.1, գ.23, գ.30, թ.140:
[137] Նույն տեղում, ֆ.1, գ.24, գ.35, թ.23:
[138] Նույն տեղում, ֆ.1, գ.2, գ.3, թ.1:

գործարանի համար հումք էր ծառայելու Կիրովի անվան քիմիական կոմբինատի ացետիլենային գազը: Նրա գործարկումով, որ նախատեսվում էր 1945թ., արտադրվելու էին բազմաթիվ նոր նյութեր, որոնք իրենց հերթին նպաստելու էին բազմաճյուղ քիմիական և արդյունաբերության ուրիշ ճյուղերի զարգացմանը: Այդ նյութերն էին՝ վինիլացետատը (100 տ), պոլիվինիլացետատային լաքերը (100 տ), բուտվար (120 տ), որն օգտագործվում է ապակու արդյունաբերության մեջ՝ առանց բեկորի արտադրանք ստանալու համար, ֆորմալ (179 տ), որը բարձր էլեկտրամեկուսիչ էր և օգտագործվում էր էլեկտրալարերի էմալապատման մեջ, պլաստմասսե համածուլվածքի իրեր (200 տ), մամլված արտադրատեսակներ (500 տ)[139]:

1945թ. նախատեսվում էր շահագործման հանձնել Վանաձորի հանքային պարարտանյութերի գործարանը:

Նոր ձեռնարկությունների կառուցման հետ միաժամանակ վերակառուցվեցին և ընդլայնվեցին նախկին ձեռնարկությունների արտադրական հզորությունները, շահագործման հանձնվեցին նոր արտադրամասեր, տարբեր արտադրական գործընթացներ:

1945թ. երկրորդ եռամսյակից Ալավերդու ծծմբաթթվի գործարանի ծծմբաթթվի արտադրամասի հզորությունը հասցվեց տարեկան 15 հազար տոննայի[140]: Այդուհանդերձ, հանրապետության քիմիական արդյունաբերությունը, հատկապես Կիրովի անվան գործարանը թերակատարում էր պլանները: 1943թ. 4 ամսվա ընթացքում գործարանը պիտի արտադրեր 420 տոննա հեղուկ քլոր, բայց արտադրել էր ընդամենը հինգ տոննա, 1943թ. ՊՊԿ-ի՝ օգոստոսի 16-ի որոշմամբ թիվ 742 գործարանը (նախկին սովպրենը) պիտի սեպտեմբեր-դեկտեմբերին արտադրեր 1500 տոննա կաուչուկ[141], սակայն նշված ժամանակաշրջանում կատարվեց առաջադրանքի կեսը[142]:

---

[139] ՀԱԱ, ֆ.1, ց.25, գ.29, թ.152:
[140] Նույն տեղում, ֆ.1, ց.25, գ.29, թ.149:
[141] ՀԱԱ, ֆ.1, ց.23, գ.35, թ.37:
[142] Նույն տեղում, ֆ.1, ց.24, գ.27, թ.14:

Պլանների թերակատարումը, տարբեր նյութերի ու պաշարների գերածախսերն ու վատնումները հիմք հանդիսացան, որ ԽՍՀՄ պետական վերահսկողության ժողովրդական կոմիսարիատը ստուգումներ անցկացներ գործարանում: Ստուգումներից պարզվեց, որ թեև 1943թ. երկրորդ կիսամյակից գործարանն ապահովված է եղել հումքով ու նյութերով, սակայն սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների պլանը կատարվել է 53,5 %-ով, կտրուկ ընկել է արտադրանքի որակը: 1943թ. 11 ամսվա ընթացքում գերածախսվել է 3805 տ կալցիումի կարբիդ, 2026 տ կրաքար, 6484 տ ապրանքային աղ, 383,9 տ բենզոլ, 602,6 տ քլոր: Միայն կարբիդի և էլեկտրոլիզի արտադրամասում գերածախսվել է 6325,8 հազար կվտժ էլեկտրաէներգիա: 1943թ. 11 ամսվա արտապլանային վնասները կազմել էր 10,2 միլիոն ռուբլի: 1943թ. նոյեմբերին գործարանում տեղի էր ունեցել 114 վթար և 29 անսարքություն, մինչդեռ մատյանում գրանցվել էր 2 վթար և մեկ անսարքություն[143]: Մեծ չափերի էին հասել գործալքումներն ու ինքնակամ աշխատանքը թողնելու դեպքերը: Գործարանի տնօրեն Ղազարյանը հեռացվել էր աշխատանքից: Գլխավոր ինժեներ Օ.Ն.Դիմենտը աշխատանքից հեռացվել և դատի էր տրվել: Պատասխանատվության էին ենթարկվել նաև արտադրամասերի պետերը: Հիշյալ միջոցառումներով 742 գործարանի աշխատանքները չկարգավորվեցին: Առաջվա նման շարունակվում էին նյութերի գերածախսն ու անորակ արտադրանքի թողարկումը, ինչի համար այժմ արդեն խիստ նկատողություն ստացան գլխկառուցուկի պետ Նիկիֆորովը և գործարանի նոր տնօրեն Կ.Ռուխիկյանը: Միանգամայն պարզ է, որ քիմիական արդյունաբերության մեջ ծագած խնդիրները վարչարարությամբ լուծելու փորձերը արդյունավետ չէին լինելու:

Հանրապետության ծանր արդյունաբերության ճյուղերի համալիրը՝ մեքենաշինությունը, պատերազմի երկրորդ շրջանում բնութագրվում է իր զարգացման բուռն տեմպերով և առանձին ճյուղերի ու ենթաճյուղերի մասնագիտացումներով:

---

[143] Նույն տեղում:

Ստեղծվեցին մեքենաշինության նոր ճյուղեր՝ հաստոցաշինության, սարքաշինության, էլեկտրամեքենաշինության, ընդհանուր մեքենաշինության: 1941-1945 թթ. մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքն աճեց 1,7 անգամ:

Հանրապետության մեքենաշինության հիմնական ձեռնարկության՝ Երևանի հաստոցաշինական գործարանի տեխնիկական բազան համալրվեց բարձրարտադրողական հաստոցներով ու հատուկ սարքավորումներով: Կատարելագործվեց արտադրության տեխնոլոգիան, մեքենայացվեցին մի շարք գործընթացներ: 1944-ին գործարանը յուրացրեց նոր տեսակի հաստոցների արտադրությունը:

Հանրապետության մեքենաշինության նոր ճյուղի՝ սարքաշինության առաջնեկը դարձավ Երևանի ժամացույցի գործարանը, որը 1943թ. սկսեց առաջին արտադրանքի թողարկումը:

Նախապատերազմյան ժամանակաշրջանում հանրապետությունում ձևավորվել էր ավտոմոբիլային արդյունաբերությունը: Երևանում կառուցվել էր ավտոնորոգման գործարան, որը 1944-ին վերակառուցվեց ավտոպահեստամասերի գործարանի:

Հիմք դրվեց էլեկտրամեքենաշինության ու էլեկտրատեխնիկական արդյունաբերությանը: Թիվ 447 գործարանում աշխատանքներ ծավալվեցին սավառնակաշինության ուղղությամբ: Այստեղ 1944թ. պիտի արտադրվեին Յակ-3 սավառնակի անիվների և թևերի լրամասեր, իսկ 1945թ. եռամսյակում՝ սավառնակներ: Նույն գործարանը 1945թ. մայիսից արտադրելու էր մեկ այլ՝ Ուտ-2 մակնիշի ուսումնամարզական սավառնակներ[144]:

Գունավոր մետալուրգիան 1944թ. սկսած վերելք ապրեց: Դրան նպաստեցին ճյուղի արտադրական և հումքային բազաներում կատարված վիթխարի կապիտալ ներդրումները: Միայն Ալավերդու գործարանում կապիտալ ներդրումները 1944թ. կազմեցին 4 միլիոն ռուբլի[145]: Պղնձարդյունաբերության

---

[144] ՀԱԱ, ֆ.1, ց. 24, գ. 32, թ.115:

[145] Նույն տեղում, ֆ.1, ց.24, գ.3, թ. 116:

ձեռնարկությունները վերակառուցելուց ու արտադրական կարողություններն ընդարձակելուց բացի պղնձի արտադրության աճին էապես նպաստեց նաև հանքաքարի արդյունահանման ավելացումը, որը ապահովվեց հանրապետության հանքավայրերի վերակառուցման ու դրանց հզորությունների աճով, բարձրարտադրողական հանքատրանսպորտային սարքավորումների և արդյունահանման աշխատանքներում ժամանակակից տեխնոլոգիայի կիրառումով: Դրանց շնորհիվ 1944թ. 1943թ. համեմատությամբ պղնձի արտադրությունն ավելացավ 40, իսկ 1945թ.՝ 46 %-ով[146]:

1944թ. վերսկսվեց 1941թ. դադարեցված Քանաքեռի ալյումինի գործարանի շինարարությունը: Այդ գործարանի կառուցումով Հայաստանում հիմնադրվում էր գունավոր մետալուրգիայի նոր ենթաճյուղ, և այն դառնալու էր ալյումինի արտադրության հսկաներից մեկը (տարեկան 20 հազար տոննա կարողությամբ): Գործարանը առաջին արտադրանքը թողարկելու էր 1945թ. կեսերին, բայց այն թողարկեց հազիվ 1950թ.[147]:

Ալյումինից բացի Հայաստանի գունավոր մետալուրգիան հարստացավ նոր ենթաճյուղով՝ մոլիբդենով: 1943թ. վերսկսվեցին Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարության աշխատանքները: Շուտով շարք էր մտնելու արդյունաբերական մի նոր հսկա, որը մեծ մասշտաբներով կլանելու էր հանրապետության ընդերքի հարստությունները:

Հանրապետության արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ սննդարդյունաբերության՝ 1940-1945թթ. համախառն արտադրանքի ծավալը կրճատվեց 30 %-ով, և նրա մեջ տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Հիմնվեցին ու զարգացան նոր ճյուղեր, կատարվեցին ներճյուղային մասնագիտացումներ:

Ավանդական մի շարք ճյուղերի՝ գինեգործության, կոնյակի արտադրության, պանրագործության, մարգարինի, ծխախոտագործության, պահածոյագործության, հացի արտադրության զարգացման համար հիմնվեցին նոր ձեռնարկություններ

---

[146] ՀԱԱ, ֆ.1, ց.31, գ.6, թ.282:

[147] Նույն տեղում, ֆ.1, ց.24, գ.3, թ.115:

Երևանում, Վանաձորում, Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր), Արտաշատում, Սիսիանում, Արթիկում, Սպիտակում, Կրասնոսելսկում (Ճամբարակ), Աշտարակում, Կոտայքում (Աբովյան), Վեդիում (Արարատ), Շամշադինում (Բերդ) և Նոյեմբերյանում:

Հանրապետության սննդարդյունաբերության պատմության մեջ նորություն էր շաքարի արդյունաբերության ձևավորումը (Սպիտակում), իսկ գինեգործության մեջ Խորհրդային Միությունում առաջին անգամ «Խերես» տեսակի գինու արտադրությանը ձեռնամուխ լինելը (Աշտարակում): Զարգացավ սննդարդյունաբերության օժանդակ ճյուղի՝ ապակե տարայի արտադրությունը (Արզնիում):

Այս միջոցառումներն իրականացվեցին այդ ճյուղի մեջ կատարված խոշոր ներդրումների շնորհիվ: Միայն 1944թ. սննդարդյունաբերության մեջ կատարված ներդրումները կազմեցին 40 միլիոն ռուբլի[148]:

Չնայած վերը նշվածին, Հայրենական մեծ պատերազմի տարիներին սննդարդյունաբերության համախառն արտադրանքը կրճատվեց 30 %-ով: Արտադրանքի այնպիսի կարևոր տեսակներ, ինչպիսիք էին՝ կոնյակը, 1945թ. 1940թ. համեմատությամբ կրճատվեց 44, գարեջուրը՝ 37, կենդանական յուղը՝ 67, միսը՝ 25, երշիկեղենը՝ 30, ձուկը՝ 2, հրուշակեղենը՝ 50, օճառը՝ 38 %-ով: Այս կարևոր արտադրատեսակների կրճատումը արդյունք էր գյուղատնտեսական մթերքների արտադրության կրճատման: Սննդամթերքի քիչ տեսակների գծով էր նկատվում արտադրանքի աճ: Այդ մթերքներն էին գինին (103 %), պանիրը (64 %), պահածոն (23 %), մակարոնը (12 %) և ծխախոտը (5 %)[149]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության արդյունաբերության մեջ զգալի դեր ուներ տեքստիլ արդյունաբերությունը: Թեպետև պատերազմի սկզբում տեքստիլ արդյունաբերության աճի տեմպերն ընկան, սակայն վերջում նոր գործարանների շահագործումով թողարկվող արտադ-

---

[148] ՀԱԱ, ֆ.1, ց.24, գ.3, թ.108:

[149] Народное хозяйство Арм. ССР, Е., 1957, с.45-51.

բանքի աճի միտում նկատվեց: Նշված ճյուղի ձեռնարկությունները շահագործման հանձնվեցին ի հաշիվ էվակուացված սարքավորումների և շարք մտան իրենց նախահաշվարկային հզորություններից պակաս կարողությամբ: Արդյունաբերության այս ձեռնարկությունների շահագործումով, որոնք տեղի ունեցան 1944-1945թթ., ընդլայնվեց տեքստիլ արդյունաբերության տեսականին, մեծացավ արտադրանքի ծավալը, բարելավվեց որակը:

Շահումյանում գործող մետաքսի գործվածքի ֆաբրիկայի հետ կառուցվեց ու շահագործման հանձնվեց համանման նոր ֆաբրիկա: Երևանում արտադրանք տվեցին մահուդի, խոնավածուծ վատինե գործվածքի, Վանաձորում՝ կորդի գործարանները, Գյումրիում՝ ներկման և դրվագման ֆաբրիկան[150]: Տեքստիլ արդյունաբերության մեջ ներդրված ֆինանսները նույնպես զգալի էին: 1944թ. դրանք հասան 4,5 միլիոն ռուբլու[151]:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության արդյունաբերության մեջ տեղի ունեցան խոշոր փոփոխություններ:

Արդյունաբերության արտադրանքը հիմնականում ուղղվեց ռազմաճակատի կարիքները բավարարելուն: Հանրապետությունը սկսեց մասնագիտանալ այնպիսի արտադրությունների գծով, ինչպիսիք էին զենքն ու զինամթերքը:

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները ռազմաճակատի կարիքների համար թողարկում էին ամենատարբեր արտադրանք՝

ա) զենք ու զինամթերք

բ) գումակային, հակատանկային, ինժեներական ծառայության, կապի գույք և հակաքիմիական, հրշեջ, քողարկման ու հակաօդային պաշտպանության իրեր

գ) հագուստ, հանդերձանք, գործվածք, գույք

դ) տարբեր տեսակի քիմիական արտադրանք

---

[150] ՀԱԱ, ֆ.1, ց.24, գ.3, թ.106 -109:

[151] Նույն տեղում:

ե) պղինձ

զ) սննդամթերք:

Զենքի և զինամթերքի հիմնական տեսակներն էին՝ հակատանկային, հակահետևակային ականների պատյանները, ավիառումբերի պատյանները, դյուրավառ հեղուկների խառնուրդներով շշերը և արկերի պատյանները:

Սրանց արտադրությունն ըստ քանակի և տեսակի ընդհանուր առմամբ եղել է՝

1941թ. 263,5 հազար հատ, 13 տեսակ

1942թ. 538,2 հազար հատ, 12 տեսակ

նաև 428 լրակազմ զենք, 1 տեսակ

1943թ. 483,2 հազար հատ, 6 տեսակ

1944թ. 91,9 հազար հատ, 4 տեսակ:

Երկրորդ խմբի մեջ մտնող արտադրանքի տարբեր տեսակներից Հայաստանը թողարկել է ընդամենը մեկ և կես տարի, այսինքն՝ 1941թ. երկրորդ կեսին և 1942թ.: Իսկ հաջորդ տարի դրանց արտադրությունը խիստ կրճատվել է կամ հանվել: Նշանակում է հիշյալ արտադրանքների պահանջը ռազմաճակատը չի զգացել:

Արտադրանքի երրորդ խումբը, որի մեջ էր մտնում հագուստը, կանոնավոր կերպով արտադրվել է ամբողջ պատերազմի ընթացքում, և հետևաբար արտադրանքի այս տեսակներով էր կարևորվում արդյունաբերության դերը ռազմաճակատի պահանջները բավարարելու գործում:

Պատերազմի տարիներին Հայաստանի քիմիական արդյունաբերության արտադրանքը դժվար է գերագնահատել: Դա պայմանավորված էր ոչ միայն նոր արտադրանքի՝ առաջնակարգ ռազմավարական հումք լինելու հանգամանքով, այլև այն բանով, որ տվյալ ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ում գործում էին ընդամենը էվակուացված ութ քիմիական ձեռնարկություններ, որոնք աշխատում էին իրենց կարողությունների հազիվ կիսով չափ:

Քիմիական արդյունաբերության՝ պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցումն ընթացավ մի կողմից արտադրական կարողությունների ընդլայնումով, իսկ

մյուս կողմից նոր արտադրությունների յուրացումով: Քիմիական գործարանների արտադրանքի հումքի վրա Հայաստանում նոր ձեռնարկություններ էին կառուցվում, որոնք հանգեցնում էին քիմիական արդյունաբերության բազմապլան զարգացմանը և հետագա քիմիացմանը: Քիմիական արդյունաբերությունը սկսում էր պատրաստի արտադրանք թողարկել:

Հանրապետության մեքենաշինության և մետաղամշակության արդյունաբերության կառուցվածքում հատկապես պատերազմի հաջորդ շրջանում տեղի ունեցան զգալի փոփոխություններ, երևան եկան մեքենաշինության նոր ճյուղեր՝ հաստոցաշինությունը, սարքաշինությունը, էլեկտրամեքենաշինությունը, ավտոմոբիլային արդյունաբերությունը, սավառնակաշինությունը և այլն:

Հիմք դրվեց էլեկտրատեխնիկական արդյունաբերությանը:

Պատերազմի սկզբնական տարիներին կրճատվեց պղնձի արտադրությունը, միայն վերջում նկատվեց արտադրանքի որոշակի աճ: Հանրապետությունում հիմնադրվեցին գունավոր մետալուրգիայի նոր ենթաճյուղեր՝ ալյումինի և մոլիբդենի արտադրություններ:

Սննդարդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը թեպետև կրճատվեց 30 %-ով, այդուհանդերձ ընդլայնվեցին ճյուղի արտադրական բազաները, հիմնվեցին ու զարգացան նոր ճյուղեր, կատարվեցին ներճյուղային մասնագիտացումներ: Նկատվեց տեքստիլ և թեթև արդյունաբերության աճի միտում:

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը կառուցվեց ի հաշիվ էվակուացված ձեռնարկությունների սարքավորումների:

Պատերազմի տարիներին Հայաստանում շահագործման հանձնվեցին 30 նոր ձեռնարկություններ և 110 արտադրամասեր, յուրացվեց շուրջ 300 նոր արտադրատեսակների արտադրությունը:

Ինչպես նախապատերազմյան, այնպես էլ պատերազմի տարիներին շարունակվեց արդյունաբերության էներգատար

ճյուղերի զարգացումը: Քիմիական, ալյումինի, պղնձամոլիբդենային նոր կառուցվող հսկա գործարանները ոչ միայն մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա էին ծախսելու և հանրապետության ընդերքի պաշարները անողոք ձևով կլանելու, այլև ընդարձակելու էին բնապահպանման աղետի գոտիները:

Հանրապետության տնտեսությունը աչքի էր ընկնում անարդյունավետությամբ: Չափազանց ցածր էր աշխատանքի արտադրողականությունը: Մեծ չափերի էին հասնում հումքի, նյութի, էլեկտրաէներգիայի վատնումներն ու շռայլումները: Զգացվում էր ժամանակակից տեխնիկայի ու տեխնոլոգիական գործընթացների, աշխատող ձեռքերի պակաս: Մեծ էին նրանց հոսունությունը, անորակ արտադրանքի չափերը, գործալքումները, հարկադիր պարապուրդները, խափանումները, վթարները, անկանոն մատակարարումները, ինչպես նաև ոչ իրական պլանավորումը:

Գ Լ Ո Ւ Խ Գ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ա) Բանվորական կադրերի պատրաստումը և նրանց որակավորման բարձրացումը

Նախապատերազմյան տարիներին հանրապետության ինդուստրիալ զարգացման հետևանքով զգալի փոփոխություններ տեղի ունեցան բանվորական կադրերի կազմում: Շեշտակի մեծացավ նրանց քանակը: 1936թ. 22 հազարից բանվորների թիվը 1940թ. աճեց մոտավորապես երկու անգամ[152]: Բանվորական կադրերի մեջ քանակական փոփոխություններն ուղեկցվում էին որակական փոփոխություններով նրանց կուլտուր-տեխնիկական մակարդակի աճով: Բանվորների շարքերից դուրս եկան արտադրության առաջավորներ, խոշոր մասնագետներ ու արտադրության կազմակերպիչներ:

30-ական թթ. ԽՍՀՄ-ում որակյալ բանվորների պատրաստման հիմնական օղակները մնում էին ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներն ու սրանց տիպի մյուս հաստատությունները: Որքան էլ դրանք զգալի ներդրում ունենային բանվորների պատրաստման բնագավառում, այդուհանդերձ արդյունաբերության տարածուն զարգացման ուղին բռնած Խորհրդային Միությունում օրեցօր զգացվում էր բանվորական ձեռքերի պակաս թե քանակապես և թե որակապես:

Ժողկոմատների ու գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցները պատրաստում էին միայն իրենց ձեռնարկությունների համար սահմանափակ մասնագիտությունների գծով կադրեր, անտեսվում էր զարգացող և հեռանկարային ճյուղերի

---

[152] Труд в Армянксй ССР, Е., 1976, с.32.

համար մասնագետների պատրաստումը: Մինչդեռ արդյունաբերության բուռն զարգացումը և հետագա մասնագիտացումը խնդիր էին դնում ոչ միայն բանվորական կադրերի պատրաստման քանակական աճ, այլև առաջատար և զարգացող նոր ճյուղերի համար նոր մասնագետների պահանջ: Այս ամենը խոսում է այն մասին, որ բանվորական կադրերի պատրաստման գոյություն ունեցող համակարգը հնացել էր և չէր համապատասխանում տվյալ ժամանակաշրջանի պահանջներին: Անհրաժեշտ էր այդ համակարգը վերակառուցել:

1940թ. հոկտեմբերի 2-ի հրամանագրով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ստեղծեց պետական աշխատանքային ռեզերվների միութենական ժողովրդական կոմիսարիատ: Դրանով ստեղծվում էր արդյունաբերության համար կադրեր պատրաստող հաստատությունների միասնական համակարգ, և վերացվում էր այդ ուսումնական հաստատությունների՝ տարբեր ժողկոմատների ու գերատեսչությունների պատկանելությունը:

Աշխատանքային ռեզերվների հաջորդ խնդիրը հիշյալ ուժերին առավել արդյունավետ մեթոդներով բարդ ու զանգվածային մասնագիտություններ ուսուցանելն էր: Առաջինի դեպքում սահմանվում էր երկու տարվա, իսկ երկրորդի դեպքում՝ վեց ամսվա ուսուցման ժամկետ: Ստեղծվում էին երեք տեսակի մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ արհեստագործական և երկաթուղային ուսումնարաններ ու ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներ:

Փոխվեցին ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներն ու ուսումնարանները կադրերով համալրելու ձևերը: Եթե նախկինում ֆաբրիկագործարանային ուսումնարաններում կադրերն ընտրվում էին ազատ հավաքագրումով և կրում էին զուտ գերատեսչական բնույթ, ապա նոր օրենքով այդ արվում էր մոբիլիզացման կարգով, պետական պլանին համապատասխան, որը օրենքի ուժ էր ստանում: Նախատեսվում էր, որ աշխատանքային ռեզերվները տարեկան 800 հազարից մինչև մեկ միլիոն մարդ պետք է պատրաստեին՝ բանվորների շարքերը համալրելու համար:

Կոլտնտեսությունների վարչությունների նախագահներին պարտավորեցնում էին 14-ից մինչև 55 տարեկան յուրաքանչյուր հարյուր կոլտնտեսականի հաշվով 14-15 կամ 16-17 տարեկան երկու հոգու տրամադրել՝ արհեստագործական ու երկաթուղային ուսումնարաններում ու ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներում սովորելու համար: Հիշյալ հաստատությունների շրջանավարտները համարվում էին մոբիլիզացված և պարտավոր էին չորս տարի անընդմեջ աշխատել պետական ձեռնարկություններում: Նրանց աշխատանքի էր տեղավորում պետությունը անկախ նրանց բնակության վայրից[153]: Ամենասեղմ ժամկետներում՝ 1940թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ստեղծվեցին աշխատանքային ռեզերվների տեղական մարմինները: 1940թ. հոկտեմբերին կազմվեց Հայաստանի աշխատանքային ռեզերվների վարչությունը (պետ՝ Ա.Հովյան):

Դժվար չէ տեսնել, որ հիշյալ հրամանագիրը մեկ օղակն էր այն շղթայի, որ կռվեց վարչահրամայական համակարգի կողմից և կոչված էր ժողովրդատնտեսական կյանքի տարբեր ասպարեզներում եղած հարցերը լուծել վարչական եղանակներով:

Ժողովրդատնտեսական կարևորագույն խնդրի՝ բանվորական կադրերի պատրաստման բնագավառը վերակառուցելու փորձը ուշացած էր և արդյունավետ չեղավ, որովհետև 1941թ. մայիս-հունիսին աշխատանքային ռեզերվների հաստատությունները հազիվ էին տվել առաջին շրջանավարտները, երբ սկսվեց պատերազմը:

Պատերազմի պայմաններում մեծ նշանակություն ուներ արդյունաբերական ձեռնարկությունները որակյալ կադրերով ապահովելու խնդիրը, որովհետև ռազմաճակատ էին մեկնել մեծ թվով բարձր որակավորում ունեցող կադրեր: Այսպիսով, որակյալ բանվորական կադրերի պակասը պատերազմի տարիներին խիստ զգալի էր, ուստի որոշվեց նրանց պատրաստումը իրականացնել սեղմ ժամկետներում: Արհեստագործական ուսումնարաններում նախատեսված երկու տարվա փոխարեն

---

[153] Директивы КПСС и Советского правительства, т.2, М.1957, с.653-655.

ուսուցումը հասցվեց մեկ տարվա, իսկ ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներում այն 6 ամսից կրճատվեց 4-5 ամսվա: Կրճատվեցին արտադրական պրակտիկաները, ուսումնական ծրագրերից հանվեցին տնտեսական ու մասնագիտական առարկաները: Ուսուցումը զուգորդվեց արտադրական գործունեությամբ, երկարացվեց ուսումնաարտադրական օրվա տևողությունը, մտցվեց արտաժամյա աշխատաժամկետացանկ: Ուսուցումը և արտադրությունը իրականացվում էր եռհերթ:

Բանվորական կադրերի պատրաստման գործում դրսևորված գրոհայնությունը շուտով ունեցավ իր բացասական հետևանքները: Ուսումնական դասընթացի կրճատումը և ժամկետից շուտ շրջանավարտներ տալն ազդեց բանվորական կադրերի որակավորման վրա:

Պատերազմի տարիներին ընդարձակվեց հանրապետության արհեստագործական ուսումնարանների և ֆաբրիկագործարանային դպրոցների ցանցը: Հանրապետության արդյունաբերական շատ կենտրոններում՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Ալավերդիում, Կապանում, Արարատում, Արթիկում, Արմավիրում և այլուր բացվեցին նոր հաստատություններ կամ հները վերակառուցվեցին:

Մինչև պատերազմը հանրապետությունում գործում էին ընդամենը հինգ ուսումնարան և ֆաբգործուսի դպրոց, ուր սովորում էր հազար պատանի: 1944թ. դրանց թիվը հասավ 12-ի, իսկ սովորողների թիվը՝ 4100-ի, 1945թ. համապատասխանաբար՝ 15 և 3100: 1940թ. հանրապետության ուսումնարանները տվեցին 1000 շրջանավարտ[154]: Հայաստանի աշխատանքային ռեզերվները առաջին շրջանավարտները տվեցին 1941թ. նոյեմբերին: Դեկտեմբերին նրանք հավաքագրեցին 1500, իսկ 1942թ. հուլիսին՝ ևս 2000 հոգու[155]: Աշխատանքային ռեզերվների կենտրոնական մարմինների ցուցումների համաձայն, հիմնական շեշտը պետք է դրվեր մետաղագործներ պատ-

---

[154] *А.В.Митрофанова*, Рабочий класс СССР в годы Великой Отечественной войны, с.466.

[155] ՀԱԱ, ֆ.1, գ.30, գ.54, թ.44:

ռաստելու վրա: Այս մասնագիտության համար պետք է ներգրավվեր հավաքագրված երիտասարդների 50 %-ը, իսկ մնացածներին՝ ընդգրկել աղջիկների[156]:

Ինչպես որ կենտրոնական մարմինները պլանավորում էին յուրաքանչյուր հանրապետության աշխատանքային ռեզերվները աչքաթող անելով տեղական հնարավորությունները, այնպես էլ հանրապետական վարչությունն աշխատանքային ռեզերվների քանակակազմը հաճախ պլանավորում էր յուրաքանչյուր քաղաքի կամ շրջանի հաշվով՝ առանց խորամուխ լինելու, թե նման պլանավորումը որքան է իրատեսական:

Աշխատանքային ռեզերվների համակարգում պատրաստում էին ամենատարբեր մասնագիտությունների բանվորական կադրեր:

Հանրապետության քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները բանվորական կադրերով ապահովում էին Կիրովի անվան քիմիական գործարանի հիման վրա գործող թիվ 1 արհեստագործական ուսումնարանը և Վանաձորի Ալ.Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի թիվ 2 ֆաբգործուսի դպրոցը: Թիվ 1 ուսումնարանում պատրաստում էին ապարատավարներ, լաբորանտներ, էլեկտրագազաեռակցողներ, թիթեղագործներ, փականագործներ, մեքենավարներ, խառատներ և այլ մասնագետներ: Վանաձորի ֆաբրիկագործուսի դպրոցը պատերազմի տարիներին պատրաստեց 11 մասնագիտությունների 1085 բանվոր[157]:

Հանրապետության մեքենաշինական ձեռնարկությունների համար բանվորական կադրեր պատրաստում էին Երևանի թիվ 2, 4 արհեստագործական ուսումնարանները: Առաջինը բացվել էր 1940թ.՝ Երևանի հաստոցաշինական գործարանը բանվորական կադրերով համալրելու համար: 1941թ. բացվեց Երևանի թիվ 4 արհեստագործական ուսումնարանը, որը պատրաստում էր ավտովերանորոգող փականագործներ, էլեկտրիկներ, սանտեխնիկներ, ավտովարորդներ, տրակտորիստներ և այլն:

---

[156] Նույն տեղում, ֆ.1, ց.31, գ.34, թ.145:

[157] «Խորհրդային Հայաստան», 2 հոկտեմբերի 1945թ.:

1941թ. Կապանում բացվեց ֆաբգործուսուցման դպրոց, որը լեռնամետալուրգիական արդյունաբերության համար պատրաստելու էր բանվորական կադրեր: 1941-1949թթ. հիշյալ դպրոցը տվեց 2500 հանքագործ, որոնցից 500 հանքափոր, 300 հանքախոշերի ամրակապող, 350 էլեկտրափականագործ, 100 մեքենավար, 125 խառատ, 100 ֆլոտատոր, գծի վարպետ և այլն[158]:

Գյումրիի երկաթուղային ֆաբգործուսուցման դպրոցը պատերազմի նախօրյակին վերածվեց արհեստագործական ուսումնարանի: Այստեղ պատրաստում էին շոգեքարշի մեքենավարի օգնականներ, գծի վարպետներ, ատաղձագործներ, դարբիններ, կապի և միացման ցանցի մոնտաժման ու շահագործման մասնագետներ:

Հանրապետության թեթև արդյունաբերության ձեռնարկությունները բանվորական կադրերով համալրելու գործում մեծ դեր խաղաց Գյումրիի տեքստիլ կոմբինատի հիմքի վրա գործող թիվ 1 ֆաբգործուսի դպրոցը: Եթե նախապատերազմյան 11 տարում դպրոցը տվել էր 1700 շրջանավարտ, ապա 1941-1945թ. տվեց 1250 շրջանավարտ:

Ընդհանուր առմամբ Հայրենական մեծ պատերազմի տարիներին երկրի աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունները պատրաստեցին 2 միլիոն 480 հազար 350 բանվոր[159], որոնցից մոտ 10 հազարը բաժին էր ընկնում Հայաստանին[160]: Հանրապետության արդյունաբերությունը, տրանսպորտը և տնտեսության մյուս ճյուղերը համալրեցին 6621 մետաղագործ, 1046 լեռնագործ, 477 քիմիկոս, 733 երկաթուղային, 1200 տեքստիլագործ[161]: Հիշյալ կադրերն ակտիվորեն մասնակցեցին թշնամու դեմ մղվող մարտերին ու

---

[158] *Ս.Միքայելյան*, Պրոֆեսիոնալ տեխնիկական կրթությունը Հայաստանում, Ե., 1960, էջ 48:

[159] *Г.С.Кравченко*, Экономика СССР в годы Великой Отечественной войны, с.112, 225.

[160] *Հ.Հարությունյան*, Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, էջ 101:

[161] Նույն տեղում:

թիկունքի աշխատանքներին, նրանցից շատերը դարձան արտադրության առաջավորներ ու ղեկավարներ:

Պետք է նշել, որ 1941-1943թթ. Խորհրդային Միության աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունների ցանցը ընդլայնվեց ի հաշիվ ֆաբրիկագործարանային դպրոցների: Նրանցում բանվորական կադրերը պատրաստվում էին արագ տեմպերով 4-5 ամսվա ընթացքում: 1941-1943թթ աշխատանքային ռեզերվների գծով պատրաստվեցին 1,606 հազար բանվորներ, որոնցից 1,223 հազարը ֆաբգործուսի սաներ էին, իսկ մնացածը՝ երկաթուղային ու արհեստագործական ուսումնարանների սաներ[162]: Բանվորական կադրեր պատրաստելու այս եղանակը ազդում էր նրանց որակավորման վրա: Այս երևույթը բնորոշ էր նաև Հայաստանին: Բայց 1944թ. սկսած, երբ բանվորական ձեռքերի պակասը կրճատվեց, մեծացան ֆինանսական ներդրումները, նախապատվությունը տրվեց արհեստագործական ու երկաթուղային ուսումնարանների ընդլայնմանը:

1944թ. Խորհրդային Միության աշխատանքային ռեզերվների արհեստագործական և երկաթուղային ուսումնարաններում սովորողների թիվը գերազանցեց ֆաբգործուսման դպրոցներում սովորողների թվին՝ կազմելով համապատասխանաբար 544,700 և 363,155[163]: Հայաստանում ևս ուսումնարաններում սովորողների թիվն աճեց, սակայն այն չգերազանցեց ֆաբգործուսի դպրոցների սովորողների թվին, այլ կազմեց ընդամենը 46 %-ը[164]: Այլ կերպ ասած՝ Հայաստանում բանվորական կադրերի պատրաստման գործում նախապատվությունը շարունակվում էր տրվել նրանց քանակական կողմին՝ անտեսելով որակականը:

Հայաստանի աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատությունները ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերն աշխատող ձեռքերով ապահովելու հետ մեկտեղ,

---

[162] *М.М.Кучеренко*, Молодое поколение рабочего класса СССР, с.101

[163] Նույն տեղում, էջ 102:

[164] *Հ.Հարությունյան*, Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, էջ 101:

ձեռնամուխ էին եղել նաև ռազմաճակատի և թիկունքի կարիքները բավարարող արտադրանքի որոշ տեսակների թողարկմանը:

Հանրապետության ուսումնարանների սաների ջանքերով պատրաստվեցին արկի և ավիառումբի 7500 մասեր, 250 լրակազմ գործիքներ հրետանավորների և ավտովերանորոգման արհեստանոցների համար: Գյումրիի երկաթուղային ուսումնարանի սաները վերանորոգեցին 24 շոգեքարշ, 90 վագոն, Ալավերդու և Կապանի ապագա հանքագործներն արդյունահանեցին 8500 տոննա պղնձի հանքաքար և այլն: Ընդհանուր առմամբ պատերազմի տարիներին հանրապետության բանվորական կադրերի ռեզերվները ռազմաճակատի և թիկունքի համար թողարկեցին 1 միլիոն 160 հազար ռուբլու արտադրանք[165]:

Պետք է նշել, որ աշխատանքային ռեզերվների համակարգում տիրող դաժան պայմանները, աշխատանքային ծանր ռեժիմը, ֆիզիկական մեծ լարվածությունը, վատ սնունդը, սովորողների կենցաղային ոչ բարենպաստ պայմանները շատ պատանիների ու աղջիկների հարկադրում էին հեռանալ այդ հաստատություններից: Պաշտոնական տվյալներով այդ համակարգից դուրս եկած բանվորների 18-ից 20 %-ը ինքնակամ լքում և հեռանում էր գործարաններից ու ձեռնարկություններից:

Դժվարություն էր հարուցում նաև այդ համակարգի հաստատությունները սովորողներով համալրելու խնդիրը: Բազմիցս քննադատվում էին այն շրջանների ղեկավարները, ովքեր ձախողում էին դրանց մոբիլիզացիոն աշխատանքները: Ահա թե ինչու շրջանային, քաղաքային ու հանրապետական կուսակցական կազմակերպությունները, հաճախ անդրադառնալով այդ բնագավառում տեղ գտած թերություններին, փորձում էին միջոցներ ձեռնարկել դրանք շտկելու համար:

Պատերազմի տարիներին աշխատանքային ռեզերվները չդարձան բանվորական կադրերի պատրաստման առաջատար

---

[165] *Ս.Միքայելյան*, Խորհրդային Հայաստանի պրոֆեսիոնալ տեխնիկական դպրոցը, Ե., 1978, էջ 47:

ձև: Նրանց որակավորումը բարձր չէր, որն արդյունք էր ինչպես այդ համակարգի նյութատեխնիկական բազայի թուլության, այնպես էլ վարպետների և դասատուների մասնագիտական ցածր մակարդակի:

Աշխատանքային ռեզերվների համակարգը, իբրև ամբողջատիրական հասարակարգի տնտեսական ու սոցիալական համակարգի կարևորագույն կառուցվածքային տարր, արտացոլում էր այդ հասարակարգին բնորոշ այնպիսի գծեր, ինչպիսիք էին՝ զարգացման տարածունությունը, կենտրոնի թելադրանքը, անհատի շահերի անտեսումը և այլն:

Տնտեսության զարգացումը բանվորական կադրեր պատրաստելու այնպիսի սուր պահանջներ էր առաջադրում, որ աշխատանքային ռեզերվների հաստատությունները կարող էին իրագործել: Ահա թե ինչու բանվորական կադրերի պատրաստումը, բացի աշխատանքային ռեզերվների ուսումնական հաստատություններից, իրականացվում էր նաև արտադրության մեջ գործարաններում, ֆաբրիկաներում և այլ ձեռնարկություններում:

Կադրերի պատրաստման այս ձևը Խորհրդային Միությունում ամենատարածվածն էր և առավել տարածվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ռազմաճակատ մեկնած որակյալ բանվորներին փոխարինել էին աշխատելու փորձ և հմտություն չունեցողները՝ կանայք, անչափահասները, հաշմանդամներն ու թոշակառուները: Անհրաժեշտ էր ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպել նրանց արտադրական-տեխնիկական ուսուցման գործը:

Բնականաբար, ժամանակի սղությունը, արտադրություն եկած քանակակազմի կրթական մակարդակը հնարավորություն չէին տալիս որակյալ ու տեխնիկապես գրագետ բանվորական կադրեր պատրաստել: Հիմնականը ամենատարրական արտադրական գիտելիքներով և ունակություններով նրանց օժտելն էր:

Բանվորական կադրերի պատրաստման հիմնական ու զանգվածային ձևերից մեկը դարձավ անհատական բրիգադային ուսուցումը: Այս եղանակով Խորհրդային Միության ար-

դյունաբերական ձեռնարկությունները ստացան բանվորական ձեռքերի պահանջի գրեթե 85 %-ը[166]: Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում ևս լայնորեն տարածվեց ուսուցման այս մեթոդը: Այդ առումով աչքի ընկավ Գյումրիի տեքստիլ կոմբինատը, ուր ուսուցման տվյալ եղանակով պատրաստվեց 2262 բանվոր: Անհատական-բրիգադային եղանակով բանվորների պատրաստումը տարածում էր գտել քաղաքի մյուս ձեռնարկություններում՝ կոշիկի գործարանում, մսի կոմբինատում և այլուր[167]:

Անհատական-բրիգադային ուսուցումը տարածվեց նաև Երևանում: Հանրապետության կառավարությունը 1942թ. օգոստոսի 11-ին որոշում ընդունեց անհատական-բրիգադային ուսուցում կազմակերպելու մասին[168]:

Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերում՝ քիմիական ու պղնձարդյունաբերության մեջ 1943թ. անհատական-բրիգադային կարգով պատրաստվեցին համապատասխանաբար 1069 և 729 բանվոր[169]: Բանվորական կադրերի պատրաստման այդ ձևը տարածվեց նաև արդյունաբերության մյուս ճյուղերում: Ընդհանուր առմամբ անհատական-բրիգադային կարգով հանրապետությունում պատերազմի տարիներին մասնագիտություն է ստացել 11,5 հազար բանվոր[170]:

Նորեկների մեկ այլ խմբի պատրաստումն իրականացվում էր կարճատև դասընթացների ու խմբակների միջոցով: Այս եղանակը գրեթե մոտենում էր մշտական ուսուցմանը և անհատական-բրիգադային ուսուցման համեմատությամբ մի շարք առավելություններ ուներ: Դասընթացներում պատրաստվում էին համեմատաբար բարդ մասնագիտության տեր կադրեր:

---

[166] *М.Я.Сонин*, Подготовка квалифицированных рабочих на производстве, М., 1954, 77.

[167] «Բանվոր», 11 սեպտեմբերի 1941թ., 25 օգոստոսի 1942թ.:

[168] *Ք.Գրիգորյան*, Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը, էջ 108:

[169] ՀԱԱ, ֆ.163, ց.11, գ.242, թ.18:

[170] *Հ.Թումանյան*, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, էջ 162:

բ) Բանվորական կադրերի համալրման աղբյուրները

Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկված բանվոր-ծառայողների թիվը 1940թ. հաշվվում էր 31,2 միլիոն, որից արդյունաբերության մեջ աշխատում էր 11 միլիոնը: 1941թ. այդ թվերը համապատասխանաբար կրճատվեցին և կազմեցին 26,2 և 9,4, իսկ 1942թ.՝ 18,4 և 7,2 միլիոն, այլ խոսքով 1942թ. 1940թ. համեմատությամբ ժողովրդական տնտեսության մեջ բանվորների և ծառայողների թիվը կրճատվեց 59, իսկ արդյունաբերության մեջ՝ 65,5 %-ով[171]: Թեև Հայաստանում աշխատանքային ձեռքերի նման չափի կորուստ տեղի չէր ունեցել, այդուհանդերձ ռազմաճակատ մեկնած բանվորների փոխարինողների հարցը նույնպես դժվար կացություն էր ստեղծել: Հանրապետության բանվոր-ծառայողների թիվը նախապատերազմյան տարում 155,7 հազար էր, որից արդյունաբերական բանվորներինը և ծառայողներինը՝ 35 հազար: 1941թ. հոկտեմբերին բանվոր-ծառայողների ընդհանուր թիվը նվազեց և հասավ 123 հազարի, իսկ արդյունաբերության բանվոր-ծառայողների թիվը կրճատվեց գրեթե կիսով չափ:

Բանվորական կադրերի պակասը հատկապես զգացվում էր Կիրովի անվան քիմիական գործարանում, որը հանրապետության ամենախոշոր ձեռնարկությունն էր: Եթե 1941թ. սեպտեմբերին գործարանն ուներ 3128 բանվոր-ծառայող, ապա մինչև տարեվերջ ռազմաճակատ մեկնեցին 893, 1942թ.՝ 919, իսկ 1943թ.՝ 203 հոգի: Այսպիսով, մինչև 1944թ. Կիրովի անվան գործարանից ռազմաճակատ էին մեկնել 2015 հոգի[172]:

Դրությունը առավել ծանր էր հաստոցաշինական գործարանում, որտեղից պատերազմի սկզբում ռազմաճակատ էր զորակոչվել գործարանի բանվորների ու ծառայողների 80 %-ը[173]:

Հանրապետության մյուս արդյունաբերական ձեռնարկու-

---

[171] *В.Б.Тельпуховский*, Обеспечение рябочими кадрами в первый период Отечественной войны. "Вопросы истории", 1958, N 11, с.26.

[172] Կիրովի անվան կոմբինատի արխիվ, ֆ.1, գ.015/524:

[173] ՀԱԱ, ֆ.1, g.30, գ.208, թ.9:

թյունների բանվորների և ծառայողների քանակակազմի զգալի մասը նույնպես համալրել էր ռազմաճակատը:

Պատերազմի սկզբից երևան եկած դժվարություններից մեկը արդյունաբերական ձեռնարկությունները բանվորական կադրերով համալրելն էր:

Խաղաղ պայմաններում բանվորական ուժերի վերարտադրությունը իրականացվում էր քաղաքային և գյուղական բնակչության հաշվին: Պատերազմի պայմաններում ստեղծված առանձնահատուկ իրադրությունն աշխատանքային ռեզերվների համալրման նոր ձևեր էր առաջադրում:

Մի շարք միջոցառումներ ձեռնարկվեցին, որոնք բանվորական ուժերի վերարտադրության ավանդական ուղիներից շեղվում էին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1941թ. հունիսի 26-ի «Ռազմական ժամանակաշրջանի բանվորների ու ծառայողների աշխատանքային ժամանակի ռեժիմի մասին» հրամանագրով ձեռնարկությունների տնօրեններին իրավունք էր տրվում բոլոր բանվորների և ծառայողների համար սահմանել 1-3 ժամվա պարտադիր արտաժամյա աշխատանք: Մինչև 16 տարեկանները կարող էին արտաժամյա աշխատել երկու ժամից ոչ ավելի: Պարտադիր արտաժամյա աշխատանքից ազատվում էին հղի կանայք՝ հղիության 6 ամսականից սկսած և երեխաներին կրծքով կերակրող կանայք՝ 6 ամիս կերակրելու ընթացքում: Պարտադիր արտաժամյա աշխատանքների համար վարձատրությունը կատարվում էր 1,5 չափով: Չեղյալ էին համարվում հերթական և լրացուցիչ արձակուրդները, դրանք փոխհատուցվում էին դրամով: Արձակուրդ տրվում էր միայն հիվանդության դեպքերում[174]:

Բանվորական ուժերով երկրի արդյունաբերական ձեռնարկություններն ապահովելու գործում կարևոր նշանակություն ունեցավ աշխատանքային ռեզերվները պլանավորող և տնօրինող պետական ապարատի վերակառուցումը: 1941թ. հունիսի 30-ին ստեղծվեց ԽՍՀՄ ժողկոմխորհի բյուրոյին կից

---

[174] Решения партии и правительства по хозяйственным вопросам, т.3, с.37-38.

բանվորական ուժի հաշվառման և վերաբաշխման կոմիտե: Համանման կոմիտեներ կամ բյուրոներ ստեղծվեցին նաև միութենական հանրապետություններում: Նորաստեղծ այս գերատեսչությանը իրավունք էր վերապահվում բանվորներին և ծառայողներին անհրաժեշտության դեպքում տեղափոխել այլ աշխատանքի անկախ նրանց գերատեսչական պատկանելությունից և տարածքային տեղավորվածությունից:

1941թ. հուլիսի 28-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը որոշում ընդունեց արտադրություն եկած թոշակառուների թոշակի պահպանության վերաբերյալ: Այլ կերպ ասած, այս միակ դեպքն էր, որ գործի չէին դրվում վարչահրամայական սանկցիաները, այլ կիրառվում էին տնտեսական լծակները:

Վերոհիշյալ միջոցառումներով դեռևս չէին ապահովվում երկրի բանվորական ուժերի մոբիլիզացիայի խնդիրները: Դրանք կամ թերի էին, կամ էլ անարդյունավետ: Թերևս սրանով պիտի բացատրել հետագայում նորանոր սանկցիաների կիրառումը: Այսպես, 1941թ. դեկտեմբերի 26-ից կիրառության մեջ դրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը «Բանվորներին և ծառայողներին ռազմական արդյունաբերական ձեռնարկություններից ինքնակամ հեռանալու համար պատասխանատվության ենթարկելու մասին»[175]: Այդ հրամանագրով ռազմական արդյունաբերության բոլոր բանվորները և ծառայողները համարվում էին մոբիլիզացիայի ենթարկված և մշտական աշխատանքի համար ամրացվում էին ձեռնարկություններին: Աշխատանքն ինքնագլուխ լքողների համար սահմանվեցին 5-8 տարվա բանտարկություն՝ գործերի քննությունը և դատավարությունը հանձնելով զինվորական տրիբունալներին[176]:

Այս հրամանագրին հաջորդում է մեկ ուրիշը՝ «Ռազմական ժամանակաշրջանում քաղաքային աշխատունակ բնակչությանը մոբիլիզացնելու արտադրությունում և շինարարությունում աշխատելու համար»՝ ընդունված 1942թ. փետրվարի 13-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից:

---

[175] "Правда", 27 декабря 1941г.

[176] Նույն տեղում:

Սրանով քաղաքային աշխատունակ բնակչությունը ըստ բնակության վայրերի մոբիլիզացվում էր առաջին հերթին ավիացիոն, տանկային, զենքի ու զինամթերքի, մետալուրգիական, քիմիական և վառելիքային արդյունաբերության մեջ աշխատելու համար:

Արտադրության ու շինարարության մեջ աշխատելու էին 16-55 տարեկան տղամարդիկ և 16-45 տարեկան կանայք, ովքեր չէին աշխատում պետական հիմնարկներում ու ձեռնարկություններում:

Մոբիլիզացիայից ազատվում էին՝

ա) 16-ից 18 տարեկան այն պատանիներն ու աղջիկները, ովքեր նախատեսված էին ֆաբրիկագործարանային դպրոցներում, արհեստագործական և երկաթուղային ուսումնարաններում սովորելու:

բ) Կրծքի և մինչև 8 տարեկան երեխաներ ունեցող այն կանայք, որոնց ընտանիքում չկար այդ երեխաներին խնամող մեկ ուրիշը:

գ) Բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների սովորողները:

Այս օրենքով աշխատանքից խուսափողները ենթակա էին մինչև մեկ տարի ազատազրկման[177]:

Վարչական միջոցների գործադրումով և հատկապես հիշյալ հրամանագրի իրականացումով հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում զգալիորեն աճեց բանվորական ձեռքերի ներհոսքը: 1942թ. վերջերին հանրապետության արդյունաբերությունը արդեն 92 %-ով ապահովված էր բանվորական ուժով[178]: Մինչդեռ ԽՍՀՄ-ի արդյունաբերությունը շարունակում էր աշխատող ձեռքերի սուր պահանջ զգալ: 1945թ. ԽՍՀՄ-ի արդյունաբերության բանվորները 1940թ. համեմատությամբ կազմում էին 87 %-ը[179]:

1942թ. հանրապետությունում աշխատանքի ընդունվեցին

---

[177] Директивы КПСС и Советского правительства, с.722-723.

[178] ՀԱԱ, ֆ. 1, ց.31, գ.6, թ.194:

[179] Г.С.Кравченко, Экономика СССР в годы Великой Отечественной войны, с.227.

16123 նոր բանվորներ[180]: Միայն Գյումրիի տեքստիլ, մսի կոմբինատներում և երկաթուղային հանգույցում 1942թ. աշխատանքի ընդունված նոր բանվորների թիվը հասավ 2300 հոգու[181]: Արտադրություն եկած բանվորական ուժի մեջ զգալի էր կանանց տեսակարար կշիռը: 1942թ. արտադրության մեջ ընդգրկված 16123 բանվորներից 7889-ը կանայք էին[182]: Կանանց տոկոսը բարձր էր Գյումրիում: 1941-1942թթ. նոր աշխատանքի ընդունված կանանց թիվը այնտեղ հաշվվում էր 6153:

Կոլտնտեսային գյուղացիությունը թե նախապատերազմյան և թե պատերազմի տարիներին բանվորական կադրերի համալրման հիմնական աղբյուրներից մեկն էր: 1940թ. հանրապետության կոլտնտեսությունների անդամների թիվը կազմում էր 394178 մարդ, որոնցից աշխատունակ էին 286306-ը: 1941թ. այս թվերը համապատասխանաբար կազմեցին 400188, 248661: 1942թ. կոլտնտեսականների թիվը 371408 էր, որոնցից 222193-ը աշխատունակներ էին[183]: Բերված թվերը ցույց են տալիս, որ հանրապետության գյուղացիության կազմի մեջ պատերազմի առաջին և երկրորդ տարիներին տեղի ունեցան քանակական փոփոխություններ: Դրա հետ միասին, ինչպես ցույց են տալիս նույն թվերը, նշված ժամանակաշրջանում գյուղացիության կազմի մեջ կատարվեցին նաև կառուցվածքային փոփոխություններ: Նվազեց աշխատունակ կոլտնտեսականների թիվը: 1940թ. համեմատությամբ 1941թ. աշխատունակ կոլտնտեսականների թիվը կրճատվեց 37645-ով, իսկ 1942թ. 1941թ. համեմատությամբ՝ 26468-ով: Այս միտումը, թեպետև ավելի նվազ չափով, պահպանվեց նաև 1943, 1944 թթ.: Փոփոխություններ տեղի ունեցան գյուղական բնակչության սեռային կազմի մեջ: Ռազմաճակատ մեկնելու հետևանքով էապես կրճատվեց տղամարդկանց թիվը:

Կոլտնտեսային աշխատուժի մեջ ունեցած նշված փո-

---

[180] ՀԱԱ, ֆ.1, ց. 31, գ. 6, թ. 194:

[181] Նույն տեղում, ֆ.1, ց.31, գ.6, թ.194:

[182] Նույն տեղում:

[183] *Հ.Հարությունյան,* Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, էջ 47:

փոխություններից բացի, գյուղը լուրջ դժվարություններ էր կրում նաև գյուղատնտեսական մեքենաների և քաշող ուժի զգալի մասը ռազմաճակատի համար մոբիլիզացնելու հետևանքով: Չնայած վերոհիշյալ, ինչպես նաև ծագող նորանոր դժվարություններին՝ գյուղական աշխատանքային ռեզերվները մնում էին բանվորական ուժերի համալրման հիմնական աղբյուրը:

Բանվորական ուժերի հավաքագրումը, վերաբաշխումը և տեղավորումը իրականացնում էր ՀԽՍՀ ժողկոմխորհին կից ստեղծված բանվորական ուժերի հաշվառման, մոբիլիզացման և վերաբաշխման բյուրոն:

1941թ. դեկտեմբերին Կապանի կոմբինատում աշխատելու համար հավաքագրվեց 40, իսկ 1942թ.՝ 135 մարդ[184]: Հրազդանի շրջանի գյուղերից 600 հոգի հավաքագրվեց Երևանի թիվ 447 գործարանի շինարարության վրա աշխատելու համար[185]: 1943թ. բանվորական ուժի հաշվառման ու վերաբաշխման բյուրոյի կազմած հաշվետվության համաձայն, հավաքագրվել էին 28358 հոգի, որոնցից 18300-ը գյուղացիներ էին[186]:

Հանրապետության բանվորական կադրերի պակասը կոլտնտեսային գյուղացիների հաշվին լրացնելով՝ դեռևս չէր նշանակում, թե ռազմական տնտեսության հիմնական հարցերից մեկը լուծվեց: Խորհրդային Միության տնտեսության շատ ճյուղերում եղած աշխատանքային ծանր պայմանները, աշխատանքի խստագույն ռեժիմը, սոցիալական ոլորտի բարձիթողի վիճակը, աշխատանքի ու աշխատավարձի միջև եղած անհամապատասխանությունը և այլ գործոններ հարկադրել էին շատերին լքել իրենց աշխատատեղերը և «տաքուկ անկյուններ» փնտրել ոչ արտադրական ոլորտներում՝ խանութներում, տարբեր գերատեսչություններում, սպասարկման ոլորտում և այլուր: Հարկավոր էր այս ուժերին վերաբաշխել արտադրության մեջ: Մյուս կողմից՝ որքան էլ տարօրինակ էր, որոշ ձեռնարկություններում նկատվում էր աշխատանքային ուժերի

---

[184] ՀԱԱ, ֆ.1, ց.3, գ. 18, թ. 120:

[185] Նույն տեղում, թ.49:

[186] ՀՀ վիճակագրական վարչության ընթացիկ արխիվ, հ.1 (ինվենտար թիվ 179, 194), գործ 14, թերթ 4-5:

վատնում - շռայլում այն դեպքում, երբ շատերում, ինչպես տեսանք, զգացվում էր նրանց խիստ կարիքը: Բանվորական ուժերի ավելցուկը վարչահրամայական մեխանիզմի արդյունք էր: Աշխատանքի արտադրողականության ցածր լինելը, արտադրության անարդյունավետությունը ձեռնարկություններին հարկադրում էին պահել բանվորական ավելցուկ ուժեր: Սաստկացող վարչահրամայական մեթոդների պայմաններում բարձր տեմպերով աճել էր թե՛ կառավարման ապարատը և թե՛ ոչ արտադրական ոլորտի աշխատողների թիվը:

Բանվորական ուժերի վերոհիշյալ ռեզերվները երևան բերելու համար քարոզչության ծավալման հետ մեկտեղ, որը կանոնավոր կերպով իրականացվում էր մարդկանց գիտակցականության ու հայրենասիրությանը դիմելով, շատ ավելի արդյունավետ էր լինելու վարչական նոր միջոցների գործադրումը: Հենց այդ գաղափարի արգասիք էր ԽՍՀՄ ժողկոմխորհի՝ 1941թ. հուլիսի 23-ի ընդունած որոշումը, ըստ որի միութենական հանրապետությունների կառավարություններին իրավունք էր տրվում պարտադիր կարգով բանվորներին ու ծառայողներին, անկախ իրենց գերատեսչական ու տարածքային պատկանելությունից, տեղափոխել արտադրության ոլորտը:

Բանվորական ուժերի հաշվառման մոբիլիզացման ու վերաբաշխման բյուրոն Երևան քաղաքի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններից բանվորական կադրերի ավելցուկը տեղաբաշխեց հաստոցաշինական, մեխանիկական և շարժիչավերանորոգման գործարանների վրա: Աշխատանքի բյուրոն պարզեց նաև, որ գիտական հաստատություններում ու բուհերում, պետական հիմնարկներում տարբեր պաշտոններ են զբաղեցնում նախկին որակյալ շատ բանվորներ, սրանց բոլորին նույնպես մոբիլիզացրին գործարաններում աշխատելու:

Մի շարք ձեռնարկություններում, չնայած աշխատուժի ավելցուկին, այդուհանդերձ պահանջվում էին լրացուցիչ ուժեր: Այսպես, 1942թ. տեքստիլ արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկությունները պահանջում էին 2500 բանվոր, մինչդեռ հայտնի էր, որ այդ ճյուղի ձեռնարկություններում կար

107 բանվորի ավելցուկ: Համանման ձևով 182 բանվոր ավելցուկ ունեին նաև տեղարդժողկոմատի ձեռնարկությունները[187]: Այս երևույթը, ինչպես արդեն նշվեց, արդյունք էր արտադրության անարդյունավետության, որը հարկադրում էր ձեռնարկություններին աշխատանքային ձեռքերի ավելցուկի հաշվին փոխհատուցել արդյունաբերության մեջ դրսևորված այդ բացը:

Հանրապետության բանվորական կադրերի համալրման գործում զգալի էր երկրի արևմտյան շրջաններից էվակուացված բնակչության դերը: 1942թ. սկզբներին Հայաստանում բնակություն էր հաստատել 3,5 հազար մարդ, իսկ նույն թվականի հոկտեմբերին էվակուացվածների թիվը հասավ գրեթե 22 հազարի[188]: Այս նշանակում էր, որ Հայաստանի բանվոր դասակարգը թե՛ քանակական և թե՛ որակական առումով էական համալրում էր ստանում, որովհետև էվակուացվածների զգալի մասը նաև բարձր որակավորում ունեցող աշխատունակ բանվորներ էին:

Ժողովրդական տնտեսության մեջ չընդգրկված բնակչության մեջ նույնպես աշխատանքային ռեզերվներ կային, որոնց ներգրավումն արտադրության մեջ ուներ ռազմա-տնտեսական նշանակություն: Բնակչության այդ զանգվածներից էին տնային և անձնական օժանդակ տնտեսություններում աշխատող կանայք, աշխատունակ հաշմանդամները, թոշակառուները: Կանայք զանգվածորեն ներգրավվեցին արտադրության մեջ և կարճ ժամանակամիջոցում սկսեցին տիրապետել տեխնիկային: Նրանցից շատերն արտադրական պլանները կատարում էին մի քանի անգամ: Արտադրության մեջ հետզհետե աճեց կնոջ տեսակարար կշիռը: Պատերազմի տարիներին Հայաստանում բանվոր-ծառայողների թվի մեջ կանանց թիվը աճեց մոտավորապես 19 հազարով[189]:

Միայն 1942թ. փետրվարի 13-ի հրամանի իրագործմամբ 2300 կին Գյումրիում աշխատանքի անցավ տեքստիլ, մսի կոմբինատներում և երկաթուղային հանգույցում, իսկ ընդհանրապես

---

[187] ՀԱԱ, ֆ.1, ց.31, գ.6, թ.192-193:

[188] Советская Армения, с.752.

[189] *Հ.Հարությունյան,* Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, էջ 74:

1941-1942 թթ. քաղաքում աշխատանքի անցավ 6153 կին:

Կանայք աշխատում էին Երևանի հաստոցաշինական գործարանում, Գյումրիի դեպոյում, լեռնամետալուրգիական արդյունաբերության մեջ և այլուր: Կապանի կոմբինատում, օրինակ, աշխատում էր 400 կին[190]:

Մեծացավ կնոջ դերը նաև թեթև ու սննդի արդյունաբերական ձեռնարկություններում, որտեղ նրանց տեսակարար կշիռը բարձր էր:

Պատերազմի տարիներին բանվորների շարքերը լրացրին նաև հաշմանդամները: 1943թ. հունվարի 20-ի՝ ԽՍՀՄ կառավարության որոշման համաձայն ՀԽՍՀ ժողկոմխորհը որոշեց պատերազմի հաշմանդամներին ապահովել աշխատանքով: Նրանց վրա չէր տարածվում հավելյալ աշխատանքը, պահպանվում էր թոշակը անկախ աշխատավարձի չափից: Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ եղավ հաշմանդամներից նոր մասնագետներ պատրաստելու խնդրին: Ընդարձակվեց հաշմանդամներին տարբեր մասնագիտություններ սովորեցնելու ցանցը, նրա մեջ ընդգրկվածների թիվը Երևանում հասցվեց 350-ի, նախկին 250-ի փոխարեն, Գյումրիում՝ 150-ի (նախկին 50-ի փոխարեն): Վանաձորում և Դիլիջանում որոշվեց բացել տարբեր մասնագիտությունների կուրսեր 30 և 20 մարդու համար:

Որոշվեց հաշմանդամների համար կառուցել նոր տներ և հանրակացարաններ[191]: Հաշմանդամները մեծ թիվ էին կազմում հանրապետությունում: 1943թ. սկզբներին կար 16400, 1944թ. 23,600, իսկ 1945թ. 26000 հաշմանդամ:

Ինչպես տեսնում ենք, պատերազմի տարիներին աստիճանաբար աճեց հաշմանդամների թիվը: Նման միտում նկատվեց նաև բանվորական կադրերի շարքերը լրացրած հաշմանդամների թվում: 1943թ. 16.400 հաշմանդամից արդյունաբերության մեջ աշխատեցին 9400-ը (57,4 %), իսկ 1945թ. 25000-ը կամ 89 %-ը[192]:

---

190 ՀԱԱ, ֆ.1, ց.31, գ.6, թ. 279-280:

191 Советская Армения, с.156.

192 *Հ.Հարությունյան,* Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, էջ 82:

Սոցիալական ապահովության ժողկոմի վրա դրվեց 1943թ. 800 բանվորական մասնագետ կադրեր պատրաստելու խնդիրը: Սահմանվեցին ինչպես այդ մասնագիտությունները, այնպես էլ մասնագետների քանակը[193]:

Բանվորների համալրման աղբյուրներից էին կենսաթոշակառուները և աշխատունակությունը մասամբ պահպանած հաշմանդամները: Բացի հայրենասիրական մղումներից, որոնցով առաջնորդվեցին պատերազմի տարիներին հազարավոր թոշակառուներ և վերադարձան արտադրություն, հարկ է արձանագրել նաև այս ուղղությամբ կառավարության ձեռնարկած միջոցառումների ոչ պակաս կարևորությունը: Մասնավորապես դա վերաբերում է տնտեսական այնպիսի լծակ օգտագործելուն, ինչպիսին արտադրության մեջ աշխատող կենսաթոշակառուի թոշակի պահպանումն էր անկախ նրա ստացած աշխատավարձի չափից: Արդեն հանգստի անցած բանվորներից շատերը կրկին վերադարձան իրենց նախկին աշխատատեղերը, որպեսզի փոխարինեն ռազմաճակատ մեկնածներին:

Հայաստանի բանվորական կադրերի պակասը լրացրին նաև շարային ծառայությանը ոչ պիտանի տարիքավոր ռազմիկները, որոնք ուղարկվել էին պաշտպանական նշանակություն ունեցող ձեռնարկություններում աշխատելու: Հանրապետության զինկոմիսարիատի տվյալներով 1945թ. նրանց թիվը կազմում էր 10469[194]:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունը զարգացավ տարածուն ճանապարհով, որը սակայն չդարձավ բանվորական կադրեր պատրաստելու հիմնական ձևը: Բանվորական կադրերի պատրաստման հիմնական ձևը մնաց արտադրությունը: Ձեռնարկված վարչական և ուրիշ միջոցառումների շնորհիվ հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները համալրվեցին բանվորական ձեռքերով:

---

[193] Советская Армения, с.212.
[194] ՀԱԱ, ֆ.1, ց.33, գ.8, թ.23:

Գ Լ Ո Ւ Խ Դ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

ԽՍՀՄ-ում դեռևս մինչև պատերազմը սննդարդյունաբերության և սպառման ապրանքների շատ տեսակների արտադրությունը զգալի չափով կրճատվեց, որը հետևանք էր սոցիալիստական տնտեսության առանձնահատկության, նրա տարբեր ճյուղերի անհավասարաչափ զարգացման: 1939թ. արդյունաբերության համախառն արտադրանքն աճեց 14,7 %-ով: Այն պայմանավորված էր պաշտպանական ժողկոմատների արտադրանքի աճով: Վերջինիս արտադրանքի աճը հասավ 46,5 %-ի: Մինչդեռ սննդի արտադրանքն աճեց ընդամենը 8,8 %-ով[195]: Սպառման ապրանքների արտադրության պլանը 1939 - 1940թթ. չկատարվեց: 1940թ. արդյունաբերական արտադրանքի աճը նորից ապահովվեց ի հաշիվ պաշտպանական արդյունաբերության:

Գյուղատնտեսության բնագավառում ևս 1938, 1939թթ. արդյունքները գոհացուցիչ չէին: 1939թ. կերի պակասը հարկադրեց անասունները մորթել: Նույն թվականին ՀամԿ(բ)Կ ԿԿ մայիսյան պլենումի պահանջով գյուղացիներին պատկանող 8 միլիոն հա տնամերձ հողերից 2 միլիոն հա կրճատվեց, որը շուկայական առևտրի և գյուղացիների ինքնամատակարարման կարևոր աղբյուր էր, գյուղատնտեսական արտադրանքը էականորեն պակասեց:

Սննդամթերքի և սպառման առարկաների արտադրության կրճատումը արդյունք էր ոչ միայն նյութական ահռելի միջոցները ռազմական արդյունաբերության մեջ ներդնելուն, այլև տնտեսությունն ընդհանրապես վարչահրամայական մեթոդներով ղեկավարելուն:

Սննդարդյունաբերության հումքային բազան՝ գյուղատնտեսությունը, ծայրահեղ քայքայված վիճակում էր: Համա-

---

[195] *Е.А.Осокин*, Люди и власть в условиях кризиса снабжения 1939-1941 годы. Отечественная история, 1995, N 3. с.20.

տարած կոլեկտիվացումը հանգեցրեց գյուղացիության ունեզրկմանը, ոչնչացրեց գյուղատնտեսության արտադրողական ուժերը: Անասունների գլխաքանակը կրճատվեց կիսով չափ: Բռնություններն ու գյուղացիների զանգվածային փախուստները քայքայեցին աշխատանքային ներուժը:

Պետությունը գյուղական տնտեսությունների արտադրական-տեխնիկական սպասարկման դիմաց, որն իրականացվում էր ՄՏԿ-ի միջոցով, իբրև պարտադիր մատակարարում յուրացնում էր բնամթերքի ձևով ապրանքային հացահատիկի 95 %-ը: Գյուղատնտեսական մթերքների արտադրության վրա կատարվող ծախսերը ծածկվում էին ընդամենը 35 %-ով՝ ի հաշիվ պետության կողմից սահմանված գների, որոնք խորհրդանշական էին[196]: Պետությունը, սակայն, հարկադիր կարգով յուրացնում էր ոչ միայն կոլտնտեսությունների արտադրած բնամթերքը, այլև կոլտնտեսականների անձնական օժանդակ տնտեսությունների արդյունքը: Կոլտնտեսականներն ի թիվս այլ մթերքների պարտավոր էին պետությանը նաև տալ կաթ ու միս՝ անկախ այն բանից, նրանք անասուն ունեին, թե ոչ[197]:

Նման մեթոդներով գյուղատնտեսության արտադրության ղեկավարումն այն հետևանքն ունեցավ, որ աճելու փոխարեն գյուղատնտեսական արտադրանքի որոշ տեսակներ նվազեցին: Կտրուկ նվազեց բնակչության կենսամակարդակը: Եթե 1928թ. մեկ շնչի հաշվով հաշվվում էր 28 կգ միս, ապա 1937թ. այն կազմեց 17 կգ: Ձուն նույն ժամանակամիջոցում մեկ շնչի հաշվով կրճատվեց 40 %-ով: Ընդհանուր առմամբ 1940թ. մեկ շնչին հասնող գյուղատնտեսական արտադրանքը 1928թ. համեմատությամբ կրճատվեց 14 %-ով, իսկ 1913թ. համեմատությամբ չաճեց: Նախապատերազմյան տարիներին ժողովրդի կենսամակարդակի նվազելու ապացույց էր նաև 1939թ. համեմատությամբ 1940թ. ապրանքաշրջանառության ծավալի նվազումը 7 %-ով, արդյունաբերական ապրանքներինը՝ 11 %-ով[198]:

Տնտեսության ճգնաժամը խորացավ հատկապես պատե-

---

[196] *Б.П.Орлов*, Истоки перестройки. ЭКО, 1989 N 5, с. 9.

[197] Նույն տեղում:

[198] Նույն տեղում, էջ 11-12:

ռազմի տարիներին: Եթե 1940թ. արդյունաբերությունը թողարկեց 3,9 միլիոն մետր բամբակյա գործվածք, ապա 1942թ. 1,6 միլիոն մետր: Կոշկեղենի արտադրությունը 211 միլիոն զույգից նվազեց 52,7 միլիոն զույգի, շաքարավազը 2165 հազար տոննայից մինչև 114 հազար տոննայի[199]:

Բացի այն բանից, որ սոցիալիստական տնտեսությունն անկարող էր բավարարել մարդկանց ամենատարրական պահանջմունքները, եղած միջոցները բաշխելիս դրսևորվում էր խտրականություն: Հատուկ ուշադրություն էր դարձվում «կարևոր նշանակության» և «որոշիչ նշանակության» արդյունաբերական ու գյուղատնտեսական շրջանների բնակչությանը ապրանքներով բավարարելուն: Ինքնըստինքյան հասկանալի է, որ նման եղանակով անտեսվում էին մյուս շրջանների բնակչության շահերը:

Երկրի բնակչության որոշ մասի պահանջմունքները բավարարելու նպատակով կյանքի կոչվեց մի շարք ապրանքների նորմավորումը, որը թեև պատերազմի պայմաններում ուսումնասիրողների կողմից դիտվում է իբրև միակ ճիշտ միջոցը, սակայն մոռացության է տրվում այն, որ դա սոցիալիստական տնտեսությանը ուղեկցել է նաև խաղաղ ժամանակներում:

Այսպիսով, պարենային և ոչ պարենային մի շարք ապրանքների բաշխումը սկսվեց իրականացվել քարտային համակարգով: Առաջինը դրան անցան Մոսկվան և Լենինգրադը 1941թ. հուլիսի 17-ին և 18-ին: Պարզվում է, որ ինչպես բոլոր դեպքերում,այնպես էլ այս անգամ, այսինքն՝ ապրանքների բաշխման քարտային համակարգին անցնելիս Մոսկվայի և Լենինգրադի «առաջավոր փորձը» դրական ազդեցություն է ունեցել երկրի մյուս շրջանների վրա, երբ վերջիններս անցան բաշխման այդ եղանակին[200]:

Նորմավորված սննդամթերքի թվում էին հացը, շաքարը, միսը, ձուկը, յուղը, ձավարեղենն ու մակարոնեղենը: Հիշյալ ապրանքների բաշխումը կատարվում էր անհավասարաչափ:

---

[199] *А.Любимов*, Торговля и снабжение в годы Великой Отечественной войны. М., 1968 с.14.

[200] *А.Любимов*, Торговля и снабжение, с.21.

Այս հանգամանքը պատճառաբանվում էր ոչ միայն կատարվող աշխատանքի բնույթով, բանվորների տարիքով, այլև ժողովրդական տնտեսության, երկրի պաշտպանության համար դրանց ունեցած նշանակությամբ:

Բաշխման այս եղանակը բխում էր ստալինյան այն դոգմայից, ըստ որի միևնույն բարդությունը, որակավորումը, բայց ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում կատարվող աշխատանքներն ունեն տարբեր նշանակություն, և հետևաբար դրանք տարբեր չափերով են վճարվում: Այս սկզբունքը գործում էր դեռևս նախապատերազմյան ժամանակներում: Մեկ ուրիշ դոգմայի համաձայն ճյուղերը բաժանվում էին «արտադրականի» և «ոչ արտադրականի» և ըստ այդմ առաջինում աշխատողները շատ ավելի բարձր էին վարձատրվում, քան երկրորդում աշխատողները:

Այսպիսով, պատերազմի տարիներին կյանքի կոչված բնակչության նյութական տարբերակված մատակարարումը բխում էր ավելի շուտ հավասար աշխատանքի դիմաց անհավասար վարձատրության ստալինյան դոգմայից, քան ժողովրդական տնտեսության ու երկրի պաշտպանության համար դրանց ունեցած նշանակությունից:

Բնակչությունը բաժանվեց 4 խմբի

ա) բանվորներ ու նրանց հավասարներ

բ) ծառայողներ ու նրանց հավասարներ

գ) խնամարկյալներ ու նրանց հավասարներ

դ) երեխաներ (մինչև 12 տարեկան):

Առաջին խմբի մեջ էին մտնում բանվորները, նրանց աշակերտները, ձեռնարկությունների տնօրենները, ինժեներները, տեխնիկները, արտադրամասերի և շինարարական տեղամասերի պետերը, կոնստրուկտորները, արտադրության վարպետներն ու հրահանգիչները, արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարության, կապի, տրանսպորտի, առևտրի աշխատողները, մանկավարժները, բժիշկները, ուսանողները, տեխնիկումների սովորողները և այլն:

Հիշյալ աշխատողներն ըստ իրենց մատակարարումների տարբերակվեցին երկու՝ 1-ին և 2-րդ կարգի: Առաջին կարգի մեջ

մտան պաշտպանության, ածխի, նավթի, քիմիական, ռետինի և ցեմենտի, արդյունաբերության սև ու գունավոր մետալուրգիայի, էլեկտրաէներգիայի, ծանր, միջին և ընդհանուր մեքենաշինության ու արդյունաբերության ուրիշ ճյուղերի աշխատողները: Ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի բանվորներն ու ծառայողները և քաղաքային մնացած բնակչությունը հաց ստանում էր ըստ 2-րդ կարգի նորմայի:

Սկզբում սահմանվեցին հացի և շաքարի մատակարարման հետևյալ չափերը՝

	հաց օրական (գրամներով)		Շաքար և հրուշակեղեն ամսական (գրամներով)	
	1-ին կարգ	2-րդ կարգ	1-ին կարգ	2-րդ կարգ
Բանվորներ	800	600	800	600
Ծառայողներ	500	400	600	600
Խնամարկյալներ	400	400	400	400
Մինչև 12 տարեկան երեխաներ	400	400	600	400

Այս քանակությամբ հնարավոր չեղավ բնակչությանն ապահովել պարենամթերքով, ահա թե ինչու հարկ եղավ 1942թ. զգալիորեն պակասեցնել շաքարի, 1943թ. նաև հացի նորմաները:

1942թ. ապրիլից Մոսկվայի ձեռնարկությունների բանվորները և հատուկ ցուցակներով սպասարկվողներն ամսական ստանում էին 500 գրամ, իսկ մյուս ձեռնարկությունների բանվորները 400 գրամ շաքար, ծառայողները 300, խնամարկյալները 200, երեխաները 300 գրամ: Իսկ 1943թ. նոյեմբերից բանվորներն օրական ստանում էին 500-ից 700 գրամ հաց, ծառայողները 400-ից 450, խնամարկյալներն ու

երեխաները 300 գրամ:

Տարբերակվեցին նաև մսի, ձկան, յուղի, ձավարեղենի և մակարոնեղենի նորմաները:

Ծանր արդյունաբերության և պաշտպանական արդյունաբերության աշխատողները հատուկ ցուցակներով ստանում էին ամսական 2200 գրամ ձուկ և միս, 600 գրամ ճարպ և 1500 գրամ մակարոնեղեն, իսկ մյուսները ստանում էին հետևյալ չափերով՝ արդյունաբերության մյուս ճյուղերի բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողները, տրանսպորտի և կապի աշխատողները՝ 1800 գրամ ձուկ և միս, 400 գրամ ճարպ, 1200 գրամ ձավար և մակարոնեղեն:

	ձուկ և միս	ճարպ	ձավար և մակարոնեղեն
Ծառայողներ	1200 գրամ	300 գրամ	800 գրամ
Խնամարկյալներ	500 գրամ	200 գրամ	600 գրամ
Մինչև 12 տարեկան երեխաներ	400 գրամ	300 գրամ	800 գրամ

1942թ. հունվարի 31-ի՝ ՀԽՍՀ առևտրի ժողկոմի հրամանի համաձայն հիշյալ նորմավորումը տարածվում էր Ալավերդու պղնձաձուլական գործարանի, Ալավերդու, Ախթալայի և Շամլուղի հանքվարչությունների, Զանգեզուրի պղնձի հանքերի, Ղափանի ֆաբրիկայի, Քանաքեռհէկի, Հայէներգոյի Երևանի, Գյումրիի և Քոլագերանի հէկերի, Երևանի կարբիդի և Վանաձորի քիմկոմբինատի հատուկ արտադրամասերի բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների վրա: Այս նորմաները տարածվեցին նաև մյուս աշխատողների վրա[201]:

1942թ. ապրիլի 8-ի՝ ԽՍՀՄ ժողկոմխորհի որոշման համաձայն ՀԿ(բ)Կ ԿԿ բյուրոն ապրիլի 21-ին որոշում կայացրեց

[201] ՀԱԱ, ֆ.193, ց.4, գ.34, թ.1-2:

«ՀԽՍՀ-ի քաղաքներում և բանվորական ավաններում արդյունաբերական ապրանքների վաճառքի համար քարտային համակարգ մտցնելու մասին[202]:

Պատերազմի տարիներին կրճատվեց հանրապետության սննդարդյունաբերության և լայն սպառման ապրանքների արտադրությունը: Հանրապետության սննդարդյունաբերության արտադրանքը կրճատվեց 30 %-ով, իսկ թեթև արդյունաբերության արտադրանքը՝ 1,7 անգամ: Կրճատվեց նաև տեղական արդյունաբերության արտադրանքի այդ տեսակների արտադրությունը:

Հանրապետությունում արտադրվող սննդի արդյունաբերության արտադրանքի զգալի մասը հատկացվում էր անդրկովկասյան ռազմաճակատին, սակայն վերջինիս պահանջներն օրեցօր մեծանում էին:

Ի պատասխան 1943թ. ռազմաճակատի հրամանատարության՝ պարենամթերքի մատակարարումը ավելացնելու նորանոր պահանջների, հանրապետության ժողկոմխորհի նախագահ Ա.Փիրուզյանն առանց թաքցնելու պատասխանում էր, որ այլևս ոչ մի հնար չկա պակասեցնել բնակչությանը բաշխվող պարենամթերքի չափը, որը հասցվել էր նվազագույնի: Այդուհանդերձ նա խոստանում էր ռազմաճակատին լրացուցիչ տրամադրել 10 տ յուղ և 95 տ շաքար: 1942թ. չորրորդ եռամսյակում պլանով նախատեսվել էր բանակին հատկացնել 150 տ տնտեսական օճառ, 35 տ ծավարեղեն, 200 տ վայրի պտուղների չիր, 2 միլիոն պայմանական տուփ մսաճարպի պահածո և այլն[203]:

Այս նույն ժամանակ հատկապես սրվեց բնակչությանը հացով բավարարելու հարցը: Հոկտեմբերին հանրապետության ղեկավար օրգանների որոշումով 1942թ. բերքից լրացուցիչ 9150 փութ հաց հատկացվեց պետությանը: Պետությունը հացի փոխարեն կարտոֆիլ վաճառեց բնակչությանը՝ 100 գրամ հացի դիմաց 400 գրամ կարտոֆիլ հարաբերակցությամբ: Հայկոոպին թույլատրվեց թխվող հացին ավելացնել 5-10 % կարտոֆիլ[204]:

---

[202] ՀԱԱ, ֆ.1, ց.31, գ.13, թ.51:
[203] ՀԱԱ, ֆ.113, ց.32, գ.69, թ.116-117:
[204] ՀԱԱ, ֆ.1, ց.31, գ.23, թ.45:

Քարտեր մտցնելուց հետո կրճատվեց հացի սպառումը: 1942թ. հունվարին Երևանում օրական 170 տ հացի փոխարեն սկսեց վաճառվել 125 տ, որից 100 տ քարտերով, 25 տ ազատ վաճառք[205]:

Հացի մատակարարման գործում մեծ չափերի էին հասնում չարաշահումները, թերակշռումները, տեխնոլոգիայի խախտումները, քարտերի ոչ ճիշտ կտրելը, նրանց բաշխման հրահանգների խախտումները և այլն: Այդ կարևոր սննդամթերքը ժամանակին չէր տեղափոխվում, գոյանում էին մեծ հերթեր:

Չարաշահումները, թերությունները տեղ էին գտել առևտրական, արտադրական, մատակարարող, վաճառող ձեռնարկություններում և կազմակերպություններում: Բանը հասել էր այնտեղ, որ պետության կողմից հատկացված սուղ միջոցները երբեմն կամ չէին իրացվում, կամ էլ մեծ ուշացումներով էին հասնում սպառողին: Գյումրիում ձկան առաջին կիսամյակի ֆոնդերը իրացվել էին 93,8, շաքար-հրուշակեղենի արտադրանքինը՝ 81,7, աղինը՝ 92, կերոսինինը և լուցկունը 90 %-ով, իսկ երրորդ եռամսյակի երկու ամսվա մսի և ձկան ֆոնդերինը՝ 44, ճարպինը՝ 66,5, շաքար-հրուշակեղենինը՝ 71, օճառինը՝ 43, կերոսինինը 40 և լուցկունը՝ 52 %-ով[206]: Հատկապես վատ էին իրացվել գործվածքի, գուլպայի և կարի արտադրանքների ֆոնդերը: Քաղաքի բնակչությունը շաքարի կտրոններով ապահովվել էր մայիսին՝ 50 %-ով, հուլիս-օգոստոսին շաքարը բաց էր թողնվել մասնակիորեն: Նույնն էր նաև օճառի և կերոսինի մատակարարման գործը[207]: Բնակչության մատակարարումը բարձիթողի վիճակում էր նաև Վանաձորում, ուր ֆոնդերը չէին իրացվել կամ իրացվել էին չնչին տոկոսով:

Պատկերը նույնն էր հասարակական և բանվորական ճաշարաններում: Դրանց թիվը կրճատվել էր սննդամթերքի պակասի, վատ սպասարկման և այլ բազում պատճառների հետևանքով: Վանաձորի չորս ճաշարաններից 1943թ. հոկտեմբերի

---

[205] ՀԱԱ, ֆ.193, ց.4, գ.38, թ.1:
[206] ՀԱԱ, ֆ.1, ց.23, գ.36, թ.46:
[207] Նույն տեղում:

տվյալներով գործել էին միայն երկուսը, իսկ 5 բուֆետներից՝ ոչ մեկը[208]: «Ալյումինմթերքի» ճաշարանից օգտվել էին աշխատողների միայն 25 %-ը, անբավարար սպասարկման պատճառով[209]: Ճաշարանները գտնվում էին հակասանիտարական վիճակում, ապահովված չէին սպասքով, հաճախ խախտվել էին ճաշերի գները և այլն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում զգալի չափով աճել էին մթերքի և արդյունաբերական ապրանքների վատնումները, հափշտակումները, չարաշահումները, թերակշռումներն ու թերաչափումները: Չարաշահումներ էին կատարել մսեղենի և կաթնեղենի ժողկոմ Դ.Վարդանյանը, պանիրտրեստի Երևանի բազայի տնօրեն Հ.Գասպարյանը, հայմատառի աշխատակիցները: Հայկոոպի և առևտրի ժողկոմատի բազաներում շրջկոոպների ներկայացուցիչները թաքցնում էին ապրանքները, դրանք շրջան չէին ուղարկում՝ շուկայում սպեկուլյատիվ գներով վաճառելու համար: Ամենից շատ չարաշահումներ էին կատարվում հացի արտադրության և առևտրի բնագավառում: 1942թ. հացի վաճառքի 507 կետերում կատարված ստուգումները բացահայտել են թերակշռման և հաշվարկախաբության 313 դեպք, կամ 61 %-ը: Այդ ժամանակաշրջանում քրեական պատասխանատվության է ենթարկվել 1671 մարդ՝ արդյունաբերական և մթերային ապրանքների վատնումների և հափշտակումների, հիմնականում հացի համար[210], թիվն, ինչ խոսք, շատ ազդու է:

Չնայած քարտային համակարգին անցնելուն, այնուամենայնիվ գոյություն ունեցող ապրանքների տարբեր՝ նորմավորված, կոլտնտեսային և կոմերցիոն գների միջև եղած մեծ տարբերություններին, երկրում տարածվում էր սպեկուլյացիան: Սննդամթերքի պակասը հնարավորություն չէր տալիս սպառողներին քարտերով ստացվելիք ապրանքների մեջ ընտրություն կատարել: Ավելին, հաճախ նշված ապրանքների փոխա-

---

[208] Նույն տեղում, ց.23, գ.36, թ.75:
[209] Նույն տեղում. ց.25, գ.31, թ.43:
[210] ՀԱԱ, ֆ.1, ց.23, գ.27, թ.111-112:

րեն տրվում էին նրանց փոխարինողները՝ մսի փոխարեն ձուկ: Վերջիններիս փոխարեն տրվում էին պահածո, շաքարի փոխարեն հրուշակեղեն կամ էլ պարզապես տրվում էին անորակ ապրանքներ:

Նորմավորված մատակարարումը ղեկավարվում էր լրիվ կենտրոնացման սկզբունքով: Միայն միութենական կառավարությունն էր իրավասու որոշելու երկրի այս կամ այն շրջանում մատակարարման հարցը, սահմանելու նրա չափերը և այլն:

Ընդսմին բնակչության մատակարարման հիշյալ համակարգը ղեկավարվում էր բավականին ուռճացած բյուրոկրատական ապարատի միջոցով: Այդ ապարատի բարձրագույն օղակը ԽՍՀՄ-ի առևտրի ժողկոմատում ստեղծված նորմավորված մատակարարման վարչությունն էր: Հաջորդը հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին և գործադիր կոմիտեներին կից մթերային և արդյունաբերական քարտերի բյուրոներն էին, որոնք 1943թ. հանձնվեցին հանրապետությունների առևտրի ժողկոմատների ենթակայությանը:

Բնակչությունը քարտերը ստանում էր ձեռնարկություններում, հիմնարկներում, հաստատություններում և տնային կառավարչություններում: Վերջիններս իրենց հերթին դրանք ստանում էին քաղաքային և շրջանային քարտային բյուրոներից:

Հիշյալ օղակներից բացի, ստեղծվեցին վերստուգիչ-հաշվառիչ բյուրոներ, որոնց խնդիրը մատակարարվողների թվի, քարտերի և դրանց դիմաց տրվող ապրանքների բաշխման վերահսկումն էր: Վերստուգիչ-հաշվառիչ բյուրոներից զատ կային նաև այլ մարմիններ, որոնք ևս վերահսկողության իրավունքներ ունեին, դրանցից էին տեղական խորհուրդների առևտրական հանձնաժողովները, ձեռնարկությունների ու հաստատությունների արհմիութենական ակտիվը և այլն:

Առանց վարանումի կարելի է ասել, որքան ավելանում էր հսկիչների ու վերահսկիչների թիվը, այնքան էլ շատանում էին

չարաշահումներն ու խախտումները: Այդ կապակցությամբ փաստերը բավականին շատ են: Օրինակ, առևտրի ժողկոմատի հաշվառման բյուրոյի 93 աշխատողներից 69-ը հեռացվել էին աշխատանքից չարաշահումների համար[211]:

Պատերազմի տարիներին առևտրի և մատակարարման հատուկ համակարգ դարձավ փակ բաշխումը: Այդ համակարգը հենվում էր բանվորական մատակարարման բաժինների վրա: 1942թ. սկզբներից ծանր արդյունաբերության, հետագայում նաև այլ ճյուղերի ձեռնարկություններում ու հաստատություններում ստեղծվեցին այդպիսի բաժիններ: Բանվորական մատակարարման բաժիններն իրենց ձեռնարկության կամ հաստատության աշխատողներին ու նրանց ընտանիքի անդամներին ապահովում էին մթերքով, լայն սպառման ապրանքներով ու կենցաղային սպասարկումով: Ինչպես նշվեց, բանվորական մատակարարման բաժինները փակ էին, նրանք սպասարկում էին միայն սեփական ձեռնարկության կամ հաստատության աշխատողներին:

Պետք է նշել, որ հիշյալ օղակները դատարկ տեղում չէին ստեղծվում: Դրանք հենվում էին «անցյալի հարուստ փորձի վրա»: Այսպես, դեռևս 30-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ-ում ստեղծվել էին տարբեր տեսակի կազմակերպությունների փակ բաշխիչներ, բանվորական մատակարարման բաժիններ, ինչպես նաև՝ գերատեսչական սպասարկման կազմավորումներ:

Բանվորական մատակարարման բաժիններին բացի պետության կողմից հատկացված ֆոնդերից հնարավորություն էր ընձեռվում զարգացնելու սեփական հումքային բազան ի հաշիվ օժանդակ տնտեսությունների: Այս քայլը նպատակ ուներ հնարավորին չափ թեթևացնել պարենային դժվարությունները: Երևանի քաղխորհրդի որոշմամբ 1942թ. քաղաքի շրջակայքի 120 հա տարածությունը հատկացվեց սննդառին, 73 հա՝ ճաշարանների տրեստին, 35 հա՝ զինառին[212]:

Օժանդակ տնտեսություններում հաճախ էին թույլ տրվում

---

[211] «Խորհրդային Հայաստան», 28 հունիսի 1944թ.:
[212] ՀԱԱ, ֆ.193, ց.4, գ.37, թ.5:

կոպիտ խախտումներ, յուրացումներ, կամ էլ այնտեղ պարզապես տիրում էին ամենաթողությունն ու անպատժելիությունը:

Մեզ արդեն ծանոթ ճաշարանների տրեստի օժանդակ տնտեսություններում 1943թ. վիճակը մխիթարական չէր: Այստեղ չէր նախապատրաստվել գարնանացանը, մեծ էր եղել անասունների անկումը, ցածր՝ կովերի կաթնատվությունը, մեկ կովի կաթնատվությունը տարեկան կազմել էր 520 լիտր: Ասենք, որ պլանով նախատեսվածն էլ առանձնապես մի բան չի եղել՝ ընդամենը 1000 լիտր: Նույն վիճակում է գտնվել Երևանի քաղաքային խորհրդի տնտեսությունը: Անասնապահական ֆերման ապահովված չի եղել կերով: Մեծ չափեր են ընդունել վատնումներն ու յուրացումները: Շինարարության համար նախատեսված գումարից վատնվել էր 15,793 ռուբլի: Բանջարաբուծությունից և ֆերմայից ստացված մթերքների վաճառքից հափշտակվել էր 91,500 ռուբլի[213]: Պարզվում է, որ բնակչությանը մթերքով ապահովելու համար ստեղծված օժանդակ տնտեսությունները վեր էին ածվել տարբեր մարդկանց հարստանալու աղբյուրի:

Այսպիսով, նախապատերազմյան տարիներին հանրապետության բնակչությանը սննդամթերքով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու գործում կային բազմաթիվ թերություններ ու բացթողումներ: Այդ ամենը արդյունք էր սննդարդյունաբերության հումքային բազայի՝ գյուղատնտեսության քայքայվածության և առաջին անհրաժեշտության ապրանքների անբավարարության: Տնտեսության այս բնագավառի ճգնաժամն ավելի խորացավ պատերազմի տարիներին: Երկրի բնակչության որոշ մասի պահանջմունքները բավարարելու նպատակով կյանքի կոչվեց սննդամթերքի և առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքների նորմավորումը: Նորմավորված ապրանքներն ու սննդամթերքը բաշխվում էին անհավասարաչափ: Բաշխման այս կարգը բխում

---

[213] «Խորհրդային Հայաստան», 31 հունվարի 1943թ.:

էր հավասար աշխատանքի դիմաց անհավասար վարձատրության ստալինյան դոգմայից:

Նորմավորված մատակարարումը ղեկավարվում էր բյուրոկրատական ուռճացած ապարատի կողմից: Գոյություն ուներ նաև առևտրի և մատակարարման այլ՝ փակ բաշխման համակարգ, որը հենվում էր բանվորական մատակարարման բաժինների վրա, որոնց հումքային բազաները՝ օժանդակ տնտեսությունները, հիմնականում արդյունավետ չէին:

Պատերազմի տարիներին բնակչությանը պարենամթերքով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու գործում մեծ տեղ էին գրավում չարաշահումները, անկազմակերպվածությունը, ամենաթողությունը և այլ բացասական երևույթներ:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախապատերազմյան տարիների Հայաստանի տնտեսությանը բնորոշ էին զարգացման բուռն տեմպերը, արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի ստեղծումն ու դրանց տարածուն զարգացումը: Հայաստանի ծանր արդյունաբերության ճյուղերից հատկապես արագ զարգացան գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը և էներգետիկան: Զարգացավ նաև սննդի ու թեթև արդյունաբերությունը:

Տնտեսությունը գիտականորեն չհիմնավորված, վարչաբյուրոկրատական մեթոդներով կառավարելու հետևանքով հանրապետության բնական հարստությունները, հումքային ու էներգետիկ պաշարները օգտագործվեցին անխնա, գիշատչորեն: Հանրապետությունում ձևավորվեցին կենսոլորտի աղտի գոտիներ:

Հայաստանի արդյունաբերության բազային ճյուղերի մեծ մասը համամիութենական սեփականության օբյեկտներ էին և ծառայում էին ռազմականացման ուղին բռնած Խորհրդային Միության ռազմատնտեսական խնդիրների լուծման համար:

Արդյունաբերության տարածուն զարգացումը նախապատերազմյան տարիներին ենթադրում էր բանվոր դասակարգի քանակական զգալի աճ: Քանակական փոփոխությունների հետ միաժամանակ տեղի ունեցան նաև որակական փոփոխություններ: Բանվորական կադրերի համալրման հիմնական աղբյուրը գյուղացիությունն էր: Գյուղի հաշվին բանվորական աշխատուժի համալրումը այն հետևանքն ունեցավ, որ հանրապետության շատ գյուղեր քայքայվեցին, կիսագրագետ կամ մասնագիտական ցածր մակարդակ ունեցող գյուղական կադրերը էապես ազդեցին աշխատանքի արտադրողականության, արտադրանքի որակի բարձրացման վրա, քաղաքներում առաջ բերեցին սոցիալական լարվածություն:

30-ական թվականների վերջերին և 1940թ. վարչաբյուրոկրատական համակարգի կողմից տնտեսության մեջ գործադրված արտակարգ օրենքներն ու բռնությունների մեթոդները հսկայական վնաս պատճառեցին թե՛ հանրապետության տնտեսությանը և թե՛ բանվոր դասակարգին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության արդյունաբերությունը վերակառուցվեց ռազմաճակատի պահանջներին համապատասխան: Առաջին անգամ Հայաստանում յուրացվեց զենքի ու զինամթերքի և արտադրանքի այլ տեսակների արտադրությունը: Ընդլայնվեցին արտադրանքի շատ տեսակների ծավալները, կառուցվեցին արտադրական նոր կարողություններ, ընդարձակվեցին հները:

Հանրապետության արդյունաբերության կառուցվածքի մեջ երևան եկան մի շարք նոր ճյուղեր, ներճյուղային կառուցվածքների մեջ ևս կատարվեցին փոփոխություններ՝ մասնագիտացումների խորացմամբ: Ինչպես խաղաղ ժամանակաշրջանում, այնպես էլ պատերազմի տարիներին ի հայտ եկան խորհրդային տնտեսությանը բնորոշ ստվերոտ կողմերը:

Նշված ժամանակաշրջանում բանվորական կադրերի պատրաստումը իրականացվում էր տարբեր ճանապարհներով՝ արտադրության մեջ և նրանից դուրս: Կադրերի համալրման հիմնական ձևը դարձավ արտադրությունը:

Արտադրության բոլոր բնագավառներում նկատվեց աշխատանքային մեծ ակտիվություն: Վարչական մի շարք միջոցառումների հետևանքով մեծացավ բանվորական ձեռքերի ներհոսքը արտադրություն:

Լուրջ դժվարություններ ստեղծվեցին բանվորներին պարենամթերքով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու գործում:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի արդյունաբերությանը և բանվոր դասակարգին, իրենց առանձնահատկություններով հանդերձ, բնորոշ էին զարգացման այն օրինաչափությունները, որոնք յուրահատուկ էին խորհրդային տնտեսությանն ու բանվոր դասակարգին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5
ԳԼՈՒԽ Ա
Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին
ա) Հանրապետության արդյունաբերության զարգացման հիմնական գծերը 18
բ) Վարչահրամայական նոր մեթոդներն ու դրանց հետևանքները 42
ԳԼՈՒԽ Բ
Հայաստանի արդյունաբերության վերակառուցումը պատերազմի պայմաններին համապատասխան և հետագա զարգացումը
ա) Հանրապետության արդյունաբերության վերակառուցումը 49
բ) Արդյունաբերության հետագա զարգացումը.....71
ԳԼՈՒԽ Գ
Բանվորական կադրերը պատերազմի տարիներին
ա) Բանվորական կադրերի պատրաստումը և նրանց որակավորման բարձրացումը 82
բ) Բանվորական կադրերի համալրման աղբյուրները 92
ԳԼՈՒԽ Դ
Բնակչության մատակարարումը 102
Հետևություններ 114

ԳՈՀԱՐ ԱՂԱԲԵԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945)

Հրատ. խմբագիր՝ Ա.Սահակյան
Համակարգչային ձևավորումը՝ Վ.Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 170:
Հանձնված է արտադրության՝ 15.08.2005թ.:
Չափսը՝ 60 x 84 $^{1}/_{16}$: Թուղթ՝ օֆսեթ N 1:
7.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Գինը պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան 24:

१००११

ԳԱԱ Հիմնարար Գիտ Գրադ.
220090530

A II
90530